





Ֆիրդուս.

*լրենի
հիշողությունը*

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԱԳԻՐ
ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՅԱՆ

ԽՄԱԳՐԻ ՕԳՆԱԿԱՆ
ՍՈՒԱ ՔԱՆԱԹԱՐՅԱՆ

FIRDUS:

*the memory
of a place*

EDITOR-IN-CHIEF
Tigran Amiryan

CONTRIBUTING EDITOR
Sona Kalantaryan

Yerevan
2019



Այս գիրքը ստեղծվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ՝ «Խաղաղարարության ամրապնդում կարողությունների զարգացման և հանրային մասնակցության միջոցով» ծրագրի շրջանակում: Գրքի բովանդակության համար պատասխանատու է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» սոցիալական և մշակութային հասարակական կազմակերպությունը: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող գործընկեր կազմակերպությունների, այդ թվում՝ ԵՀՀ–Հայաստանի, ԵՀՀ–Ադրբեջանի, «Ինթերնեյշնլ ալերթ»–ի և ՀՌԿԿ Վրաստանի տեսակետների հետ:

This book has been produced with the assistance of the European Union within the framework of the “Peacebuilding through Capacity Enhancement and Civic Engagement” (PeaCE) programme. The contents of this book are the sole responsibility of “Cultural and Social Narratives Laboratory” NGO and can in no way be taken to reflect the views of the European Union, or any of the implementers of the PeaCE programme including EPF-Armenia, EPF-Azerbaijan, International Alert and CRRC-Georgia.

ISBN 978-9939-1-0934-3



9 789939 109343

UDC 316.7
ISBN 978 - 9939 - 1 -0934-3
© CSN lab, 2019

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ	10
ՖԻՐԴՈՒՍ. ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ Տիգրան Ամիրյան	15
ՖԻՐԴՈՒՍ. ՇՈՒԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ Համլետ Մելքումյան	89
ՖԻՐԴՈՒՍԻ ՄԱՐԴԻԿ Նաիրա Մուրադյան	118
ՖԻՐԴՈՒՍ. ՕՐԱԳԻՐ	132
ՖԻՐԴՈՒՍԻ ԿԱՆԱՅՔ Սոնա Քալանթարյան	163
ՖԻՐԴՈՒՍԸ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻԵՐԱՐԽԻԱՅՈՒՄ Արսեն Կարապետյան	175
ՖԻՐԴՈՒՍ. ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՁԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐՆԱԿՈՒԼՅԱՐ ԹԱՂԱՄԱՍԸ Անդրեյ Իվանով	189
ACKNOWLEDGMENTS	10
FIRDUS: INNER LIFE Tigran Amiryan	15
FIRDUS: THE MARKET AND URBAN MEMORY OF YEREVAN Hamlet Melkumyan	89
PEOPLE OF FIRDUS Naira Muradyan	118
FIRDUS DIARY	132
WOMEN OF FIRDUS Sona Kalantaryan	163
FIRDUS IN THE HIERARCHY OF THE CITY SPACE Arsen Karapetyan	175
FIRDUS: THE LAST VERNACULAR NEIGHBORHOOD IN THE HISTORICAL CENTER OF YEREVAN Andrey Ivanov	189

ԲԼԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԱԿ УКАЗАТЕЛЬ КВАРТИР

ՖԻՐՄՈՒՄ ԶԵՆԲ / 7 ՄՈՒՏԲ I

№	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՐԿ	ԲԼԱԿ.
1	ԱՎԴԱԼՅԱՆ Գ. Փ.	I	3
2	ԳԼՈՐԳՅԱՆ Է.	I	3
3	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Վ.	I	4
4	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Վ.	I	4
5	ԱՅՎԱԶՅԱՆ Վ. Ա.	II	5
6	ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ Ա. Դ.	II	6
7	ՍԱԼԱԿՅԱՆ Դ. Ռ.	II	6
8	ԱԼԵԽԱՆՅԱՆ Ս. Ս.	III	7
9	ԱԴԱՄՅԱՆ Վ. Ա.	III	8
10			
11			
12			
13			
14			
15			
16			
17			
18			



ՀԱՐԳԵԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ

- 1 ԽՆԱՅՈՂԱՔԱՐ ՕԳՏԱԳՈՐ-
ԾԵՔ ԽՍԵԼՈՒ ԶՈՒՐԸ
- 2 ԾՈՐԱԿՆԵՐՆ ԱՆՆՂԱՏԱԿ
ԲԱՅ ՄԻ ԹՈՂԵՔ ՂՐԱՆՈԿ
ԿԿԱՆԽԵՔ ԶՐԻ ԿՈՐՈՒՍՏԸ
- 3 ՀԵՏԱԵՅԵՔ ԱՆՉԱՓԱՂԱՍ -
ՆԵՐԻՆ ԹՈՒՅԼ ՄԻ ՏԿԵՔ
ՏՐՈՐԵԼՈՒ ԿԱՆԱՉ ՏԱՐԱ-
ԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 4 ԱԿՏԻԿՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՅԵՔ
ԶԵՐ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳ-
ՍԱՆ և ԿԱՆԱՉԱՂԱՏՍԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Այս գրքի ստեղծման գաղափարը ծագել է մի քանի տարի առաջ, երբ Երևանի սրտում՝ Ֆիրդուսի փողոցի երկայնքով, դեռևս ակտիվ առևտուր էր ծավալվում: Ի տարբերություն քաղաքի կենտրոնական այլ մասերի՝ այս թաղամասն ու շուկան, որ տեղացիներն անվանում են Ֆիրդուս, տարբերվում են նրանով, որ այստեղ պահպանվել են ինչպես ճարտարապետության, այնպես էլ կյանքի այն ձևերը, որոնք բնավ հատուկ չեն ոչ խորհրդային խստությամբ՝ դրոշմված կենտրոնական մայրուղիների ուղղաձիգ գծերի մեջ, ոչ հետխորհրդային հավակնություններին, որոնք աճում էին քաղաքի կենտրոնից մինչև ծայրամաս ձգվող հսկա բարձրահարկերի տեսքով: Ֆիրդուսը եղել է և այժմ էլ մի վայր է, որտեղ խտացված են ժողովրդական ճարտարապետության վերաբերյալ պատկերացումներն ու երևանցիների առօրյան: Այս տեղի հիշողությունը հուշում է, որ Երևանում բնակվել են տարբեր մարդիկ, տարբեր՝ իրենց մասնագիտական, կրոնական և էթնիկ պատկանելությամբ: Այս տարբեր մարդկանց մշտապես միավորում էր մի բան՝ նրանց տունը, որը շատ մոտ կամ պատկից էր համանման այլ տների:

Բազմամշակութային տեղի հիշողությունը կենդանի վկայություն է այն մասին, թե ինչպես է տնտեսական ճգնաժամի տարիներին այստեղ հանկարծակի ծագած առևտուրը «խնամել» քաղաքացիներին՝ տալով նրանց ամենամանրամասն և դառնալով հոգատարության տարածք: Այս տեղի հիշողությունը պատմում է, որ տասնամյակներ, գուցե դարեր շարունակ այս վայրում սերտ և խաղաղ հարևանությամբ ապրել են հայեր ու ադրբեջանցիներ, իրանցիներ ու ռուսներ: Տեղի հիշողությունը պահպանում է «ուրիշին» ընդունելու պատմությունը, իսկ ուրիշները տարբեր ժամանակներում տարբեր մարդիկ էին՝ ցեղասպանությունից փրկված հայեր, Թավրիզից կամ Նախիջևանից տեղափոխված ադրբեջանցիներ, 1990-ականների սկզբին շուկայում աշխատելու եկած իրանցիներ, մարզերից Երևան եկած և այստեղ կացարաններ վարձող ուսանողներ, իրենց տունը կորցրած ու ֆիրդուսյան մեծ ընտանիքի անդամ դարձած շուկայի աշխատողներ, հնդիկներ, քրդեր, եզդիներ, հրեաներ. բոլորը գալիս էին այստեղ իրենց մշակույթով, և Ֆիրդուսը բոլորին ընդունում էր իր հողի վրա:

The idea of this book was conceived several years ago, when in the very heart of Yerevan till lively trade went on in the market, which occupied the whole Firdusi Street. Unlike other parts of the city center, the neighborhood and the market, which the locals simply called Firdus, differed in its architectural forms and life forms, typical of neither the Soviet rigor imprinted in the straight lines of central highways, nor the post-Soviet ambitions growing in the form of multi-storey giants from the center to the suburbs of the city. Firdus was and still remains a place where the ideas about folk architecture and everyday life of Yerevan residents are accumulated. The memory of this place indicates that there have always been very different people of professional, religious or ethnic identity among them. But all the differences always merged into one thing, their house, which was very close or even adjacent to the other similar houses.

The memory of a multicultural place is a living witness of how the trade that arose here suddenly was able to protect citizens, give them the most necessary things during the years of the economic blockade and become a territory of care. The memory of this place speaks how Armenians and Azerbaijani Iranians and Russians have lived in this place compactly and peacefully for decades and, perhaps, for centuries. The memory of the place keeps the history of receiving 'others', and at various times 'others' were different people: Armenians who escaped the Genocide, Azerbaijanis resettled from Tabriz and Nakhichevan, Iranians who came in the early 1990s to work in the market, students from Armenia's regions who moved to Yerevan and rented here, market workers who lost their homes and became members of a large Firdusian family, Hindus, Kurds, Yezidis, Jews... everyone who came here with his own culture was received by Firdus on its land.

I thank all the residents of the neighborhood who patiently listened to me, Sona Kalantaryan and our entire team, told about themselves and

Շնորհակալ եմ թաղամասի բոլոր բնակիչներին, որոնք համբերությամբ լսում էին ինձ, Սոնա Քալանթարյանին և մեր խմբին, պատմում էին իրենց և իրենց տան մասին, փոխանցում էին լուսանկարներ, ընկերանում էին, ճաշի հրավիրում կամ պարզապես զանգում՝ տեղեկանալու գրքի ստեղծման ընթացքից: Շնորհակալ եմ բոլոր հեղինակներին՝ այս տարածքի, այստեղ բնակվող մարդկանց կյանքի հանդեպ իրենց անկեղծ հետաքրքրությունը յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր պարբերության մեջ զետեղելու համար: Ծրագրի կայացման անգնահատելի նպաստ են բերել թե՛ հեղինակները, թե՛ փողոցի բնակիչներն ու Ֆիրդուսի առևտրականները, որոնք ցանկացան կիսվել մեզ հետ իրենց փորձառությամբ: Իմ խորին շնորհակալությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ողջ աշխատակազմին՝ սույն ծրագրի կարևորությունը տարածաշրջանում խաղաղության աջակցման և դարաբաղյան հակամարտության հետևանքների վերացման համատեքստում գնահատելու և արտահայտելու համար:

Նախագիծը միաժամանակ և՛ հիշողության պատումայնացման, և՛ դրա տեսողականացման փորձ է. տեսողական բոլոր նյութերի ստեղծման համար շնորհակալ եմ նկարագարող Հարություն Թումադյանին, ձևավորող և լուսանկարիչ Կլիմ Գրեչկային: Արմինե Շահբազյանը, Նազիկ Արմենակյանը և շատ ուրիշներ ոչ միայն մասնագիտական, այլև վիթխարի ընկերական ու բարոյական աջակցություն ցուցաբերեցին գրքի ստեղծման գործում:

Պատմությունը քաղաքներին է թողնում մշակութային հուշարձաններ, պալատներ, կամուրջներ, համալսարաններ ու թանգարաններ: Հիշողությունն ապրում է կյանքի առօրեականության մեջ և չի ենթարկվում պատմության տրամաբանությանը: Ֆիրդուսը վկայում է, որ հիշողությունն ապրում է հուշարձաններից ու թանգարաններից, կոթողային կառույցներից անդին: Հավանաբար գրքի շուրջը խմբվածներիս միավորում է հենց այս միտքը, որն էլ մենք ցանկացանք փոխանցել մյուսներին:

Տիգրան Ամիրյան


their home, shared photos, made friends with us, invited us to dinner and just phoned us to find out how the book was progressing. I thank all the authors who have invested their true interest in this urban space and inhabitants' lives, in every line and every paragraph of this book. Our project has come true thanks to each of the authors and each of the residents and traders of Firdus who were willing to share their experience with us. I sincerely thank the Eurasia Partnership Foundation-Armenia team for understanding the importance of this project in the context of supporting peace in the region and eliminating the consequences of the Karabakh conflict.

This project is both a narrativization of memory and an attempt to visualize it. I thank the illustrator Harutyun Tumaghyan and the designer and photographer Klim Grechka for the tremendous help in creating all the visual material. Armine Shahbazyan, Nazik Armenakyan and many others provided not only professional, but also great friendly and moral support in the process of creating the book.

The history leaves cultural monuments, palaces, bridges, universities and museums for the cities. But memory lives in everyday life and does not obey the logic of history. Firdus is one of the witnesses to the fact that memory lives outside monuments, museums and monumental buildings. Perhaps everyone who gathered around this book was united by this idea, which we wanted to share with you.

Tigran Amiryan







ՖԻՐԴՈՒՍ. ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ
Տիգրան Ամիրյան

La ville parle à ses habitants, nous parlons notre ville, la ville où nous nous trouvons, simplement en l'habitant, en la parcourant, en la regardant.
Roland Barthes¹

Երևանի կենտրոնում ընկած են բանուկ փողոցները: Նրանք երկար շարքերով ձգվում են կողք կողքի: Նրանք երկար շարքերի մի ուրիշ խմբով կտրատում են նախկիններին: Այդ բանուկ փողոցներից ամենավերջինը գտնվում է քաղաքի կենտրոնի և քաղաքի արևելյան մասի սահմանում և երկար երիզով անջատում է նրանց: Մի կողմում ընկած են ավելի մեծ փողոցները, կինոները, թատրոնները, ակումբները, հիմնարկները, մեծ և մի քանի հարկանի տները, իսկ մյուս կողմում համատարած գորշությունն է և ցեխով ծեփված պատերի խառնիխուռը պանորաման: Մկրտիչ Արմեն

...Խավարը չի ցրվում, այլ ավելի է թանձրանում այն մտքից, թե ինչքան քիչ կարող ենք պահել մեր հիշողության մեջ, ինչպես է ամեն ինչ շարունակ անցնում մոռացության գիրկը յուրաքանչյուր մարած կյանքի հետ, ինչպես է աշխարհն, այսպես ասած, ցամաքեցնում իրեն, քանի որ անհաշիվ վայրերի ու առարկաների պատմությունը ինքնին հիշողության ուժ չունեցող, երբեք չի լսվի, նկարագրվի կամ փոխանցվի:
Վ. Գ. Ջեքալդ

FIRDUS: INNER LIFE
Tigran Amiryanyan


La ville parle à ses habitants, nous parlons notre ville, la ville où nous nous trouvons, simplement en l'habitant, en la parcourant, en la regardant.
Roland Barthes¹


Vibrant streets spread across downtown Yerevan, stretching in long parallel rows interrupted by another ensemble of long rows. The last one of these vibrant streets draws the border with a long commanding tape between central Yerevan and its eastern outskirts. Left to one side of this tape are wider streets, cinemas, theatres, clubs, office buildings, grand and multi-storey houses separated from the other side with its ubiquitous grayness and a jumbled panorama of cobbled walls.
Mkrtich Armen

... The darkness isn't dispelled but becomes yet heavier as I think how little we can hold in mind, how everything is constantly lapsing into oblivion with every extinguished life, how the world is, as it were, self-emptying, as the history of countless places and objects which themselves have no power of memory is never heard, never described or passed on.
W. G. Sebald

¹ «Քաղաքը խոսում է իր բնակիչների հետ, մենք խոսում ենք մեր քաղաքը, քաղաքը, որում գտնվում ենք, պարզապես բնակվելով, անցնելով, նայելով» (Barthes R., *Sémiologie et urbanisme*):

¹ "The city speaks to its inhabitants; we speak our city, the city where we are, simply by living in it, by wandering through it, by looking at it" Roland Barthes, *Sémiologie et Urbanisme*.









Ֆիրդուսի փողոցը Երևանի հենց կենտրոնում է: Այն սկսվում է Տիգրան Մեծի² պողոտայի կենտ կողմի առաջին տներից և ծուռ գծով շարունակվում մինչև Չայկովսկու փողոց³: Փողոցն ընդամենը 280 մետր երկարություն ունի, որտեղ կա շուրջ 80 տուն⁴: Գրեթե մեջտեղում այն նեղ նրբանցքով միանում է Մանակալարժական համալսարանին, որը հասցյան փողոցում է: Փողոցի կենտ կողմի վերջին տները նախկինում Հանրապետության և Բուզանդի փողոցները⁵ միացնող կարճ աղեղանման նրբանցքի հատման անկյունում էին: Շինությունների հիմնական մասը ոչ թե փողոցի առաջամասում էր, այլ խորքում՝ սեփական տների և բակերի խիտ ցանցով, որը տարածվում էր դեպի Հանրապետության և հասցյան փողոցներ: Բոլոր նշանները հուշում են, որ Ֆիրդուսին ոչ թե փողոցի վերածվող տների շարք է, այլ մի ամբողջական թաղամաս, որը բավական մեծ տարածք է զբաղեցնում այսպես կոչված Փոքր կենտրոնի հարավային մասում: Քաղաքը, ինչպես լեզուն⁶, հակադրությունների

Firdusi Street is located in the very center of Yerevan. It starts from the first houses on the odd side of Tigran Mets Ave² and extends to the Tchaikovsky Street³ in a broken line. Its length is only 280 meters, there are about 80 houses⁴. Not far from the middle of the street there is a narrow alley connecting Firdusi with the Armenian State Pedagogical University, located on Khanjyan Street. The last houses on Firdusi on the odd side used to intersect with a short arc-shaped lane connecting Hanrapetutyan and Buzand Streets⁵. Most of the buildings were not on the first line of the street, but in the depth, creating a dense network of private houses and courtyards expanding towards Hanrapetutyun Street and Khanjyan Street. All indications point that Firdusi is not only a line of houses that transforms into a street but a whole block, a neighbourhood that occupies rather large area in the southern part of the so-called Small Center.

The city, like language⁶, is a system of oppositions: a number of antitheses arise from the

² Փողոցի մուտքային հատվածը շատ նեղ է և երկու կողմերից սեղմված Տիգրան Մեծի պողոտայի շինություններով, որոնք երեսպատված են սև տուֆով: Մեջտեղի հատվածում փողոցը լայնանում է: Վաղուց արդեն չկան լապտերայուկներ, բայց բնակիչները հիշում են, որ մինչև 90-ականները փողոցը շատ ավելի լայն էր և լավ լուսավորվում էր: Շուկայի համար կառուցված կցակառույցներն աստիճանաբար նեղացրին անցումային հատվածը, և փողոցը դարձավ բացառապես հետիոտնային: Միայն գիշերային ժամերին, երբ շուկան փակ էր, որոշ մեքենաներ կարող էին մոտենալ տներին:

³ Այս անվանումը փողոցը ստացել է 1940 թվականին, երբ նշվում էր կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկու ծննդյան 100-ամյակը: Մինչ այդ փողոցը կրում էր «Նոր ազատություն» անվանումը: Այստեղ՝ հանջյան փողոցի հետ հատման անկյունում, Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցն է: Ֆիրդուսի ակտիվ տարիներին հևարավոր էր շուկայական խառնաշփոթից հետո հայտնվել երաժշտական դպրոցի մոտ, որի բոլոր պատուհաններից հնչում էին ժողովրդական գործիքների, թավջութակի ու կիթառի ձայներ:

⁴ Պաշտոնապես № 80 տունը համարվում է վերջինը, սակայն վերջին տարիներին բազմաթիվ տներ են քանդվել հիմքից, կամ կառուցապատողները գնել են դրանք, մի քանիսն ավերված ու լքված են: Ուստի բնակելի տների իրական թիվը շատ ավելի փոքր է:

⁵ 2018 թվականի դրությամբ այս խաչմերուկում երկրորդ ու երրորդ գծերի տներն արդեն քանդված էին, և դրանց տեղում բազմահարկ շինության համար փորված հիմնափոս էր: Բայց շինարարությունը չսկսվեց, խոր փոսը մնաց, և որոշ տների պատերը հենց փոսի եզրին են:

² The entrance of the street is very narrow betwixt two buildings along Tigran Metz which are covered with carved black tuff. Further the street extends in the middle. There are no lampposts in the street for more than ten years, but the residents say that the street was much wider and well lit before the 1990s. Then the market extensions gradually narrowed the roadway, and the street became almost exclusively pedestrian. Only at night, when the market is closed, some cars could drive up to the houses.

³ The street was renamed in 1940, on the occasion of 100th anniversary of composer Pyotr Ilyich Tchaikovsky. Prior to that, the street had a different name, Nor Azatutyan. At the intersection with Khanjyan Street, the Musical school after Alexander Spendiaryan is located. In the years of active trade in Firdusi Street, it was possible to walk from the marketplace turmoil to the building of the music school and suddenly hear sounds of national instruments, cellos, guitars, etc.

⁴ The house number 80 is officially the last one in the street, but in recent years many houses were demolished or bought by developers, partially destroyed and abandoned, so the actual number of the houses is much less.

⁵ By 2018, the houses located on the second and third lines at this intersection were already demolished, and a foundation pit was dug in their place for a new high-rise building. But construction did not begin and the pit looks abandoned, while the walls of some houses continue to exist literally over a cliff.

⁶ See Barthes, Roland. « Sémologie et urbanisme », Œuvres complètes, t. II (1966-1973). Paris : Seuil, p. 261-271.

համակարգ է, և Ֆիրդուսի կարճ նկարագրությանը հետևում է հակաթեզերի մի ամբողջ շարք՝ ուժգնացող ու թուլացող՝ ըստ քաղաքական կամ մշակութային շրջադարձերի, որոնցով անցնում են հասարակությունն ու պետությունը: Ֆիրդուսին քաղաքի հնագույն փողոցներից է⁷ և իր արժանի տեղն է զբաղեցնում մայրաքաղաքի քաղաքային տարածության այլ միավորների շարքում: Ֆիրդուսին քաղաքի նկարագրի ամենափոքր միավորն է:

Գրեթե բոլոր երևանցիները գիտեն, որ Ֆիրդուսին փողոց է, որը ցանկանում են քանդել. առևտրականների փողոց, փողոց-շուկա, փողոց-հետնախորշ: Մի ժամանակահատվածում, որը ներառում է դարաբաղյան հակամարտությունը, անկախության ձեռքբերումն ու ներկան, բոլոր իմաստային հակադրություններին հավելվում է ևս մեկը՝ հաճախ անտեսվող կամ խեղաթյուրվող քաղաքական լեզվի կողմից, բայց կայուն տեղ ունեցող տեղացի բնակիչների հիշողության մեջ. «Ֆիրդուսում ապրում էին բազմաթիվ աղբբեշանցիներ»⁸: Ֆիրդուսին մահմեդական և քրիստոնյա

complètes, t. II (1966-1973), Paris: Seuil, p. 261-271:

⁷ Ըստ որոշ բնակիչների՝ փողոցը շուրջ 300 տարեկան է: Փողոցի գիծը տեսանելի է 20-րդ դարասկզբի քարտեզների վրա: Ավելի վաղ շրջանի քարտեզների վրա Ֆիրդուսը որպես առանձին փողոց չի հանդիպում: Բնակիչները բացատրում են փողոցի երկարակեցությունը նրանով, որ ի տարբերություն այլ ժողովրդական բնակատեղի համալիրների՝ Ֆիրդուսը կանաչ գոտու մեջ էր. ծառերն ու բուսականությունը գրեթե ծածկում էին փոքր քարե ու հողե տները, և թե՛ նախախորհրդային, թե՛ վաղխորհրդային շրջանների իշխանությունը անտարբեր էր մայրաքաղաքի այս հատվածի հանդեպ: Հավանական է, որ փողոցի պահպանմանը նպաստել է նաև երևանի համար անսովոր հարթ ռելիեֆը: Կոնդի և Սարի թաղի նման մյուս վերնակույքային թաղամասերը բարձունքի վրա են և հստակ երևում են թաղաքի տարբեր կետերից: Երևանի բնակիչներից շատերը հիշում են ժամանակակից Հյուսիսային պողոտայի տեղում գտնվող սեփական տների խիտ ցանցը, որը տարածվում էր Աբովյան փողոցից մինչև Ազատության հրապարակ: Սակայն թաղաքի հարավում ամեն ինչ մշտապես կապվել է շուկայական շրջանառության և հասարակ մարդկանց կյանքի հետ և չի ունեցել մշակութային հուշարձաններ, թանգարաններ և համալսարաններ, ուստի թաղաքի հարավն ավելի քիչ է ենթարկվել վերակառուցման վտանգին:

⁸ Անտոլոգիկ մեջբերումների դեպքում ես կիրառում եմ «աղբբեշանցիներ»-ը, թեև հարկ է նշել, որ հարցազույցների ժամանակ բոլոր բնակիչներն ավելի հաճախ օգտագործում էին «թուրք» բառը: Ավելի նուրբ հարցերի դեպքում նրանք պատասխանում էին. «Այո, նրանք աղբբեշանցիներ էին, բայց այդ ժամանակ իրենք իրենց թուրք էին անվանում»:

brief description of Firdusi, amplified or erased depending on political or cultural changes that the society and the state experience. Firdusi is one of the oldest streets of the city⁷, and it occupies a well-deserved place among other elements of the capital's urban space. Firdusi is the smallest unit of the city description.

Almost all the residents of Yerevan know that Firdusi is a street at risk of demolition, a street of merchants, a street market, a slum-street. Speaking about a historical period which includes the outbreak of the Karabakh conflict, acquisition of independence and nowadays, we can add another semantic opposition to all the oppositions, very often escaping the political language, or falsified by it, but stable in the memory of the local residents: “Many Azerbaijanis lived in Firdusi”⁸. Firdusi was one of the places of compact cohabitation of the Muslim and Christian communities. I will touch upon all these concepts in more detail later.

You can read Yerevan by looking at the map, walking around the city or taking the bus No. 44 from the Third Section to the Firdus Market stop. These are two completely different ways of interpretation, two optics. The first is from above; peering into the city center general construction. The second is walking through it, experiencing this fragment of the city physically and empirically,

⁷ According to some residents, this street is almost 300 years old. The street line is visible on the maps of the early 20th century but is not marked on earlier maps. The inhabitants of the street explain the longevity of the street by the fact that, unlike other popular housing ensembles, Firdus was in a green zone. Trees and vegetation almost covered small stone and earthen houses, therefore city authorities were always indifferent to this part of the capital in both the pre-Soviet and early Soviet times. Probably, the relief of the region, unusually flat for Yerevan, also played its part in its salvation. Other vernacular areas in Yerevan, such as Kond or Sari Tag, are located on a hill and are clearly visible from different parts of the city. Many residents of Yerevan remember the dense network of private houses in the area of Northern Avenue, stretching from Abovyan Street to the Freedom Square. However, everything that is in the southern part of the city has always been associated with markets and ordinary life having no cultural monuments, museums, universities, etc. Therefore, the south of the city was less at risk of reconstruction.

⁸ In those cases, where I do not give a direct quote, I will write the word «Azerbaijanis», although, with some exceptions, the inhabitants used the word «Turks». Explaining, they sometimes responded as follows: “Yes, they were Azerbaijanis, but then they called themselves Turks”.

համայնքների խիտ բնակեցված վայր էր: Բոլոր այս հասկացություններին կանոնադառնում շուտով:

Երևանը կարելի է կարդալ քարտեզով, քաղաքում զբոսնելով կամ 44 համարի ավտոբուսով շրջելով 3-րդ մասից մինչև «Ֆիրդուսի շուկա»: Դրանք մեկնաբանության իրարից կատարելապես տարբեր միջոցներ են, տարբեր տեսագիտություններ: Առաջինը դիտում է քաղաքի կենտրոնի ընդհանուր կառուցվածքը վերևից, երկրորդը՝ անցնելով դրա միջով, ապրելով քաղաքի այդ հատվածը մարմնապես, փորձառելով, զգալով փողոցի ու տարածության ֆիզիկական դիմադրությունը, մարդկանց հայացքները, լուծությունն ու դեպի փողոց թեքված, մետաղական բազրիքներով ու քամուց ծածանվող լվացքի գույներով ներկված տների ֆասադների զգոնությունը⁹, այլ կերպ ասած՝ շարժվելով տարածականությունից դեպի տեղ, ոչինչ չնշանակող թվերից ու հասցեներից դեպի դրանցում ապրող սովորական մարդկանց պատմություններ:

Առաջին միջոցը կթողի միայն աղոտ զգացողություններ՝ կապված հետխորհրդային քաղաքում որոշակի արևելյան, իրանական ներկայության հետ, հիշողության մեջ կարթնացնել իրանցի պոետի անունը՝ հետխորհրդային տարածքում հայտնի, բայց արդեն մոռացված, տվյալներ կհաղորդի կենտրոնում բնակելի ֆոնդի ծանրաբեռնվածության, մարդկանց թվի, տարածքի չափերի վերաբերյալ. վիճակագրական սակավ տվյալներ, որոնք հազիվ թե թույլ տան պատկերացում կազմել փողոցի կյանքի մասին:

Երկրորդ միջոցը փորձառություն է: Այն հաշվարկված է դիմացկուն ոտքերի, զգայուն մատների և սուր աչքի համար, որոնց օգնությամբ տեղացի կամ դրսեկ ճանապարհորդը, որն ունակ է, անցնելով այս ոչ մեծ, բայց հագեցած տարածությունը, դիպչելով հին ու նոր քարե շինություններին, զննելով ճարտարապետական կանոնի կտրուկ

and feeling the physical resistance of the street and space, the views of people, silence and alertness of the facades turned to the street, decorated with iron railings and colored with wind-drying laundry⁹. In other words, to move from the space to the place, from meaningless numbers and addresses to the stories of ordinary people living at these addresses.

The first way will leave only vague feelings associated with the presence of something Eastern or Iranian in the post-Soviet city. It will bring to mind the name of the Iranian poet, well known in the post-Soviet space, but already forgotten, will provide data on the density of housing in the city center, the number of inhabitants, and the development areas. In short, it will provide scarce statistics unable to give the picture of the street life.

The second method is related to experience. It is designed for hardy legs, sensitive fingers and sharpness of the traveler's eyes, be she or he a local or a tourist. Passing through a small but saturated space and touching the old and the new stone buildings, one can peer at the folklore housing and see the sharp differences in the architectural canon defined by the Square and the central streets, in short, between the state rhetoric and social contract, desired imagination of the state and the reality of everyday life, between the old and the new, etc.

Today, the post-Soviet cities are increasingly faced with the need to rethink their own past, to find a language of self-description for the further production of new meanings and new types of interpretation and perception of space. It is under these conditions of rapidly changing attitudes (mental, social, political, ethnocultural) towards city spaces the architecture of the recent past becomes a subject of re-interpretation in pop culture, and new commercial projects

⁹ Այսպես, դե Սերտոն առանձնացնում է «աշտարակից հայացքը», «թռչնի թռիչքի բարձրությունից հայացքը»՝ որպես քաղաքի ընթերցման իշխանական ունակություն, «իշխանության աչքի» մարմնացում, որից շատ խիստ տարբերվում է քայլի հեռտորությունը: Այն ստեղծում է «ամօրեականի ուրիշություն», երբ «քաղաքային տեքստի» ընթերցման անհնարինությունը փոխհատուցվում է նրանով, որ անցորդի, քայլողի ամեն մարմին «գրանցվան սկզբնատարր է»: St' u de Certo M., Изобретение повседневности. Искусство делать, пер. с фр. Д. Калугина, Н. Мовиной, СПб., «Издательство Европейского университета», 2013, էջեր 186-188:

⁹ De Certeau marks that the «view from a tower» or «a bird's-eye view» is an imperious ability to read the city as an embodied «eye of power». The rhetoric of walking sharply differs from it as it creates the «otherness of everyday life» when the impossibility of reading the «urban text» is compensated by the fact that all moving bodies of the pedestrians «are elements of the record». See de Serto M. Proizvodstvo povsednennosti. 1 Iskustvo delat'. Per. S fr. D. Kalugina, N. Movinoj. – SPb.: Izdatel'stvo Evropejskogo universiteta», 2013, s. 186-188.

տարբերությունները՝ Հանրապետության հրապարակի, կենտրոնական փողոցների և Ֆիրդուսի ժողովրդական հագեցած կենցաղի միջև, տեսնել կարող եմ տարբերությունը պետական հոետորաբանության և սոցիալական պայմանագրի, պետության ցանկալի երևակայության և առօրյա կյանքի իրականության, հնի ու նորի միջև...

Հետխորհրդային քաղաքներն այսօր ավելի ու ավելի հաճախ են բախվում սեփական անցյալի վերաիմաստավորման անհրաժեշտությանը, ինքնանկարագրման, նոր իմաստների և մեկնաբանության նոր տեսակների հետագա արտադրության համար լեզվի փոփոխություն: Մեփական մտավոր, սոցիալական, քաղաքական, էթնոմշակութային տարածքների հանդեպ արագ փոփոխվող վերաբերմունքի պայմաններում նախկին սոցիալիստական ճամբարի քաղաքների ոչ վաղ անցյալի ճարտարապետությունը դառնում է փոփ մշակույթի վերամեկնաբանության թեմա, իսկ ժամանակակից առևտրային նախագծերը՝ վիթխարի հյուրանոցային համալիրները, հիպերմարկետները և բիզնես կենտրոնները, ակտիվորեն զբաղեցնում են յուրացված կամ մասամբ յուրացված քաղաքային լանդշաֆտները՝ չերկնչելով ոչ որպես մշակութային հուշարձաններ ճանաչված ճարտարապետական ֆոնդի,¹⁰ ոչ էլ 19-րդ դարակեսից¹¹ պահպանվող վերնակույր բնակելի ֆոնդի առջև:

Խորհրդայինը կամ հետխորհրդայինը հաճախ ընկալվում է որպես պատմական չափում, որի տասնամյակներն արդեն անցյալում են: Մակայն տարածությունների և տարածքների բաշխման ու տարբերակման նոր եղանակներն ավելի ու ավելի հաճախ հակամարտություն են առաջացնում սոցիալական կամ էթնիկական

(giant hotel complexes, hypermarkets, business centers) actively occupy undeveloped or not fully developed urban landscapes, neglecting the architectural heritage or the cultural monuments¹⁰ as well as the vernacular housing which is preserved since the mid-19th century¹¹.

Soviet or post-Soviet is often perceived as a historical dimension, whose decades have been lived more or less successfully. However, new ways of distributing and differentiating territories and spaces more and more often lead to conflicts between social or ethnic groups that again participate in the consequences of transformational projects (urbanization, urban reconstruction, repressions towards the memory of the places, resettlement of peoples, delineation of borders between the republics)¹², enforced once by the Soviet authorities. These problems cannot be solved over the years both at the level of the conflicting states and within the cities, neighborhoods, and villages. In this respect, the South Caucasus is becoming one of the most difficult regions, where the traumas of the past gradually develop into conflicts of the present.

Firdusi Street becomes the place where the morphology of urban space begins to produce an infinite number of oppositions and confrontation of various discourses (ethnic, national, social, cultural, etc.). The street is located a few steps from the entrance to the ministerial building, which is part of the architectural ensemble surrounding the main square of the capital. Firdus is a hundred steps from the Republic Square; it is a place of

¹⁰ Օրինակ կարող է լինել այսպես կոչված խորհրդային մոդեռնիզմի ոճի հրաշքերից մեկի՝ «Ռոսիա» կինոթատրոնի ճակատագիրը: Կինոթատրոնը Ֆիրդուսի մերձակայքում է՝ Տիգրան Մեծի և Ագաթանգեղոսի հատման կետում: Կինոթատրոնից շուկայի վերածված կառույցն աստիճանաբար շրջապատվեց կցակառույցներով և ի վերջո դարձավ առևտրային կենտրոնի մեծ նախագծի մի մաս՝ կորցնելով նախնական տեսքը, իսկ մինչ այդ՝ հանրային տարածության և մշակութային կենտրոնի գործառնությունը:

¹¹ Կառուցապատման նոր նախագծերը գրեթե ամբողջությամբ ոչնչացրին Արամի փողոցի (Նախկինում՝ Սվերդլով) մասնավոր հատվածը, որը հարուստ էր 19-րդ դարի երևանյան ճարտարապետության նմուշներով՝ մեկհարկանի կամ երկհարկանի վերնակույր կառույցներով:

¹⁰ An example is the "Rossia" cinema, one of the wonders of the so-called Soviet Modernism style. It is located near the beginning of Firdusi Street, at the intersection of Tigran Mets Ave and Agatangeghos Street. Having transformed from a cinema into a market, the building gradually overgrew with extensions and eventually became a part of a large shopping center. The original appearance of the architectural monument faded as it ceased to function as a public space and cultural center.

¹¹ New development projects almost completely destroyed the private sector in Arami Street (formerly Sverdlov), which has preserved one-storey or two-storey vernacular buildings, samples of 19th-century Yerevan architecture.

¹² See paper on the national and nationalistic development of the urban environment in the Transcaucasian Republics, Romyanczev S. Sovetskaya natsional'naya politika v Zakavkaz'e: konstruirovaniye natsional'ny'kh granicz, istorij i kul'tur. – Neprikosnovenny'j zapas, #4 (78) – 2011, pages 28-36.

խմբերի միջև, որոնք վերստին ներքաշված են խորհրդային իշխանության փոխակերպական երբեմնի նախագծերի (ուրբանացում, քաղաքների վերակառուցում, բռնաճնշումներ տեղի հիշողության հանդեպ, ժողովուրդների վերաբնակեցում, սահմանների նշում հանրապետությունների միջև)¹² հետևանքներում: Այս խնդիրները տարիներով մնում են չլուծված ինչպես հակամարտող պետությունների մակարդակում, այնպես էլ քաղաքների, թաղամասերի, բնակավայրերի ներսում: Հարավային Կովկասն այս իմաստով ամենաբարդ շրջաններից մեկն է, որտեղ անցյալի ցնցումները դանդաղորեն վերաճում են ներկայի հակամարտության:

Ֆիրդուսի դառնում է այն վայրը, որտեղ քաղաքային տարածության մարդակազմությունը սկսում է արտադրել անհաշիվ ընդդիմություններ՝ միմյանց հակադրելով տարբեր խտություններ (էթնիկական, ազգային, սոցիալական, մշակութային և այլն): Փողոցն ընդամենը մոտ 100 քայլ է հեռու նախարարական կառույցից, որը Հանրապետության հրապարակի շրջակա ճարտարապետական համալիրի մաս է: Մայրաքաղաքի գլխավոր հրապարակից 100 քայլ այն կողմ է Ֆիրդուսը՝ քառասյին, հաճախ ոչ օրինական առևտրավայրը, որը 1990-ականներից դարձավ քաղաքային շուկայի, ներգաղթյալների ու հին սեփական տների հավաքակենտրոն:

Երևանի ճարտարապետության և քաղաքաշինության մասին գրականության մեջ մանրամասն տրված են քաղաքի քարտեզային ցանցի ծրագրման պայմանները: 21-րդ դարասկզբում հենց այդ փոփոխված ու տարբեր փոխակերպումների ենթարկված ցանցն են ժառանգել մայրաքաղաքի բնակիչները:

Նախորդ դարի 20-ականներին ճարտարապետները հանձն էին առել կառուցել ժամանակակից քաղաք, որն ակտիվորեն կներգրավեր խորհրդային հանրապետությունների տնտեսական ու քաղաքական զարգացման ընթացքին¹³: Երևանի քաղաքաշինական

old private houses, chaotic and often illegal trade, where migrants gather. It turned into a city market in the 1990s.

Books and archives on the architecture and urban planning practices of Yerevan describe in detail the conditions in which the network of the city map was planned. Exactly that modified and subjected to various transformations network was inherited by the residents of the capital at the beginning of the 20th century.

In the 20s of the last century, architects were tasked with planning a modern city that could actively fit into the economic and political course of the Soviet Republics' development¹³. The idea of the central square as an intersection of key arteries of urban traffic, is becoming one of the most important town-planning innovations in Yerevan. The square is constructed to symbolize the political positions of the country, and for many decades it remains a kind of statement, a replica in the direction of the city past, a language of the futuristic present¹⁴.

¹³ Describing the features of the emerging architectural and town-planning conceptions of the 1920s, L.K. Dolukhanyan quotes manifestos and letters of the members of the OPRA (Organization of Proletarian Architects of Armenia), K.S. Halabyan and M.D. Mazmanyan. The statements of almost all the engineers and architects of that time are reduced to the idea of industrializing urban architecture and adapting it to new technical capabilities and tools (the appearance of cars becomes one of the main factors). Dolukhanyan L.K. *Arkhitektura Sovetskoy Armenii: 20-e gody*. Nauch. Red. A.G. Grigoryan. – Erevan. Sov. grokh, 1980, p. 15. In general, all statements are reduced to the fact that the existing urban environment and architecture do not correspond to the modern life of society and require radical changes. It is curious that the rhetoric of such a striving for a radical reconstruction of Yerevan for the benefit of the development of the society sometimes rhymes with the statements of the city authorities in the beginning of the 21st century, although the real needs of the city and the concentration of architectural thought of the two centuries are not comparable. See, for example, the document "Yerevani zargatsman 2018-2022. hngamya tsragir" which is signed by the former mayor of the city. It declares the plan for dismantling Firdusi Street and building a new district in its place. "The construction of a new neighborhood in the place of the Firdus Market in Kentron administrative district is aimed at improving the area and its green zone, and effective implementation of the plan of Yerevan development in 2018-2022., taking into account the current needs and demands of the citizens."

¹⁴ When planning the central part of Yerevan, one of the serious tasks

¹² Հարավկովկասյան հանրապետություններում քաղաքային միջավայրի ազգային եւ ազգայնական զարգացման մասին տե՛ս Румянцев С., Советская национальная политика в Закавказье: конструирование национальных границ, историй и культур, «Неприкосновенный запас», №4 (78), 2011, сс. 28-36.

¹³ Այսպես, նկարագրելով 1920-ականների ճարտարապետական և քաղաքաշինական մտքի ձևավորման առանձնահատկությունները՝

ամենակարևոր նորարարություններից մեկը կենտրոնական հրապարակի գաղափարն էր. այնտեղ պետք է հատվեին քաղաքային երթևեկության հիմնական ճանապարհները: Հրապարակը կառուցվում է, որպեսզի կրի և խորհրդանշի երկրի քաղաքական դիրքը, և հետագա տասնամյակների ընթացքում այն շարունակում է լինել յուրատեսակ ուղերձ, ակնարկ ուղղված դեպի անցյալ, ներկայի լեզու՝ ձգտող դեպի ապագան¹⁴:

Ֆիրդուսն իր մի քանի տասնյակ փոքր սեփական տներով ու կից հողամասերով գտնվում է հրապարակի մերձակայքում, և ասես անցյալից մնացած բեկոր լինի, արտեֆակտ, որ հիշեցնում է նախախորհրդային չքավոր, ռացիոնալացման չննթարկվող տարածություն

Լ.Կ. Դոլուխանյանը մեջբերում է Զայաստանի պրոլետարական ճարտարապետների միության անդամների՝ Կարո Զալաբյանի և Միքայել Մազմանյանի նամակները, մանիֆեստները: Այդ շրջանում գրեթե բոլոր ինժեներների և ճարտարապետների մտքերը հանգում են քաղաքային ճարտարապետության արդյունաբերականացման գաղափարին և դրա հարմարեցմանը՝ Նոր տեխնիկական հնարավորություններին ու միջոցներին (մեքենաների ի հայտ գալը դառնում է գլխավոր գործոններից մեկը), *Долуханян Л.К., Архитектура Советской Армении: 20-е годы, науч. ред. А.Г. Григорян, Ереван, «Сов. прох», 1980, с. 15*: Ընդհանուր առմամբ, բոլոր մտքերը հանգում են նրան, որ գոյություն ունեցող ուրբան միջավայրն ու ճարտարապետությունը չեն համապատասխանում հանրության ժամանակակից կյանքին և արմատական փոփոխությունների կարիք ունեն: Ջետաբեքիր Է, որ Երևանի այս արմատական վերակառուցման իռետորությունը՝ հանուն հասարակության զարգացման, երբեմն հիշեցնում է 21-րդ դարակազմի քաղաքային իշխանության հայտարարությունները, թեև երկու դարերի սահմանազիսին քաղաքի իրական կարիքներն ու ճարտարապետական մտքի կենտրոնացումն անհամեմատելի են: Տե՛ս, օրինակ, Ֆիրդուսի փողոցի ապամոնտաժման փաստաթուղթը «Երևանի զարգացման 2018-2022 թթ. հնգամյա ծրագրում»՝ ստորագրված քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից. «Կենտրոն վարչական շրջանում գտնվող «Ֆիրդուսի» տոնավաճառի տարածքում նախատեսվող Նոր թաղամասի կառուցման նպատակն է տարածքի բարեկարգումը, կանաչապատումը, առավել Երևանի զարգացման 2018-2022 թթ. հնգամյա ծրագրի նախագծի արդյունավետ պլանավորումը և օգտագործումը՝ հաշվի առնելով քաղաքացիների մեծությամբ պահանջները և կարիքները»:

¹⁴ Երևանի կենտրոնական հատվածի ծրագրման ամենալուրջ խնդիրներից էին բնակիչների վերաբնակեցումը և քաղաքի կառուցումը՝ որտեղ պետք է ապրի բնակչությունը, որը մի քանի անգամ գերազանցում է գոյություն ունեցող թվերը: Իսկ ռճային ու փիլիսոփայական լուծումներից մեկը «մեծածավալ ու կոթողային կենտրոնի» ստեղծման փորձն էր: Տե՛ս Դոլուխանյան Լ.Կ., *Архитектура Советской Армении...* էջ 29:



Firdus with several dozens of small private houses and garden plots is in close proximity to the square and, as a fragment of the past, as an artifact, it reminds a still pre-Soviet place, a poor, not amenable to rationalization area, thus falls into the zone of the primary risk¹⁵. The idea of centering radically rethinks and reinterprets not only the philosophy of the urban network, but also the daily and social life of the city. Such dramatic changes in the urban landscape must find a

facing city planners was the resettlement of the population, since the real number of people exceeds the official numbers for many times. Moreover, one of the stylistic and philosophical decisions for the city was an attempt to create a "monumental center". See Dolukhanyan L.K. *Arkhitektura Sovetskoy Armenii...* p. 29.

¹⁵ Hierarchization of the urban space takes place when the planners determine the southern part of the city as industrial, that is, different from other parts where the universities and cultural institutions are located. Firdus becomes a kind of border, an entrance to this industrial part of the city, which historically was known for social instability and population density.

և անմիջապես հայտնվում է վտանգի գոտում¹⁵: Կենտրոնացման գաղափարն արմատապես վերախմանաւորում և վերափոխում է ոչ միայն քաղաքային ցանցի փիլիսոփայությունը, այլև քաղաքի առօրյան ու սոցիալական կյանքը: Բնականաբար, քաղաքային լանդշաֆտի այդպիսի կտրուկ փոփոխությունները նոր ֆիզիկական ու քաղաքական իրականություն կառուցող մասնագետների առջև դնում են ուրբան ինքնությունների հակամարտող ձևերի միջև փոխզուլումների որոնման հարցը: Հենց այդ ժամանակ է հայտ է գալիս մշակութային հուշարձանների պահպանության խնդիրը¹⁶՝ ճարտարապետների ծանր և հաճախ հանրությանը ոչ այդքան հասկանալի որոշումներով:

Ճարտարապետական ֆոնդի պահպանումից գալով խորհրդային նախագծողները խնդիր ունեին համաձայնեցնելու ներկայացուցչական ճարտարապետության նոր գաղափարը ժողովրդական բնակատեղիի հետ: Իր գործնականությունից բացի՝ նոր ճարտարապետությունը, մասամբ հիմնվելով ժողովրդական ճարտարապետության վրա, դառնում է հստակ որոշված էսթետիկական կանոնների կրող և ներառում է խորհրդային ճարտարապետության միտումների լայն շրջանակ: Ժողովրդական բնակատեղին չի տեղավորվում այդ էսթետիկական ու գործնական կանոններում: Իհն վերաբերում է էսթետիկական պատկերացումներին, դրանք ընդհանրապես և ամբողջությամբ հաշվարկված են՝ բազմապատկելու քաղաքի ներկայացուցչական հնարավորությունները՝ ցուցադրության հանելով դրանք մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով զբոսնող ֆլանյորի ճարտարապետական խոհերին: Բայց նախագծով կառուցված տների ցանկացած գծից այն կողմ ապրում էին հասարակ մարդիկ՝ քաղաքի և տան վերաբերյալ սեփական պատկերացումներով՝ խիստ տարբերվող ուրբանիստական պաշտոնական խոսույթից¹⁷:

¹⁵ Քաղաքային տարածության հիերարխացումը սկսվում է նրանից, որ ծրագրողները սահմանում են քաղաքի հարավը որպես արդյունաբերական, այսինքն՝ համալսարանական, մշակութային հատվածներից տարբերվող: Ֆիլոզոֆ յուրատեսակ սահման և սկիզբ է դառնում քաղաքի արդյունաբերական հատվածի, որը պատմականորեն հայտնի էր իր սոցիալական անապահովությամբ և բնակչության խտությամբ:

¹⁶ Խորհրդային երևանի նախագծի հեղինակ Ա. Թամանյանն այդ ժամանակ մշակութային հուշարձանների կոմիտեի անդամ էր:

¹⁷ Դոլուխանյանը գրում է. «Թամանյանի նախատեսած

compromise between conflicting forms of urban identity, and a challenge for professionals who create a new physical and political reality. Even then, the problem of the preservation of cultural monuments arises¹⁶ and transforms into a long line of heavy solutions proposed by architects, which isn't always clear to the public.

Besides the attempts to preserve the architectural heritage, the Soviet urban planners faced the problem of a reconciliation of the new idea of representational architecture and folk housing. In addition to its functionality, the new architecture becomes the carrier of well-defined aesthetic norms which were partly based on folk architecture with full incorporation of the trends of the emerging Soviet architecture. Folk housing didn't fit into these aesthetic and functionalist norms. As for the aesthetic notions, they are designed, by and large, to increase the representative capabilities of the city, to demonstrate it to the architectural thought of the flâneur who walks through the main streets of the capital. But beyond any line of a designed house, there was the proceeding life of ordinary people who had their own ideas about city and house, and ideas quite different from the official urban discourse¹⁷.

Designing an urban and at the same time social space becomes an attempt to formulate some clear and readable text calculated for quick reading of codes by those who decide to settle here or visit the city. Thus, the supposed compromise between the new official idea of urban planning and neighborhoods such as Firdus is reduced to a discriminatory model: masterfully executed facades of houses along the first line of streets and poor makeshift dwellings within networks¹⁸. Firdus turns out to be covered by this veil of official, valuable, cultural and historically

¹⁶ Alexander Tamanyan, who designed Soviet Yerevan, was then a member of the commission for the protection of cultural monuments.

¹⁷ Dolukhanyan writes: "The architectural ensembles provided by Tamanyan created a picturesque panorama of the city." Even then, the visual aesthetics is set; accordingly, everything that is not included in this representative picture of the ideal Soviet capital is delimited. See Dolukhanyan L.K. Arkhitektura Sovetskoy Armenii... p. 26.

¹⁸ See the article of A. Karapetyan in this edition.

Քաղաքային և միաժամանակ սոցիալական տարածության նախագծումը դառնում է որոշակիորեն հասկանալի և ընթերցելի տեքստի ձևակերպում, այն միտումով, որ նրանք, ովքեր որոշել են այցելել կամ բնակվել այստեղ, արագ կընթերցեն կողերը: Այսպես, նոր պաշտոնական քաղաքաշինական մտքի և ֆիրդուսի նման թաղամասերի միջև համաձայնությունը հանգում է խտրական լուծման՝ տների վարպետներն արված ճակատամասեր փողոցի առաջին գծով և աղքատ ինքնաշեն տներ ցանցի ներսում¹⁸: Ֆիրդուսը ծածկվում է պաշտոնականի, արժեքավորի, մշակութայինի և պատմականորեն նշանակալի շղարշով: Հիշողությունը և տարածության պատմությունն այստեղ ձևավորվում են այսպիսի կղզիացած իմաստավորմամբ և բացառիկության քաղաքականությամբ¹⁹:

Ֆիրդուսում չկան հուշարձաններ և մշակութային հուշարձան համարվող շինություններ: Ի տարբերություն թաղամասի արտաքին՝ ճակատային հատվածի, այստեղ հիշողությունն այլ կերպ է ձևավորվում: Եթե արտաքին կողմից յուրաքանչյուր տուն կապված է մեծ կոլեկտիվի՝ քաղաքացիների հանուր հիշողության հետ, ապա ներսում ճարտարապետությունը ձևավորում է տեղի հանրության

ճարտարապետական համալիրները ստեղծում էին քաղաքի գեղատեսիլ համայնապատկեր»: Արդեն այդ շրջանում տրվում է տեսողական էսթետիկան, և հետևաբար սահմանափակվում է այն ամենը, ինչ չի տեղավորվում կատարյալ խորհրդային մայրաքաղաքի ներկայացուցչական պատկերում: Долуханян Л.К., Архитектура Советской Армении... էջ 26:

¹⁸ Տե՛ս Ա. Կարապետյանի հոդվածը սույն գրքում:


¹⁹ Թաղամասի ճակատամասը կազմում են Տիգրան Մեծի պողոտայի երկհարկանի տները (1, 3, 5, 11-15)՝ կառուցված հիմնականում 19-րդ դարավերջին և 20-րդ դարակեսին: Սև տուֆե ճակատների հետևում բազմաբնակարան տներ են՝ փայտե առաստաղներով ու հատակներով, նախշազարդ աստիճաններով ու մասնաներով, ընդհանուր «խտալական» պատշգամբներով: Դրանց հաջորդում է իր ծավալներով շարքում գերակշռող Մանկավարժական համալսարանի շենքը՝ կառուցված 1936 թվականին: Համալսարանի մասնաշենքը շարունակվում է Խանյան փողոցով մինչև Չայկովսկու փողոցի կարմիր տուֆից բնակելի շինությունը, որը նույնպես կառուցվել է 1930-ականներին: Բուզանդի փողոցին զուգահեռ Չայկովսկու փողոցում են գտնվում Սպենդարյանի անվան երաժշտական դպրոցը, կադատորի շենքը՝ կառուցված 1970-1980-ականներին: Կարմիր տուֆից տների շարքը շարունակվում է Հանրապետության փողոցում, որտեղ 19-րդ դարի երկհարկանի շինությունների շարքում լավ պահպանվել են պարսիկ հյուպատոսի Նստավարի ընդհանուր կառուցվածքն ու ճակատային մասը:



significant layers. Memory and the history of the space are imposed here in such island semiosis and exclusivity policy¹⁹.

There are no monuments or buildings related to cultural monuments in Firdusi. Here the memory is formed differently than in the outer, front


¹⁹ Two-storey houses in Tigran Mets (1, 3, 5, 11-15) are built mainly in the late 19th and early 20th centuries and create the front line of the neighborhood. Behind the facades of black tuff houses with wooden ceilings and floors, carved staircases and basements, as well as common 'Italian' balconies are hidden. This line continues to the Pedagogical University, built in 1936. The building of University dominates here with the number of storeys. The university building extends to Khaniyan Street and at the intersection with Tchaikovsky Street meets a residential building of red tuff, which also appeared in the 1930s. On a small cut of Tchaikovsky Street, parallel to Buzand Street, is the A. Spandaryan Music School and the cadaster building, built in the 1970s and the 1980s. The line of houses of red tuff crosses Hanrapetutyan Street, where among several two-storey buildings of the 19th century, the facade and general construction of the residence of the Persian Consul are well preserved.



Ֆիրդուսի փողոցը Երևան քաղաքի 2018 թ. հատակագծի վրա:


Երևանի քաղաքապետարանը եզրագծում է այսպես կոչված 33-րդ թաղամասի կառուցապատման տարածքը, որում ներառված են հիմնականում Ֆիրդուսի փողոցի և Հանրապետության 1-ին նրբանցքի տները: Ողջ տարածքը ճանաչված է որպես «Հանրային գերակա շահ»-ի գոտի:

The municipality of Yerevan outlines the construction site of the so-called 33rd district, which mainly includes houses in Firdusi Street and Hanarpetutyan lane 1. The whole territory is recognized as a "Priority State Interest" zone.




Արդեն «օտարված» տարածքը մաս առ մաս տրվում է առանձին շինարարական կազմակերպությունների:

The "alienated" territory is transferred to developers and construction companies in parts.



Կառույցներ, որոնք ճանաչվում են որպես պատմամշակութային հուշարձաններ և ենթակա չեն ապամոնտաժման:

Buildings that are recognized as historical and cultural monuments and are not subject to dismantling.



երևակայականը, իսկ հիշողությունն արտացոլվում է այլ կարգերում և ծավալներում: Եթե քաղաքի կենտրոնական հատվածը բոլոր քաղաքացիների ու զբոսաշրջիկների հիշողության մեջ է մտնում իր տեսքով, այսինքն՝ հիշվում է տեսագիտորեն, ապա Ֆիրդուսի նման թաղամասերում հիշողությունը կուտակվում է առօրեականության ամենօրյա գործողություններից՝ ոչ միայն դիտելով, այլև կիրառելով ճարտարապետությունն ու բնական լանդշաֆտը, գտնվելով դրանում. կարճ ասած՝ հիշողությունն այստեղ ձևավորվում է շոշափողական ընկալմամբ, ինչը, ըստ Բենյամինի, կապված է ոչ թե գննողի ուշադրության, այլ սովորության հետ²⁰: Ներկայացուցչական ճակատների կառուցման և թաղամասերի ներքին տարածքների անտեսման թամանյանական ռազմավարությունը բաժանում է հինն ու նորը և/կամ ցանկալին ու իրականը, այսինքն՝ բազմապատկում է հակադրությունները: Միաժամանակ կարելի է այդ ռազմավարությունը համագործ համարել չմիջամտելու քաղաքականությանը. քաղաքականություն, որն ամբողջովին արհամարվել է ժամանակակից հետխորհրդային կոնստրուկտորների ու ճարտարապետների կողմից:

ԱՅԼ ԿԵՆՏՐՈՆ

Փողոցի բնակիչներից մեկը պատմում է այստեղ անցկացրած մանկության մասին: Նրա պատմությունը սկսվում է հակադրումից, որն արդիական էր ինչպես խորհրդային Երևանի ժամանակներում, այնպես էլ այսօր՝ ԽՍՀՄ փլուզումից 30 տարի անց. «Պարադների ժամանակ գրուզավիկներով փակում էին փողոցը Տիգրան Մեծի կողմից, որ հանկարծ դուրս չգայինք ու չխանգարեինք պարադին: Մենք փողոցի երեխներով պառկում էինք փողի վրա գետնին ու գրուզավիկի ականների արանքից նայում քայլող զինվորականների կոշիկներին»:

Լենինի հրապարակը նվիրական կենտրոնի իրականություն դարձած ֆանտազիան է, յուրատեսակ ուտոպիա, որը սկիզբ է առնում երկաթուղային կայարան տանող պողոտայից²¹

part of the neighborhood. While from outside each house is connected with the memory of large communities, of all citizens, from the inner part the architecture forms an imaginary local community, where memory is reflected in other categories and scales than in the outer official part. If for all the citizens and tourists the central part of the city is remembered visually, that is, optically, then for the residents of such quarters as Firdus, memory is shaped by daily practices of life, with the opportunity not only to contemplate but use the architecture and the natural landscape, and live in it. In short, memory is formed here through tactile perception, which, according to Benjamin, is connected not with the attention of the observer, but with the habit²⁰. Tamanyan's strategy of building representative facades and ignoring the inner territories of neighborhoods divides the old and the new and / or the desired and the real, that is, it multiplies the number of oppositions. However, this strategy can be equated with a policy of non-intervention which was violated by contemporary post-Soviet designers and architects.

OTHER CENTER

A resident of the street tells about her childhood spent here. Her story begins with an opposition that is relevant both during the times of Soviet Yerevan, and today, 30 years after the collapse of the USSR: “During the military parades they used to bring a truck to close the passage to Tigran Mets so that we could not suddenly get out and intervene in the parade. With the children of our street, we lied down on the ground and watched the parade through the wheels of the truck, able to see only the boots of the marching soldiers.”

Lenin Square becomes a realized fantasy of the sacral center, a kind of utopia, which begins at the avenue leading to the railway station²¹, which is the most important element of the socialist city Places like Firdus turn into a kind of multicultural

²⁰ Stéu Benjamin, Walter, *The work of art in the age of mechanical reproduction*, Penguin UK, 2008:

²¹ Տիգրան Մեծի պողոտան կրում էր «Հոկտեմբերյան պողոտա» անվանումը մինչև խորհրդային Միության փլուզումը, այդ պատճառով Ֆիրդուսի փողոցը ներառող

²⁰ Benjamin, Walter. 'The work of art in the age of mechanical reproduction'. Penguin UK, 2008.

²¹ Tigran Mets Ave bore the name Hoktemberyan until the end of the Soviet era. The administrative district that included Firdusi Street was also called Hoktemberyan.

(երկաթուղին սոցիալիստական քաղաքի ամենակարևոր բաղկացուցիչն է): Իսկ Ֆիրդուսի նման վայրերը փոխակերպվում են յուրատեսակ բազմաձևակության հետերոտոպիայի²², այլ տարածության, եթե համեմատենք գլխավոր քաղաքական ուղերձի՝ կենտրոնի հետ: Գտնվելով կենտրոնում՝ այն մտում է ուրիշ, ոչ կենտրոնական հասկացություն: Պատճառները երկուսն են: Նախ դա կենտրոնի այն եզակի բնակֆոնդերից է, որտեղ վարչական կառույցներն ու հյուրանոցները կարծես վերջնականապես կորզել են տարածքը քաղաքացիներից: Երկրորդ՝ այս փողոցի ճարտարապետությունը լիովին արտացոլում է բնակավայրի կառուցման ժողովրդական պատկերացումները և, բացի դրանից, սովորական մարդկանց տնտեսական իրական դրությունը²³:

հատվածը կոչվում էր Հոկտեմբերյանի շրջան:

²² Այսպես է Ֆուկոն նկարագրում այն, ինչ անվանում է հակա-տեղակայումներ կամ հետերոտոպիաներ. «Կան նաև, և հավանաբար յուրաքանչյուր մշակույթում, յուրաքանչյուր քաղաքակրթության մեջ, իրական վայրեր, էֆեկտիվ վայրեր, վայրեր, որոնք, լինելով մի տեսակ ինքնին հակա-տեղակայումներ, հասարակության հիմարկեթի մեջ իսկ գծագրում են մի տեսակ իրականացված ուտոպիաներ, որոնցում իրական տեղակայումները, մնացած բոլոր իրական տեղակայումները, որոնք կարելի է գտնել որևէ մշակույթի ներսում, վերաներկայացված են, վիճարկված ու շրջված միաժամանակ, մի տեսակի վայրեր, որոնք բոլոր այլ վայրերից դուրս են, թեպետ և դրանք իրականում կարելի է տեղայնացնել» (Foucault Michel, 1994 [1984], «Des espaces autres», dans Dits et écrits: 1954-1988, t. IV (1980-1988), Paris: Éditions Gallimard, coll. «Bibliothèque des sciences humaines», էջեր 752-753, թարգմ.՝ Նազարեթ Կարոյանի): Նարկ է Նշել, որ Ֆուկոյի տիպաբանությունը նաև փորձում է ստեղծել այսպես կոչված հավերժական «այլ տարածություններ», փիլիսոփան մասնավորապես դրանց շարքին է դասում թանգարանները: Եթե Հանրապետության հրապարակի թանգարանը հետերոտոպիայի այդպիսի օրինակ է, ապա այդ արհեստական հավերժանությանը հակադրվում է հավերժ բնական հետերոտոպիան (Երևանի՝ մայրաքաղաք դառնալու ընթացքում Ֆիրդուսը գրեթե միշտ կա): Ընդհակառակը, ավելի ուշ շուկայական «այլություն» առաջարկում է թանգարան-շուկա հակադրությունը որպես հավերժ և շարժական-ժամանակային:

²³ Եթե վերստին նախագծված ու գծագրված գաղափարաբանական տարածությունը նման է որոշակի տեքստի, որի օգնությամբ արտահայտվում է խորհրդային իշխանության գաղափարը, ապա այդ ոճային ու խոսույթային նոր արտահայտումից շատ ավելի վաղ գոյություն ունեցող Ֆիրդուսը կարելի է համեմատել նախալեզվական մոդելի, ազգային կամ բազմամշակութային սոցիալական խոսույթի նախատեքստային հիմքի հետ (Կրիստոա):

heterotopy²² and become completely different spaces in relation to the main political message, to the center. Located in the very center, it remains a non-central concept. There are two reasons for this. First, it is one of the rare residential funds in the center, where administrative buildings and hotels, it would seem, have finally retaken the territory from the citizens. Secondly, the architecture of this street fully reflects people's ideas of house-building. Moreover, it reflects the real economic situation in which ordinary people live²³.

Not only the empty flat space with the statue of Lenin²⁴ towering on it becomes sacred for the Square, but also the large fountain opposite the Museum, enhancing the utopian feeling of the paradise center²⁵. Situated so close to this

²² This is how Foucault describes what he calls counter-sites or heterotopies: "Probably, in every culture, in every civilization, there are real places that do exist and that are formed in the very founding of society – which are something like counter-sites, a kind of effectively enacted utopia in which the real sites, all the other real sites that can be found within the culture, are simultaneously represented, contested and inverted. Places of this kind are outside of all places, even though it may be possible to indicate their location in reality." Foucault, Michel. Of Other Spaces, Diacritics 16 (Spring 1986), p. 24. It should be noted that in the Foucault typology there are also attempts to create so-called eternal "other spaces". In particular, the philosopher attributes museums to this kind of space. If a museum located in the Republic Square is such an attempt at heterotopy, then the natural heterotopy of eternity is the opposite of this idea of artificial eternity. Firdus almost always exists and testifies to the transformation of Yerevan into the capital. On the contrary, the "otherness" of the market later offers the opposition: the museum / market as an eternal and mobile-temporary.

²³ If a planned and redesigned ideological space resembles a certain type of text with which the idea of Soviet power is pronounced, Firdus – long before this stylistically and discursively new statement – can be comparable to a protolinguistic model with a pre-textual basis of national or multicultural social discourse (Kristeva).

²⁴ In the first years of independence, the statue was demolished, and the square received the name "Republic Square". After the Velvet Revolution in the spring of 2018, in some places the form "Revolution Square" was shown, although the official name of the square is not changed.

²⁵ Fountains are common in urban scenes of the Soviet cities, and they acquire additional significance for the southern republics. Here, in addition to the stylistic addition to the complex of the square, the fountain is an element of the heavenly space located in the middle of a hot city. In the Foucaultian interpretation of the principles of heterotopy there is an example of a garden as a prototype of a series of carpets, and a carpet, in its turn, as a plane moving and intersecting the space. Interestingly, in his observations, Foucault notes: "The traditional garden of the Persians was a sacred space that united in its rectangle the representation of the four sides

Հրապարակի համար նվիրական է դառնում ոչ միայն հարթ ու բաց տարածությունը և դրա վրա հասնող Լենինի արձանը²⁴, այլև թանգարանի դիմացի մեծ շատրվանը, որն ուժգնացնում է դրախտային կենտրոնի ուտոպիականության զգացողությունը²⁵: Քաղաքականապես համաձայնեցրած այս կենտրոնի մերձակայքում Ֆիրդուսը համարձակվել էր ունենալ այդ նվիրական իրականության սեփական մանրակերտ պատճեններն ու հակադարձումները: Մինչ օրս, հիշելով նախորդ դարակերտ, բնակիչներն անդադար հիշատակում են աղբյուրները, առվակները, ջրհաններն ու փոքր ավազանները, որոնցից մի քանիսը դեռ պահպանվում են բակերում:

«Հարևաններով շատ էինք օգնում իրար ու շատ համերաշխ էինք ապրում: Հիշում եմ, որ դեռ շատերը ջուր չունեին տանը, գնում էինք բոլորով ընդհանուր փողոցի աղբյուրից ջուր բերելու: Ամառը շատ էինք իրար հետ ժամանակ անցկացնում, երեխաները իրար հետ են մեծացել, բոլորս էլ լիքը ընդհանուր բան ունեինք: Ամառվա շոգին իրիկունը լեժանկաներ էինք հանում բակ ու ծառների տակ քնում» – Ռոմելա Չախոյան (2018):

«Մեր էս փողոցը բոլորով ենք սարքել, ջուր ենք քաշել, ծառներս որ եկան Ֆիրդուս, սկսեցին մեր տնից բացի կողքի բակերն էլ սարքել: Առաջ բարձրահարկեր չկային, տների դեմը մրգատու այգիներ էին, էլ ծառերի տակ ենք մեծացել» – Մելանյա Նազարյան (2018):

²⁴ Անկախության տարիներին արձանը հանվեց, և հրապարակը ստացավ «Հանրապետության հրապարակ» անվանումը: 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո որոշ տեղերում հայտնվեց «Հեղափոխության հրապարակ» անվանումը, սակայն հրապարակը պաշտոնապես չվերանվանվեց:

²⁵ Խորհրդային քաղաքներում տարածված շատրվանները հարանշանակություն են ձեռք բերում հարավային հանրապետություններում: Այստեղ հրապարակի համալիրի ոճական հավելումից բացի շատրվանը դրախտային տարածության տարր է, քանի որ շոգ քաղաքի մեջտեղում է: Հետերոտոպիայի ֆուկյույական մեկնաբանության մեջ օրինակ է բերվում այգին՝ որպես գորգերի շարքի Նախատիպ, իսկ գորգը, իր հերթին, որպես շարժվող հարթություն, որը տարածություններ է կտրում: Բայց հետաքրքիր է, որ իր դիտարկումներում Ֆուկյուն Նշում է. «Պարսիկների ավանդական այգին սրբազան տարածություն էր, որն իր ուղղանկյունի սահմաններում միավորում էր աշխարհի չորս կողմերը՝ ներկայացնող չորս մասերը: Այստեղ կար ևս մեկ տարածություն՝ առավել սրբազան, քան մյուսները, որն իր կենտրոնում ուներ ասես հողի պորտը (շատրվանն ու ջրավազանը)»:

politically adjusted center, Firdus intends to have its own miniature copies, replicas of this sacred reality. Until now, remembering the mid-twentieth century, the residents constantly mention the fountains, the streams, the water towers and small pools that were, and some still exist in their courtyards.

“All neighbors were very helpful to each other, they were very friendly. I remember the time when not everyone had a water supply, and we went to get water from a common outdoor water source. We spent much time together during summertime, our children grew up together, and we had a lot in common. On hot summer evenings, we would carry the stove-benches out and sleep under the trees.” – Romela Chakhoyan (2018)

“We ourselves built this street, and installed water supply. When my parents settled here, they began to refine not only our own courtyard, but also the yards of our neighbors. Then there were no high-rise buildings but garden plots opposite the houses. We grew up under fruit trees.” – Melania Nazaryan (2018)

“There was a nursery next to our house, a beautiful constructivism style building. The best nursery in the city, with a big yard and pool. Pavlos from Puppet theater used to come here, me and other kids used to watch the play standing behind this wall. After 5-6 o'clock in the evening, the nursery was empty. We jumped over the wall with guys and swam in the pools and played with fountain water. There were fruit trees in the courtyard, and we picked unripe fruit and ate them. The watchman was our neighbor. When Charents was arrested for the first time, a robber named Badas was in the same prison with him, Charents even mentioned him in one of his poems. That robber Badas was our watchman.” – Haghtanak Shahumyan (2019)

“Look at my garden! It was larger before and reached the Pedagogical University. Neighbors used to come here, we would lay a big table and sometimes play loud music. Residents from the houses in Khanjyan Street would come out and

of the world; there was another space, more sacred than the others, in the center of which were the hub of the universe, a pond and a fountain.”



«Մեր կողքի մանկամտուրը կոնստրուկտիվիստական նախագծով էր կառուցված: Ամենալավ մանկամտուրն էր, մեծ բակով, ջրավազանով: Ըտե գալիս էր տիկնիկայինի Պավլոսը, մենք էլ վախտ փոքր էինք, պատից նայում էինք տիկնիկային ներկայացումը: Մտուրը ժամը 5-ից, 6-ից հետո դատարկվում էր, մտնում էինք, լողանում էինք, խաղում էինք էլ ավազանի մեջ, լավ ծառեր կային, ցոգով էինք պոկում: Պահակն էլ մեզ ճանաչում էր, դե հարևաններ էինք: Չարենցին, որ առաջին անգամ ձերբակալում են, բանտում Բաղաս անունով գող ա լինում, ու Չարենցը իրա մասին տողեր ունի գրած: Հենց էլ Բաղասն էր մեր մտուրի պահակը» – Հաղթանակ Շահումյան (2019):

«Նայե՛ք՝ ինչ այգի ունեն: Առաջ ավելի մեծ էր, մինչև Մանկավարժական հաստում էր: Հարևանները հավաքվում էին մեր մոտ, մեծ սեղան էինք գցում, մեկ-մեկ էլ բարձր երգեր էինք դնում: Խանջյանի տներից մարդիկ դուրս էին գալիս, ասում՝ էս երգը նորից միացրեք, երաժշտություն էին պատվիրում» – Անահիտ Փխրիկյան (2017):

ask us to play the same music again, they ordered music” – Anahit Pkhrikyan (2017)

If we agree that “the garden is the smallest particle of the world”²⁶, then the ownership of garden plots and fountains²⁷ is a kind of replica towards no one’s “center of the world” that is within walking distance. Having one’s own garden and a swimming pool in the city center was a luxury both in the Soviet era and today.

Despite the reputation of being a poor district and slum, this part of the capital should also be seen as a challenge to the modern politics of the urban space economy. A similar gesture has

²⁶ Foucault, Michel 1994 [1984], *Des espaces autres*, dans *Dits et écrits : 1954-1988*, t. IV (1980-1988), Paris : Éditions Gallimard, coll. “Bibliothèque des sciences humaines”, p. 754.

²⁷ Curiously enough, it is possible to understand from the stories of residents how this type of perception of space literally absorbed and destroyed the idea of a “state”. In secret, yet regularly, the children living on the street made their way into the nursery and played there, while the tutors and administrators were absent, and the guard helped them because he was a simple man for whom the boundary between the territory of a state institution and the neighborhood was not so significant.

Եթե համարենք, որ «այգին աշխարհի մանրագույն մասնիկն է»²⁶, ապա սեփական այգի ու շատրվան²⁷ ունենալը յուրատեսակ հակադարձում է ընդամենը մի քանի քայլ հեռու, ոչ ոքի չպատկանող «աշխարհի կենտրոնին»։ Քաղաքի կենտրոնում սեփական հողամաս ու ավագան ունենալը ճոխություն էր թե՛ խորհրդային շրջանում, թե՛ այսօր։

Մայրաքաղաքի այս հատվածը, չնայած աղքատ թաղամասի ու հետնախորշի իր համբավին, պետք է ընկալվի որպես մարտահրավեր քաղաքային տարածության ժամանակակից տնտեսական քաղաքականությանը։ Հետխորհրդային իշխանությունը ձևակերպել է այդ հակադարձումը որպես «գերակա շահ», որի տերը ֆիրդուսցիներն են²⁸։ Աղքատությունը, որը մատնացույց է արվում

already been described by the post-Soviet city authorities as a “priority benefit” owned by the Firdusians²⁸. The poverty which is indicated as an argument for demolition of the street, is actually considered as wealth.

Today, when Firdus is being called a slum or ugly outgrowth in the center of a reconstructing city is often to indicate what is a kind of embodiment of people’s concept of a house. One of the residents complains of the decision to demolish the street and compares it with other places that she visited in Iran, Turkey, Georgia, etc.

“Why does the state help them to tidy up the facades and does not destroy the private houses? In Greece, in Turkey, in Jordan, for example, they renew and paint walls in one color, but do not destroy them. I want us to take care of our street like they do.”

Often, such statements preserve not only the memory of what is seen in the the Mediterranean and Eastern countries, but also a certain form of post-memory. Many families migrated here from the cities of the Ottoman Empire, where their ancestors lost their property, housing and

²⁶ St’u Foucault, Michel 1994 [1984], « Des espaces autres », dans Dits et écrits: 1954-1988, t. IV (1980-1988), Paris: Éditions Gallimard, coll. « Bibliothèque des sciences humaines », էջ 754:

²⁷ Հետաքրքիր է, որ բնակիչների հետ զրույցներից կարելի է եզրակացնել, որ տարածության ընկալման այդ տեսակը բառացիորեն կոչ էր տալիս ու ոչնչացնում «պետականի» գաղափարը, երբ փողոցի երեխաները գաղտագողի, բայց պարբերաբար ներթափանցում էին մտուր-մանկապարտեզի տարածք ու խաղում այնտեղ դաստիարակների ու աշխատակիցների բացակայության ժամանակ, իսկ պահակը նրանց չէր մերժում, քանի որ հասարակ մարդ էր, որի համար պետական հաստատության ու թաղամասի տարածքների սահմաններն այդքան էլ եական չէին:

²⁸ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում N° 332-Ն 22 մարտի 2018 թվ. փաստաթուղթը ստորագրված է Կարեն Կարապետյանի կողմից ապրիլի 3-ին: Ապրիլի 17-ի քնտրությունների արդյունքով պաշտոնապես վարչապետ դարձավ Սերժ Սարգսյանը, որը զանգվածային հանրային շարժման արդյունքում հրաժարական տվեց 2018 թվականի ապրիլի 23-ին: 2007 թվականից երևանի վերնակույքար թաղամասերը ճանաչվել են «հանրային գերակա շահի» գոտիներ (տե՛ս Ա. Իվանովի հոդվածը սույն գրքում): Հետաքրքրական է, որ «Հանրային գերակա շահի» օրենքում բացատրվում է այսպես կոչված հողերի «օտարման» մեխանիզմը, և բնակելի կամ այլ նշանակության կառույցների համար առաջարկվում է փոխհատուցում: «Օտարման» հիմք կարող են լինել «շրջակա միջավայրի պահպանությունը», «կյանքի, առողջության կամ սեփականության սուբյեկտների պաշտպանությունը» և այլն: Հավանաբար սուբյեկտների սեփականության և կյանքի պաշտպանության ուղղված այս օրենքը ենթադրում է բացառապես կենսաբանական ամբողջականությունը և բացառում այնպիսի գործոն, ինչպիսին է, օրինակ, սուբյեկտի հիշողությունը, կոլեկտիվի հիշողությունը: Այս գործոնները դուրս են մնում նկարագրողական տեքստից, որը ստեղծում է հողերի «օտարման» մեխանիզմը. (<https://bit.ly/2U0knox>) ֆիրդուսի, ինչպես և վերնակույքար ու ժողովրդական տեսակի տներ ունեցող այլ թաղամասերի դեպքերը ցույց են տալիս, որ հողերի

²⁸ Government Resolution of RA No. 332-N of March 22, 2018 The document was signed by the Prime Minister of the Republic on April 3, the name of Karen Karapetyan is indicated. On April 17, after the elections, Serzh Sargsyan was officially appointed, but soon resigned on April 23, 2018 due to the huge protest movement in the country. Since 2007, vernacular districts of Yerevan have been recognized as territories of “State interest” (see article by A. Ivanov in this edition). Interestingly, the Law on “Priority State Interest” explains the mechanism of the so-called “alienation” of lands, that is, roughly speaking, the state selects lands and recognizes them as “priority”, and takes them away, offering compensation in return. The rationale for this land “alienation” may be, for example, “ensuring the preservation of the environment”, “protecting the life, health or property of subjects”, etc. Apparently, the law provides exclusively biological integrity in ‘protecting property and the life of subjects’, and excludes such factors as the memory of the subject, the memory of the collective. These factors remain outside the descriptive text which creates the mechanism of land expropriation. URL: <https://bit.ly/2U0knox>. The case of Firdus and other parts of the city with vernacular and popular types of housing show that the adoption of the law was only one of the necessary solutions for the implementation of land expropriation, and doesn’t correspond legislation logic, due to which looks like a criminal scheme. Unfortunately, with the expropriation of land and houses from residents, the government does not plan any socially or culturally significant objects in their place, but immediately, if not in advance, transfers them to developers of residential and business complexes. The government legalizes the transfer of land from one private owner to another, since all developers are private, that is, they are not public companies.

որպես փողոցը վերացնելու փաստարկ, իրականում հարստություն է:

Այսօր, Ֆիրդուսի անվանելով հետնախորշ կամ տնն ալպար՝ կառուցվող քաղաքի կենտրոնում, հաճախ մատնանշում են այն, ինչը սեփական տան վերաբերյալ ժողովրդական պատկերացումների յուրատեսակ մարմնավորումն է: Բնակիչներից մեկը դժգոհում է քանդման որոշումից՝ համեմատելով իր փողոցն այն բնակավայրերի հետ, որոնք նա տեսել է Իրանում, Թուրքիայում, Վրաստանում և այլուր:

«Օրինակ ինչի են ուրիշ երկրներում օգնում, սարքում, ներկում դրսից պատերը ու չեն քանդում: Տեսել ես, չէ, ոնց են Հունաստանում, Թուրքիայում, Հորդանանում ներկում, սարքում պատերը մի գույնով ու չեն քանդում: Կուզեի, որ մեր փողոցն էլ իրանց նման պահպանեինք»:

Հաճախ նման ձևակերպումներում պահպանվում է ոչ միայն միջերկրածովյան և արևելյան երկրներում տեսնվածի հիշողությունը, այլև հետհիշողության որոշակի ձևը: Բազմաթիվ ընտանիքներ այստեղ գաղթել են Օսմանյան կայսրության քաղաքներից, որտեղ կորցրել են ունեցվածքը, տունը, քաղաքային ծանոթ տարածությունը: Սերնդեսներունդ փոխանցվել են սեփական տարածքի նկարագրությունները՝ միհարկանի ու երկհարկանի տներ՝ մառաններով, ամառային պատշգամբներով, սեփական այգիով: Զգայունությունը նման պատմությունների հանդեպ սրվում է հատկապես այն պատճառով, որ այդ կենսակերպը փոխվել է բռնի ուժով՝ արտաքսման, վերաբնակեցման, պատերազմների ու հակամարտությունների: Ֆիրդուսի նման վերնակույր թաղամասերն ու շրջանները իրենց մեջ կրում են հիշողություն, այն հիմնային իմաստաբանական համալիրը, որը թույլ է տալիս վերապրել վերաբնակեցման ցնցումը:

Տեղացիների «ավանդական» պատկերացումները

օտարման օրենքի ընդունումն անհրաժեշտ որոշումներից էր՝ իրագործելու տրամաբանությանը ոչ այդքան համապատասխանող, գրեթե քրեական սխեմա ունեցող օրենսդրական նախագծում: Ցավալի է, որ բնակիչներից տներ ու հողամասեր խլող կառավարությունը այդ վայրերում չի նախատեսում հասարակական կամ մշակութային նշանակություն ունեցող նոր կառույցներ, այլ գրեթե նույն ժամին, եթե ոչ ավելի վաղ, տրամադրում է դրանք բիզնես համալիրների ու բազմափաթեթի կառուցապատողներին: Կառավարությունն օրինականացնում է հողի՝ մի սեփականատերից մյուս սեփականատիրոջ փոխանցումը, քանի որ բոլոր կառուցապատողները մասնավոր և ոչ թե պետական կազմակերպություններ են:

the usual urban space. Descriptions of private properties, one-storey and two-storey houses with cellars, summer balconies and orchards passed down from generation to generation. Sensitivity to such stories is especially enhanced because people had to leave this lifestyle forcibly due to deportation, relocation, wars and conflicts. Vernacular neighborhoods and districts like Firdus preserve the memory, a fundamental semantic complex that have made it possible to survive the trauma of displacement.

The “traditional” notions of local people about their house and their own space combine the knowledge of the architecture of the cities of the Ottoman Empire and of the houses that became their refuge in Armenia. Almost every house here represents or seeks to the traditional architectural structure of the Yerevan house of the middle of the 19th century²⁹. And the houses of the Firdusians, which are represented in numerous stories, build a narrative of the collective imagination.

From the word to the image, the street incarnates in the memories of the inhabitants not only through verbal memories but also through photographs. One of the local residents worked all his life as a photojournalist in Soviet publications and created an archive of photos done not for his official work, but for himself, for family history. After numerous repairs and interior changes in his house, almost nothing was left which would remind of the main occupation and profession of the house owner. Nothing but one picture in the living room, where the family spent the most of their time. The photo shows a two-storey stone house with a wooden balcony in one of the regions of Armenia and resembles the traditional architecture of Firdusi. Only this one

²⁹ “A traditional house is a mansion designed for one family on a separate land. Residential and economic zones are divided here. In fact, the house is a system of grouping residential and business areas around the yard. The courtyard is a unifying ring, as almost all processes of family life are carried out there (sources of fire and water are here). The courtyard is also the vestibule of the house which the visitor enters directly from the street” Azatyan K. R. Brakeli bji zargatsman himnakan p'ulere Yerevani verjin haryuramyaki tchartarapetutyun mej, CHSHAH Gitakan Ashkhatutyunner 2015. H.IV (59) – page 3.

տան և սեփական տարածության մասին ներառում են Օսմանյան կայսրության քաղաքների ճարտարապետության և նրանց ապաստան տված տների իմացությունը: Գրեթե յուրաքանչյուր տուն այստեղ ձգտում է լինելու կամ ներկայացնում է 19-րդ դարի կենտրոնի տարածում ստացած երևանյան տան ավանդական ճարտարապետական կառուցվածքը²⁹: Եվ հենց ֆիրդուսյանների տները, որոնց նկարագրությունը կարելի է գտնել բազմաթիվ գրույցներում, կոլեկտիվ երևակայականի պատումն է:

Խոսքից մինչև պատկեր՝ փողոցը հառնում է բնակիչների ոչ միայն բանավոր հիշողություններում, այլև լուսանկարներում: Տեղաբնակներից մեկը ողջ կյանքում որպես ֆոտոթղթակից է աշխատել խորհրդային պարբերականներում՝ կազմելով իր արխիվը ոչ թե այն լուսանկարներից, որոնք արել է թերթերի կամ հրատարակչությունների համար, այլ լուսանկարներից, որոնք ստեղծում են իր ու ընտանիքի պատմությունը: Բազմաթիվ վերանորոգումներից ու ինտերիերի փոփոխություններից հետո տանը գրեթե ոչինչ չի հիշեցնում տանտիրոջ մասնագիտության ու հիմնական զբաղվածության մասին: Բացառություն է մի լուսանկար՝ կախված հյուրասենյակում, որտեղ ընտանիքն անցկացնում է ժամանակի մեծ մասը: Լուսանկարում Հայաստանի մարզերից մեկում արված փայտե պատշգամբով երկհարկանի քարե տուն է, ավանդական ճարտարապետություն Ֆիրդուսի համար: Արխիվային լուսանկարների ահռելի քանակության մեջ միայն այս լուսանկարն է պատվի արժանացել՝ հայտնվելու պատին, ներկայացվելու ուրիշներին և ինքն իրեն դառնալով բնակելի տան կատարյալ ճարտարապետության մարմնացումը: Նման ավանդական տան պահպանությունը մարտահրավեր է՝ ուղղված ոչ միայն խորհրդային քաղաքի կենտրոնին, այլև տարածության

shot among a huge number of archival photos was honored to be on the wall, be presented to others and to oneself as the embodiment of the ideal architecture of a residential building.

Preserving such a traditional house is a challenge not only for the Soviet city center, but also for the post-Soviet urban trend that offers new types of space saving. A private house that is attached to the ground is a blatant waste of the possibility of expanding the space up (high-rise) and down (underground parking, shopping centers, etc.). At the end of the street, behind the house No. 80, the construction of a high-rise with a deep multi-level parking has already begun, and behind the odd side houses a huge foundation pit was dug for another modern giant. A new wave of gentrification of the urban center is gradually blurring the boundaries of Firdus, erasing also the memory about the popular type of a house or vernacular housing.

IDENTITY: LAND

The identity of the inhabitants of Firdus, as well as of any other habitable space with its complex system of personal interactions, daily acquisitions, separation from strangers, is formed by realizing the place of their house within the network of the neighborhood and, more generally, the city. Speaking about the development of their space, the locals often mention garden plots, which were a kind of miniatures of the big utopia owned by the state. Thus, not only the opposition replica is formed towards the totality of socialist discourse but the social language, the most common for the locals, is reduplicated. Rural life in the city center has always been an insulating factor in the Soviet era, just as in the 2000s, free trade and open air markets isolated the local population from the general system of establishing giants of corporate and shopping centers who were going to monopolize any type of commercial circulation. Thus, the first level of dual identity is fixed in the polarization of the idea of the self-existence in the city center. If for everyone the Firdusians are residents of the city center, then for the Firdusians

²⁹ «Ավանդական տունն առանձին հողի վրա տեղադրված, մեկ ընտանիքի բնակեցման համար նախատեսված մենատուն է: Բնակելի և տնտեսական գոտիներն այստեղ սահմանազատված են: Տան հիմքում բակի շուրջը բնակելի և տնտեսական տարածքների խմբավորման համակարգն է: Ներքին բակը այն միավորող օղակն է, որտեղ իրականացվում են կենցաղի գրեթե բոլոր գործընթացները (այստեղ են օջախն ու ջրի աղբյուրը): Բակը նաև տան առաջին նախասրահն է, որտեղ այցելուն մուտք է գործում անմիջապես փողոցից» (Ազատյան Կ. Ռ., Բնակելի բջի զարգացման հիմնական փուլերը երևանի վերջին հարյուրամյակի ճարտարապետության մեջ // ՃՇՆԱՅ գիտական աշխատություններ 2015, հ. IV (59), էջ 3):



Անահիտ Փիրիկյանի ֆոտոարխիվից՝ 1940-ականներ:

Anahit Pkhrikyan's photo archive. 1940's.

տնտեսության՝ նոր տեսակներ առաջարկող հետխորհրդային քաղաքաշինական միտումներին: Հողի վրա կառուցված սեփական տունը աններելի կերպով վատնում է տարածության՝ դեպի վեր (բազմահարկեր) և դեպի վար (ստորգետնյա ավտոկայանատեղիներ, առևտրի կենտրոններ) ընդլայնվելու հնարավորությունները: Արդեն իսկ Ֆիրդուսի փողոցի վերջում՝ համար 80 տնից քիչ հեռու, սկսվել է բազմահարկ ստորգետնյա ավտոկայանատեղիով շենքի կառուցումը, իսկ կենտ կողմի տների ետնամասում փորված է մեկ այլ ժամանակակից հսկայի հիմնափոս: Քաղաքի կենտրոնի ջենտրիֆիկացման նոր ալիքն աստիճանաբար աղավաղում է Ֆիրդուսի սահմանները՝ ջնջելով նաև վերնակուլյար, ժողովրդական տների մասին հիշողությունը:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ. ՀՈՂ

Ֆիրդուսի, ինչպես և միջանձնային հարաբերությունների սեփական բարդ համակարգով, ամենօրյա ճանաչողությամբ, օտարներից իրեն առանձնացնող ցանկացած այլ բնակելի տարածքի մարդկանց ինքնությունը ձևավորվում է թաղամասի ցանցում իր տան տեղի, իսկ ավելի ընդհանուր՝ քաղաքի ճանաչողությամբ: Տարածության ձևավորման մասին պատմելով՝ տեղացիները հաճախ հիշատակում են այգիները՝ մանրակերտներն այն մեծ ուտոպիայի, որին տիրում էր պետությունը: Սոցիալիստական խոսույթի ամբողջատիրության դեմ ձևավորվում է հակադարձում, բայց նաև տեղի է ունենում տեղացիներին առավել հարագատ սոցիալական լեզվի կրկնապատկումը: Խորհրդային շրջանում քաղաքի կենտրոնում գյուղական կենցաղը մշտապես մեկուսացնող հանգամանք է, ինչպես 2000-ականներին ազատ շուկայական առևտրի հանգամանքը պիտի մեկուսացներ տեղաբնակներին առևտրաշրջանառության բոլոր տեսակները մենաշնորհող կորպորատիվ հսկաներից ու առևտրի կենտրոններից:

Այսպես, երկակի ինքնության առաջին շերտն ամրագրվում է հենց քաղաքի կենտրոնում ինքնալինելիության գաղափարի տարանջատման մեջ: Եթե բոլորի համար ֆիրդուսիները քաղաքի կենտրոնի բնակիչներ են, ապա ֆիրդուսիների համար կենտրոնն ինչ-որ այլ բան է՝ սեփական

the center is something different, out-sided³⁰ in relation to their social field. Probably the best illustration of the phased development of such dual identity is the multitude of photographs that local people show when they speak about the past. Photos taken on the Republic Square are more or less ceremonial and festive. Like residents of the periphery or other cities, the Firdusians prepared for the exit to the Square, wore their most elegant clothes and generally tried to respond the demands of the center of the capital.

Everything that the Firdusians say about the houses and the years they spent here is very different from the auto-statements that can be received from the residents of other central streets. Almost always, residents tell the “story of the land”, garden plots, mention materials from which the houses are made, most of them are stories about plants, many mention trees on the street that were cut down. You can rare find a story about a house in Fi

rdusi, which was received from the state or from the “factory” during the Soviet era³¹, which is typical of most residents of apartment buildings in the center.

Speaking about the house they own, or about the neighbor's house, Firdusians can with incredible accuracy describe the materials of which these houses are made. Contact with the land, which demonstrates a rural lifestyle, develops into a relationship with a house that has been “grown” on the land with their own hands. Here the idea of creating a space single-handedly is spread almost everywhere. One of

³⁰ Out-sidedness is one of the fundamental concepts used by Mikhail Bakhtin in his theoretical work. First of all, Bakhtin with out-sidedness explains the author's non-position in relation to the characters of narrative texts. Later, Bakhtin himself and his followers use the concept in a broader sense of non-position and dialogique, that is, the conditions for the formation of the subject.

³¹ The only exception is the three-storey apartment building number 17. Over time, the boundaries between apartments, defined by the architecture of late constructivism, were gradually erased. In this regard, the history of one of the apartments is indicative. At first the communal apartment was divided between neighbors, then one of the owners sold his part to his neighbor's brother, and then the large family occupied half the floor. Later, another member of this family started his own family, buying a house in front of their relatives' house. Thus, the family all the time subordinated to the state policy of resettlement of residents.


սոցիալական դաշտից դուրս լինող³⁰: Հավանաբար, այս երկակի ինքնության աստիճանական զարգացման լավագույն պատկերը տրված է այն բազմաթիվ լուսանկարներում, որոնք բնակիչները ցույց են տալիս անցյալի մասին պատմելիս: Լուսանկարները քիչ թե շատ տոնական են ու հանդիսավոր, արված են Հանրապետության հրապարակում: Ինչպես մայրաքաղաքի ծայրամասերում կամ այլ քաղաքներում ապրող բնակիչները, ֆիրդուսցիները նույնպես նախապատրաստվում էին հրապարակ գնալուց առաջ, ընտրում էին ամենատոնական զգեստը, ձգտում համապատասխանելու մայրաքաղաքի կենտրոնի բոլոր ցուցանիշներին:

Փողոցի, սեփական տան, այնտեղ ապրած տարիների մասին ֆիրդուսցիների պատմությունները խիստ տարբերվում են բոլոր այն ինքնամեկնաբանություններից, որ կարելի է լսել կենտրոնական այլ փողոցների բնակիչներից: Նրանք գրեթե միշտ պատմում են «հողի պատմությունը», այգիների մասին, հիշատակում են շինանյութեր, որոնցից պատրաստված են տները, երկար խոսում են բույսերից, շատերը հիշում են փողոցի կտրված ծառերը: Քիչ են դեպքերը, երբ տունը ստացվել է աշխատանքային ստաժի շնորհիվ, «զավոդից» կամ կազմակերպությունից³¹, ինչը հատուկ է կենտրոնի բազմաբնակարան շենքերի բնակիչներին:

Սեփական կամ հարևանի տան մասին խոսելիս ֆիրդուսցիները կարող են աներևակայելի ճշգրտությամբ նկարագրել բոլոր այն նյութերը, որոնցով դրանք կառուցված են: Ագրարայության՝

³⁰ «Դուրս լինելը» (внеаходимость) Միխայիլ Բախտինի տեսաբանական աշխատանքներում հանդիպող հիմնային հասկացություններից է: Բախտինը նախ և առաջ այս եզրույթը բացատրում է հեղինակի՝ պատմության տեքստերի կերպարների հանդեպ հեղինակի դուրս լինելը: Այնուհետև եզրը թե՛ Բախտինը, թե՛ նրա հետևորդները կիրառում են լայն իմաստով՝ որպես սուբյեկտի կայացման պայման:

³¹ Բացառություն է միակ բազմաբնակարան եռահարկ № 17 տունը, որտեղ ժամանակի ընթացքում բնակարանների միջև ըստ ուշ կոնստրուկտիվիստական ճարտարապետության գծված սահմանները նույնպես շնչվում էին: Այդ առումով հետաքրքրական է բնակարաններից մեկի պատմությունը. սկզբում կոմունալ բնակարանը բաժանված էր երկու ընտանիքների միջև, իսկ հետո սեփականատերերից մեկը մյուս սեփականատիրոջ եղբորը վաճառեց իր հատվածը, և հարկի կեսը զբաղեցնում էր մեծ ընտանիքը: Դրանից հետո այդ ընտանիքի բնակիչներից մեկը իր ընտանիքը ստեղծեց դիմացի սեփական տանը: Այսպես ընտանեկան պատմությունը միշտ ենթարկվում էր բնակեցման պետական քաղաքականությանը:



the striking cases of such participation is the story of the Kirakosyan family³². Architect Hayk Kirakosyan designed house No. 30 in which his family lived, as well as several other houses which their neighbors later lived in. Thus, the physical connection with the process of becoming a place-self is transformed from ubiquitous folklore developments of earthen, stone and thatched houses from the mid-19th century into vernacular and official projects in the Soviet era. Up to this day, the Firdusians are outraged by any interference from the outside world; in the 1990s, all the newly built extensions, designed to equip the market and tourist life in Firdusi, were constructed by Firdusians themselves.

³² See Firdus Diary in this edition.

հողի հետ կապը վերածվում է հողից սեփական ձեռքերով աճեցրած տան հետ կապի: Այստեղ գրեթե ամենուր ընդունված է տարածությունը սեփական ձեռքերով ստեղծելու գաղափարը: Այդպիսի ներգրավվածության տպավորիչ օրինակներից է Կիրակոսյան ընտանիքի պատմությունը³²: Զարտարապետ Հայկ Կիրակոսյանը նախագծել է № 30 տունը, որում ապրում էր նրա ընտանիքը, բայց նաև մեկ այլ շինություն՝ նախատեսված 5 ընտանիքի համար, որոնցում հետագայում ապրել են նրանց հարևանները: Այսպես, «տեղ-ես»-ի ձևավորման ընթացքի հետ ֆիզիկական կապը փոխակերպվում է 19-րդ դարակեսի համընդհանուր հողե, քարե, ծղոտե ֆուկլորային տներից մինչև խորհրդային շրջանի վերնակույար և պաշտոնական նախագծերի: Մինչ օրս ցանկացած արտաքին միջամտություն վրդովեցնում է ֆիրդուսցիներին, իսկ 1990-ականներին նրանք սեփական ձեռքերով կառուցեցին իրենց տներին կից կառույցները՝ «սպառազինելով» շուկայական ու գրոսաշրջային կյանքը:

ՓՈՂՈՑ-ՇՈՒԿԱ

«Ինձ բախտ է վիճակվել տեսնելու երևանյան շուկան իր սկզբնական տեսքով: Շուկան բավական գեղատեսիլ էր՝ գերակշռող արևելյան իրանական կոլորիտով»³³:

Այսպես է գրում Գրիգորյանը կապույտ մզկիթից քիչ հեռու գտնվող կենտրոնական շուկայի մասին՝ հիշատակելով նաև այլ շուկայական հրապարակներ՝ միմյանց նման իրենց կոլորիտով ու քաղաքի համար նշանակությամբ: Արդեն 1920-ականներին քաղաքի կենտրոնական հրապարակի ընտրության հարցում ակնհայտ տարաձայնություններ են առաջանում: Եթե ունանք կարծում են, որ երևանցիների կյանքը կենտրոնացած է շուկայական հրապարակների շուրջը, մյուսները տեղի նախագծման առումով պատկերացնում են ավելի ֆունկցիոնալ կենտրոն³⁴: Նոր կենտրոնական հրապարակը կառուցելիս քաղաքաշինարարները դեն են նետում շուկայի գործառույթը³⁵՝ կարևոր ցանկացած արևելյան

STREET WHICH IS A MARKET

“I happened to see the Yerevan market in the period when it still had its original look. The market presented a rather picturesque scene with prevailing eastern Iranian color”³³.

This is how Grigoryan describes the central market, located near the Blue Mosque, and also mentions other market squares, similar in coloring and significance. Already in the 1920s, disagreements in the choice of the central square of the city become apparent. If some believe that the life of Yerevanians is concentrated around the market squares, others consider a more functional center in relation to the idea of planning a ‘place’³⁴. By constructing a new central square, urbanists abandon³⁵ the centering function of the market which is important for any eastern city. In the course of the history it will constantly return in the form of Firdus and Vernissage markets, as well as other trading places lined up in a certain semiosis of commercial circulation activity³⁶.

Here, the memory of the place will constantly be in conflict with the artificially induced amnesia that has affected the city for decades, from the Soviet times to the present.

Yerevan is constantly subjected to reconstruction that smooths its eastern self and the existing network of multinational and multicultural relationship system. Constant aspirations to adapt the city to the ideas of “modern” urban environment, or adjust it to Western or Soviet traditions, etc., distract not only the local residents, who lose their usual urban references.

Archival documents, memoirs of architects and city planners show futuristic pictures and plans for the endless transformation of the urban environment. In fact, it is one big narrative about

³³ Grigoryan M. Ploshhad' Lenina v Erevane. Vospominaniya o proektirovanii i stroitel'stve. «Ajastan», Erevan, 1969, p. 15.

³⁴ Ibid, p. 17.

³⁵ See Grigoryan's text on the mass dismantling of the pre-Soviet buildings in the center of Yerevan: “For the first time the mass demolitions were carried out in the very center, before the eyes of astonished people...” (p. 31).

³⁶ See the article of H. Melkumyan in this edition.

³² Տե՛ս «Ֆիրդուս. օրագիր» բաժինը սույն գրքում:

³³ Տե՛ս Григорян М., Площадь Ленина в Ереване. Воспоминания о проектировании и строительстве, «Айастан», Ереван, 1969, с. 15.

³⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 17:

³⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 31, «О массовом демонтаже до-

քաղաքի համար, և հետագայում այն շարունակ վերադառնում է Ֆիրդուսի, Վերնիսաժի և այլ առևտրավայրերի տեսքով. վայրեր, որոնք հերթագայում են առևտրային գործունեության շրջանառության որոշակի իմաստավորմամբ³⁶:

Այստեղ տեղի հիշողությունը մշտապես դիմակայելու է այն արհեստածին ամենգիային, որը հարվածում է քաղաքին արդեն տասնամյակներ՝ խորհրդային շրջանից մինչ օրս:

Երևանը շարունակ ենթարկվում է վերակազմավորման փորձերի. փորձեր, որոնք հարթում են նրա արևելյան ինքնությունը, փոխհարաբերությունների բազմազգ ու բազմամշակութային համակարգը, ձևավորված ցանցը: Քաղաքը «ժամանակակից» ուրբան միջավայրին հարմարեցնելու, այն արևմտականացնելու, խորհրդայնացնելու և այլ քաղաքաշինական ավանդույթներին հետևելու ձգտումը վրդովեցնում է տեղացիներին, որոնք կորցնում են սովորական քաղաքային կողմնորոշումները, և վրդովեցնում է ոչ միայն նրանց:

Արխիվային փաստաթղթերը, ճարտարապետների և քաղաքաշինարարների հուշագրությունները լի են քաղաքային միջավայրի անվերջ փոխակերպման ապագայապաշտական պատկերներով ու ծրագրերով: Ըստ էության՝ դա մի մեծ պատում է ապագայի մասին՝ ցիրուցան կերպով կարկատված քաղաքի տարբեր շրջաններին: Ապագայի վերաբերյալ այդ գրույցներում անցյալի մասին հիշողությունը տեղ չունի՝ ի տարբերություն գեղարվեստական արձակի, որն ավելի ճկուն ու ընկալունակ է տեղի հիշողության կորստի լրջության հանդեպ:

Մկրտիչ Արմենի՝ 1920-1930-ականներին գրված «Երևան» վեպի հերոսը, հետևելով քաղաքայնացման ընթացքին, կասի.

«Ինչ եք կառուցում [...], մի քանի գաճաճ տնակներ, որոնց նման հազարավորները կան գավառական բոլոր քաղաքներում, այն էլ նրանց ծայրամասերում: Իսկ դրա փոխարեն դուք քանդում եք արևելյան դարավոր մի քաղաք... այս ինչ եք անում»³⁷:

советских зданий в центре Еревана», «Впервые массовые сносы стали производиться в самом центре, изумляя население...»:

³⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն գրքի 3. Մեթոդային հոդվածում:

³⁷ Մկրտիչ Արմեն, Երևան: Էպոպեա, եր., Անտարես, 2016, էջ 66:

the future, which is sporadically and partially implemented in separate districts of the city. In such stories about the future, there is no place for memories of the past, unlike fiction, which is more flexible and adoptive to the seriousness of the loss of the memory of a place.

The hero of the novel “Yerevan”, written at the turn of the 1920s – 30s by the Armenian writer Mkrtich Armen, observes the ongoing processes of urbanization and says:

“What are you building? [...] Several dwarf houses that exist in thousands in all provincial cities, especially in their suburbs. For that purpose, you are destroying the ancient Eastern city... what are you doing?”³⁷

The sovietisation of the urban space won over the market as a central place of the city and the market in the center of the city; if trade did exist here, it operated exclusively in the peripheries and was associated with the sale of crops or goods of handmade and folk origin. However, with the collapse of the Soviet Union, the city was in a state close to the economic blockade, and faced with all the daily needs of the capital residents. It was during this difficult period that the market returned to the center. Like this the mother tongue, lost for many years, suddenly and unexpectedly, even for itself, returns to the native speaker at the moment of an affect. One of the residents who lives at the front part of the street recalls how he began to rent rooms to two Iranian merchants and, as if justifying his decision then, thirty years ago, tells us:

“That’s right, they started trading here in the 90s, but as my father told me, even when he was a boy, they brought salt on camels for sale. There was always something to buy and sell in our street.”

In the 1990s, after the market appeared in this street, the combination “Firdusi Street” familiar for Yerevan residents was changed to “Firdus Market.”

The facades of the houses quickly overgrew with outbuildings, containers, pavilions of blue plastic tarpaulin, metal and wooden tables. From now on, the street signs of the Soviet era on the facades were hidden from the eyes of customers,





Շուկան՝ որպես քաղաքի կենտրոնական վայր, հանձնվեց քաղաքային տարածության խորհրդայնացմանը. առևտուրը եթե քաղաքում էր արվում, ապա բացառապես ծայրամասերում և արվարձաններում էր և առնչվում էր գյուղատնտեսական մշակաբույսերի ու ժողովրդական տնտեսության ապրանքների իրացմանը: Մինչդեռ խորհրդային Միության փլուզումից հետո քաղաքը գրեթե տնտեսական շրջափակման մեջ էր ու բախվում էր քաղաքի բնակիչների օրեցօր ավելացող խնդիրներին: Եվ հենց այդ դժվար պահին շուկան վերադարձավ կենտրոն: Այդպես մայրենի լեզուն՝ վաղուց մոռացված, անսպասելիորեն վերադառնում է այդ լեզուն կրողի մոտ աֆեկտի պահին: Փողոցի սկզբնամասում ապրողներից մեկը հիշում է, թե ինչպես սկսեց սենյակները վարձակալության հանձնել երկու առևտրական իրանցիների և, ասես փաստարկելով 30 տարվա իր այդ պահի որոշումը, ասում է մեզ.

«Ճիշտ ա, առևտուրը ստեղ 90-ականներից սկսեց, բայց պապաս պատմում էր, որ դեռ էն ժամանակ, որ ինքը փոքր էր, ստեղծվ ուղտերի վրա բարձած աղ էին բերում, ծախում: Միշտ էլ մի բան ծախել ու առել են էս փողոցում»:

1990-ականներին, երբ այստեղ շուկա հայտնվեց, երևանցիների համար «Ֆիրդուսի շուկա» ձևակերպումը դուրս մղեց ավելի ծանոթ «Ֆիրդուսի փողոց» արտահայտությունը:

Տան ճակատամասերին արագորեն ավելացան կցակառույցներ, բեռնախցիկներ, կապույտ բրեզնտից տաղավարներ, մետաղական կամ փայտե «դախներ»: Փողոցի անունը նշող խորհրդային ցուցանակները մնացին տների ճակատներին, որոնք այսուհետ թաքնված էին գնորդների, պատահական անցորդների ու տեղացիներից շատերի հայացքից: Շենքերի ճակատները, որոնք այս փողոցի երբեմնի դեմքն էին ու ներքինը արտաքինից, անձնականը հանրայինից առանձնացնող սահման, վերածվեցին կրկնագիր ձեռագրի առաջին շերտին, որը հայտնաբերելու համար պետք է զգալի ջանք ներդնել: Մինչ խորհրդային ցուցանակները մաքրվում էին պատերից, ավտոբուսների և երթուղայինների վրա վառ գույնով առանձնանում էր «Ֆիրդուս» բառը: Ֆիրդուսի փողոցը գրեթե գոյություն չուներ. բոլորը շտապում էին Ֆիրդուս՝ շուկա, որն այդ պահին կրկնակի հասցեավորում ուներ. որոշ դեպքերում թվերը նշում էին տաղավարի, մյուս դեպքերում՝ տան հասցեն:

casual visitors and most of the locals. The facades that once were the face of this street and a border that separated the inner from the outer, the personal from the public, turned into the lower layer of the palimpsest, the disclosure of which requires tremendous effort. While these Soviet signs were fading on the walls, the word “Firdus” was displayed in bright colors on the city bus and minibuses. The Firdusi Street almost did not exist; all were flocking to Firdus, to the market, which by that time was double-numbered: pointing both pavilion and house numbers.


The name of the market and the depth of the street, not typical for a Soviet city development, united the street with the market, and the market, in its turn, nicknamed the whole neighbourhood, reducing it to a single word – Firdus – for all the residents of the city.

One way or another, Firdus became a place uniting all the residents of the city. The economic blockade, paralyzed factories and agglomerations led to a collapse. Firdus remained one of the few opportunities to buy everyday household goods and food. It was a predominantly Iranian market; Iranian merchants personally imported goods and remained to sell them here. The Firdusians began to rent not only the front parts of their houses, but also rooms, parts of houses and built new residential extensions in the courtyards and roofs. Gradually, in ten years, Firdus became a small market town, providing the residents of the big city with everything they need. In part, this space of care and hospitality again restored a function that was not forgotten, but was actively suppressed by the policy of architectural “smoothing” of the surface of the urban environment. At the same time, the political utopia with the paradise fountains in the center instantly lost its power, shamefully hiding Lenin’s statue in the courtyard of the State Art Museum. It would seem that the idea of a market located in the very center of the city which was disappeared in the time stream, in the plans of urban development and new lined areas of residential buildings, suddenly returns from the darkness of oblivion and returns to us what was impossible to save in the city subjected to violent amnesia.

Շուկայական անվանումն ու խորհրդային կառուցապատմանը ոչ հատուկ խորությունը միավորում էին փողոցն ու շուկան, իսկ շուկան, իր հերթին, մի ամբողջ թաղամաս կնքեց այդ անունով՝ քաղաքի բոլոր բնակիչների համար դարձնելով այն Ֆիրդուս:

Ֆիրդուսը դարձավ քաղաքի բոլոր բնակիչներին այս կամ այն կերպ միավորող տարածք: Տնտեսական շրջափակումը, կանգնած գործարաններն ու կուտակումները հանգեցրին անկման: Ֆիրդուսն այն փոքրաթիվ վայրերից էր, որտեղ կարելի էր ձեռք բերել ամենօրյա կենցաղային իրեր ու սննդամթերք: Այն հիմնականում իրանական շուկա էր. իրանցի առևտրականներն իրենց հետ բերում էին ապրանքներ ու մնում վաճառում էին դրանք: Ֆիրդուսիցները վարձակալությամբ էին տալիս ոչ միայն տների ճակատային հատվածները, այլև սենյակները, տների առանձին հատվածները, կառուցում էին նոր բնակելի կցակառույցներ բակերում և տանիքների: Տասը տարվա ընթացքում Ֆիրդուսը դարձավ փոքրիկ քաղաք-շուկա, որն ապահովում էր մեծ քաղաքի բնակիչներին առաջին անհրաժեշտության իրերով: Ինչ-որ իմաստով հոգատարության ու հյուրընկալության այդ տարածությունը վերադարձրեց այն գործառույթը, որը թեև մոռացության չէր մատնվել, բայց ակտիվորեն ճնշվում էր քաղաքային միջավայրի ճարտարապետական արտաքին «հարթեցման» քաղաքականությամբ: Մինևս ժամանակ կենտրոնի դրախտային շատրվանների քաղաքական ուտոպիան ակնթարթորեն կորցրեց իր իշխանությունը և ամոթխած՝ թաքցրեց Լենինի արձանը Ազգային պատկերասրահի ներքին բակում: Քաղաքի անմիջապես կենտրոնում շուկայի գաղափարը, որը կարծես կորել էր ժամանակի հոսքի մեջ, քաղաքային վերակառուցման ծրագրերում, բնակելի կառուցապատման՝ նախագծված քառակուսի մետրերում, հանկարծակի վերադառնում է մոռացության խավարից և վերադարձնում է մեզ այն, ինչ անհնար էր պահպանել բռնի ամենեզիայի ենթարկվող քաղաքում:

Տարիներ շարունակ Ֆիրդուսը ոչ միայն փողոց է, այլև փողոց-շուկա, քաղաքի, տարածաշրջանի ամենահայտնի շուկաներից մեկը: Հետևաբար, որքան էլ տարօրինակ է, դեպի ներս կատարվող այդ «քայլը» վերածվում է ճանապարհորդության դեպի աշխույժ տարածություն՝ լեցուն երկկողմանի առևտրային տաղավարներով ու վաճառողներով:


«Ուրոման» երկրորդ տեսակը արշավ է դեպի շուկա կամ շուկայի միջով՝ տաղավարների մոտ հապաղելով, «դախների» վրա շարված ապրանքների երկար-բարակ քննարկմամբ: Տարածության յուրացման այս երկու ձևերը շարունակ մերձենում են և հոսում մեկը մյուսի մեջ՝ Ֆիրդուսը դարձնելով քաղաքի կենդանի մաս, որի լիությունը իրական կյանքով և հասարակ քաղաքացիների կյանքով դիմակայում է կենտրոնի կորպորատիվ հոետորությանը:

Եվ վերջապես «որոնումների» երրորդ տեսակը՝ ժամանակի կրճատումը, տարածության սեղմումը, այլ երթուղու ուղղումն է: Երբ այս նախագիծը հասանելի դարձավ առցանց, որոշ օգտատերեր, որպես հիշողություն, ափսոսանք էին հայտնում փողոցի քանդման, պողոտայի գիծը հատող ու կրճատող «երթուղու» համար: Տիգրան Մեծի պողոտայից հեշտորեն կարելի է հասնել Չայկովսկու փողոց՝ անցնելով մոտ 250 մետր Ֆիրդուսի փողոցով կամ Հանրապետության փողոցից Վերսիսաժ՝ նախկին Ալավերդյանի կամարով:

Ջարմանալի է, որ վաղուց իրենց տներից հեռացած մարդիկ հիշում էին այդ տեղով իրենց ամենօրյա քայլքի մանրամասնությունները և գրում այս նախագծի հեղինակներին քաղաքի այլ շրջաններից, աշխարհի տարբեր երկրներից: «Հիշողությունը մի տեսակ հակաթանգարան է, այն հնարավոր չէ տեղակայել»⁵³: Ուստի որքան շատ էինք մենք ձգվում դեպի տեղը, այնքան տեղի հիշողության մասին մեր խոսքը տարածվում էր՝ դուրս գալով տարածքի սահմաններից և ընդդիմանալով դրա թանգարանացմանն ուղղված ցանկացած մտքի:

ՄԻԱՑՅԱԼ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆիրդուսի քնակիչներից շատերը, պատմելով իրենց փողոցի, թաղամասի ու տան մասին, սկսում են «էս թուրքի տուն էր» նախադասությամբ: Ավագ սերունդը հիշում է այդ տներում ապրող աղյուսեղանիներին և ունի լավ պահպանված հուշեր համատեղ կյանքի



of Muslim dwellings (arched windows, false windows for praying, etc.).

The previous inter-ethnic picture of this neighborhood can be described as an experience of peaceful and compact cohabitation of Christian and Muslim communities. Most of the Muslim community consisted of Azerbaijanis. Besides Iranian, Azerbaijanis and Armenian families, few Kurdish families lived here. The experience of “living together” in Firdus was never interrupted but transformed into other forms, and always maintained the basic philosophy: maximum tolerance and openness to others⁵⁴.

However, real life is different from the memory

⁵⁴ See A. Ivanov's article in this edition. The author develops the idea that vernacular architecture is the most tolerant and open to the perception of other styles, skills of masters and the knowledge of architects, the national and the official. Moreover, this is an architecture that is not initially inclined to the idea of discriminating another architectural form from the same environment and in relation to a person.



մասին: Հիշում են ոչ միայն բնակիչները, նրանց տներում որոշ ճարտարապետական էլեմենտներ առանձնանում են մահմեդական կենցաղին բնորոշ ոճով (սլաքաձև պատուհաններ, կեղծ պատուհաններ նամազի համար և այլն):

Թաղամասի միջէթնիկական պատկերը անցյալում կարելի է բնութագրել որպես քրիստոնեական ու մահմեդական համայնքների կոտ ու խաղաղ բնակության փորձառություն: Մահմեդական համայնքի մեծամասնությունը կազմում էին աղրբեջանցիները: Բացառությամբ մի քանի պարսիկ ընտանիքների, հայերի և աղրբեջանցիների, այստեղ ապրում էին նաև մի քանի թուրք ընտանիքներ: Ֆիրդուսյանների «համատեղ կյանքի» փորձը երբեք չի ընդհատվել, այլ փոխակերպվել է՝ պահպանելով հիմնական փոխափայտությունը՝ առավելագույն հանդուրժողականություն և սրտաբացություն ուրիշների հանդեպ⁵⁴:

⁵⁴ Տե՛ս սույն գրքում Ա. Իվանովի հոդվածը, որում հեղինակը զարգացնում է այն միտքը, որ վերնակուլյար ճարտարապետությունն ամենից հանդուրժողն է

about it. With the outbreak of the Karabakh conflict, the departure of the Azerbaijani population was a traumatic experience not only for those who left, but also for those who stayed.

“The Azerbaijanis lived opposite this house, I remember the night when they left with all family. Until now, I have goosebumps along my flesh, as I recall that night,” says one of the residents who lives at the beginning of the street. Of course, the intensified rhetoric of hostility in the early years of the Karabakh conflict left its imprint on the residents of Firdus as well. Often, they begin their stories with the rhetoric of hatred, but telling the same story for the second or the third time, they get involved in the process of reconstruction of their own experience, leaving out the political or media discourse. So, one of the residents living at the lane of Hanrapetutyan Street, where the backyards intersect with the yards of the Firdusians, says with anger: “Yes, some Turks lived here, then they left”. A few minutes later, returning

Հատված 1932 թ. ԶԽՍՀ կոմունալ տնտեսության ժողովմատից (կոմունալ գիրք): Հայ և աղրբեջանցի ընտանիքներն ապրում են մեկ հասցեի ներքո: Նույն հասցեում միջէթնիկական համաբնակության նման տեսակը հանդիպում է բազմաթիվ արխիվային փաստաթղթերում ընդհուպ մինչև 1940 թվականը (Հայաստանի ազգային արխիվ):

A fragment from the Communal Book, 1932. The family of Armenians and Azerbaijanis live at the same address. This type of interethnic cohabitation at one address can be found in many archival documents until the late 1940s. National Archive of Armenia.

--	--	--

(12m 14m 8m 17m 13m 20m 14m)

Հրնայաւանք Բաց և

միտցող (նրբաշնորհ, փառելուդի, հրապարակ

1. ԿՈՅԱՐԵՆՈՒՄ՝ ԲՆԱԿԱՌԱՆԵՐԻ ՅԻՈՅՈՒՄ

[illegible]

--	--	--

(Luzumδme [ʃe] [ʃe] ʒe ɪʃ ʃe)

Երևարանին թող և

Հայրենի միջնորդական քաղաքային № 21

փոստոց (Երբանցք, փակուղի, հրապարակ)

1. ԿՈՅԱՐԱՆՈՒԹ ՔՆՆԿԱՌՆԵՐԻ ՅՈՒՅՈՒՐ

[illegible]

Սակայն իրական կյանքը տարբերվում է դրա մասին հիշողությունից: Ղարաբաղյան հակամարտության սրման հետ թաղամասի աղքեշանական բնակչության հեռանալը ցնցող փորձառություն էր ոչ միայն հեռացողների, այլև մնացողների համար:

«Էս դեմի տանը աղքեշանցիներ էին ապրում: Էսօրվա պես հիշում եմ՝ ո՞նց գնացին մի գիշերում: Մինչև հիմա, որ հիշում եմ, փշաքաղվում եմ», – պատմում է փողոցի սկզբնամասի բնակիչներից մեկը: Անշուշտ, թշնամության հոետորաբանությունը, որը սրվեց ղարաբաղյան հակամարտության առաջին տարիներին, իր հետքն է թողել նաև այս թաղամասի բնակիչների վրա: Հաճախ նրանք սկսում են խոսել դեռևս չթափած ատելության հոետորությամբ, բայց պատմելով նույնը երկրորդ, երրորդ անգամ՝ ներգրավվում են սեփական փորձի և ոչ թե քաղաքական կամ մեդիայի խոսույթի վերակառուցման գործընթացում: Այսպես, ֆիրդուսցիների բալետի հետ անցումներով խաչվող Հանրապետության նրբանցքի բնակիչներից մեկը վրդովված սկսում է. «Հա, էստեղ մենակ թուրքեր էին ապրում, հետո գնացին»: Մի քանի րոպե անց, վերադառնալով միջէթնիկական հարևանության թեմային, գրուցակիցս արդեն հստակ փաստեր է հիշում առօրյա կյանքից ու ասում. «Մեր տան հետևի հարևանները աղքեշանցիներ էին, խելոք, բարի մարդիկ էին: Մարդը այգեպան էր աշխատում, իմ համար սիրուն պիոններ էր բերում»:

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սոցիալական տարածության ուսումնասիրությունը հայերի ու աղքեշանցիների՝ մեկ վայրում խաղաղ համակեցության բազմաթիվ օրինակներ կտրամադրի, անգամ ղարաբաղյան հակամարտության «իրավիճակում»⁵⁵: Սակայն այդ համակեցության

to the topic of inter-ethnic neighborhood, she recalls a concrete fact from everyday life and says: “The neighbors behind our house were Azerbaijanis, very peaceful and kind people. The husband worked as a gardener and sometimes brought me such huge peonies, very beautiful flowers”.

Studying the social space of Armenia, Azerbaijan and Nagorno-Karabakh, one can easily bring examples of memories of peaceful neighborhood of Armenians and Azerbaijanis in different places, before and even in a process of the Karabakh conflict⁵⁵. But studies of such a joint life in urban space, especially in a street that is neighboring with the main square of the country seem important, because here, very close, the rhetoric of the state power is spread, and any practice of everyday life is somehow quickly reflected by it. The village, that is, the rural space is always on the verge of apolitical regime; the village always regulates its life according to the laws of nature or a small community, etc. The life in a city is more defined by political discourse, and it is almost impossible to ignore the tectonic movements in the political speech. In addition, for rural residents, the military conflicts are an immediate reality, and the confrontation of the two states represented as a result. That is why in the reportages about the border villages of the conflicting countries we can always hear a story that war interferes with everyday life, making it impossible to freely graze animals in nearby territories, creating difficulties with an access to the natural resources such as water, essential for agriculture, etc. Border villages of Armenia and Azerbaijan are less subjected to politicization due to their specific rhythm of life and remoteness from the center, and villagers perceive political changes in a completely different way. That is why the experience of living together, the peaceful inter-ethnic past of this neighborhood in such proximity to the changing media and political

ու առավելագույնս բաց այլ ոճերի, վարպետների հմտության ու ճարտարապետական գիտելիքի, ժողովրդականի ու պաշտոնականի հանդեպ: Բացի դրանից՝ հենց այսպիսի ճարտարապետությունն է, որ հիմքում չունի այլ ճարտարապետական ձևերի և ճարտարապետության՝ մարդու հանդեպ խտրականության նախատրամադրվածություն:

⁵⁵ Տե՛ս, օրինակ, Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում խաղաղ բնակչության միջև գյուղափոխանակման վերաբերյալ հետազոտությունը՝ Sevil Huseynova, Arsen Hakobyan, Sergey Rumyantsev Beyond the Karabakh Conflict: The Story of Village Exchange. Heinrich Boell Foundation South Caucasus Regional Office, 2012:

⁵⁵ See, for example, the study on the experience of the exchange of villages by civilians in the border regions of Armenia and Azerbaijan, Sevil Huseynova, Arsen Hakobyan, Sergey Rumyantsev Beyond the Karabakh Conflict: The Story of Village Exchange. Heinrich Boell Foundation South Caucasus Regional Office, 2012.



Հատված 1808 թ. երևանի գլխավոր հատվածագծից: Ֆիրուսի փողոցը այն գոտում է, որը նկարագրված է որպես «կայր տարրերի բնակելի տներ», որոնք պարսիկները հիմնովին ավերել են պաշարման ժամանակ Եալանարայի կառուցման համար»: Բիչ հեռվում թաթարական գերեզմանոցն է:

A fragment of the General Plan of Yerevan in 1808. Today's Firdusi Street is located in the zone that is described on the map as "a place of various philistine houses that the Persians razed to the ground during the siege to build an esplanade". Tatar cemetery is nearby.



Հատված 1920 թ. Երևանի գլխավոր հատմամբ: Գլխավոր փողոցային ակիցը արևելք Մերձիկ փողոցը տանում է դեպի թաղամասի խորքերը:

A fragment of the General Plan of Yerevan in 1920. From the main avenue, a tiny street originates, leading to the depths of the neighborhood.

ուսումնասիրությունը քաղաքային տարածության մեջ, այն էլ՝ կենտրոնական հրապարակին հարող փողոցում, կարևոր է թվում հենց այն պատճառով, որ այստեղ հարևանությամբ գործում է պետական իշխանության հոետորությունը, և տեղացիների առօրեական բոլոր գործողություններն այսպես թե այնպես արագորեն արտացոլում են այդ հոետորությունը՝ համապատասխանեցնելով դրանք քաղաքական ընթացքին: Գյուղերն ու գյուղական տարածությունը մշտապես ապաքաղաքական կարգի սահմանին են, գյուղական կենսակերպը կանոնակարգում է կյանքը բնության ու փոքր համայնքի և այլ օրենքներով: Քաղաքային կյանքն ավելի շատ է որոշարկված քաղաքական խոսույթով, և գրեթե անհնար է հաշվի չառնել իշխանական ելույթների տեկտոնական տեղաշարժերը: Բացի դրանից՝ գյուղաբնակի համար պատերազմական գործողությունները իրողություններ են, իսկ երկու պետությունների դիմակայելը՝ արդյունք, այդ պատճառով հակամարտող երկրների սահմանամերձ գյուղերի վերաբերյալ լրահաղորդումներում մշտապես կարող ենք լսել, որ պատերազմը խանգարում է առօրյա կյանքին. անհնար է կենդանիների արածեցնել, տեղաշարժել նրանց մոտակա տարածքներով, դժվարհասանելի են բնական ռեսուրսները՝ ռոզման ջուրը և այլն:

Հայաստանի ու Ադրբեջանի սահմանի գյուղերը կյանքի ռիթմի յուրահատկությունների ու կենտրոնից հեռու գտնվելու շնորհիվ ավելի քիչ են ենթարկվում քաղաքականացման. գյուղաբնակն ու քաղաքաբնակը բոլորովին այլ կերպ են ընկալում քաղաքական փոփոխությունները: Հենց այդ պատճառով համատեղ կյանքի, հարևանության, համատեղ խաղաղ անցյալի փորձը, որն այդքան մոտ է մեղիայի ու քաղաքական փոփոխական կողմնորոշումներին, այսօր դառնում է առավել արժեքավոր:

Երբեմն զարմանալի կթվա, որ պատմությունների մեջ հաճախ հանդիպում է նույն տրամաբանական սխալը. տեղի է ունենում համատեղ անցյալի պատմության փոխանվանացում (metonomization):

«Էս մանկապարտեզը Վերինսաժի կողքն ա: Ֆիրդուսից շատ էին երեխեք գնում էստեղ: Այ էս ձախից, ներքևում նստածը մեր Սուլեյմանն էր: Մեր մոտ շատ կային ադրբեջանցիներ, դարաբաղյան շարժման տարիներին սաղ գնացին»:

Բայց դրանից քիչ առաջ նույն գրուցակիցը ցույց էր տալիս տան առանձին հատվածները, որոնք սարքել

orientations is becoming more valuable today.

It may sometimes seem surprising that the same logical error often occurs in the stories - the story about the joint past is metonymized.

“This kindergarten is located next to the Vernissage market. Many children from Firdus went there. Here, below on the left, is our Suleiman. We had many Azerbaijanis here, they all left during the Karabakh movement”.

But shortly before this, the same narrator showed separate parts of the house built by her grandfather on the land bought from a local Azerbaijani in the early 1920s, that is, in the middle of the twentieth century no Azerbaijanis lived in this house or next door.

Memory often compresses the historical narrative and condenses the long storyline of the past in an attempt to actualize it, to tell everything close to the life ‘here and now’. Not only Firdusians remember the fact that Azerbaijanis lived here, but also residents of the other parts of the city, who sometimes assume that the departure of the Muslim population is a one-time process related to the outbreak of the Karabakh conflict. In fact, archival data show that until the 1930s, most of the population of Firdus was indeed Azerbaijani, but by 1970 only few families lived there, who were forced to leave Armenia due to the onset of territorial and inter-ethnic conflicts.

Memory in Firdus is diverse, it is interesting for its non-monolithic polyphony. By the 1950s, there were just over 50 houses here. And only by the end of the 1980s, there were already 80 numerated addresses. Despite this fact, until the mid-twentieth century, the actual number of people living here significantly exceeded the number of addresses. A single family rarely owned a whole house, since its parts or even rooms were often used by several families. People speaking different languages, bearing different names and surnames shared the life in both sides of thin straw walls. Firdus was composed of this mosaic of rooms and buildings. If the memory about the place varies, then the memory of the place is more stable. Today, no Azerbaijanis and Iranians live in small outbuildings in Firdusi Street, but in the courtyards it is possible to meet Hindu and

էր իր մեծ հայրը՝ գնելով հողը տեղի աղքեշանցուց դէռ 1920-ականներին: Այսինքն՝ այն տանը և հարևանությամբ 20-րդ դարակեսին աղքեշանցիներ արդէն չէին ապրում:

Հիշողությունը հաճախ սեղմում է պատմական պատումը, ճշում և խտացնում է անցյալի երկար սյուժետային գիծը, փորձում է արդիականացնել և պատմել ամեն ինչ ավելի մոտեցրած ընթացող կյանքի «այստեղ ու հիմա»-ին: Այն, որ այստեղ աղքեշանցիներ են ապրել, հիշում են ոչ միայն ֆիրդուսցիները, այլև քաղաքի այլ շրջանների բնակիչները, որոնք նույնպես պատկերացնում են մահմեդական բնակչության հետևանալը որպես միաժամանակյա ընթացք՝ կապված դարաբաղյան հականարտության սկզբի հետ: Մինչդեռ արխիվային տվյալների համաձայն՝ Ֆիրդուսի բնակչության մեծամասնությունը մինչև 1930-ականներն իսկապես աղքեշանցիներ էին, սակայն 1970-ականների դրությամբ այնտեղ մնացել էին ընդամենը մի քանի ընտանիքներ, որոնք էլ ստիպված էին լքել Հայաստանը տարածքային ու ազգամիջյան սրված հականարտության պատճառով:

Ֆիրդուսում հիշողությունը տարբեր է, այն հետաքրքիր է իր քարացած չլինելով, բազմաձայնությամբ: 1950-ականների դրությամբ այստեղ կար շուրջ 50 տուն, իսկ 1980-ականների ավարտին հասցեավորված էր 80 տուն: Չնայած դրան՝ 20-րդ դարակեսին այստեղ ապրող մարդկանց թվաքանակը գերազանցում էր հասցեների թիվը: Տոնը հազվադեպ էր պատկանում առանձին ընտանիքի. տան հատվածներն ու անգամ սենյակները կիսում էին տարբեր ընտանիքներ: Բարակ ծղոտե պատերով առանձնացած՝ այնտեղ ապրում էին մարդիկ, որոնք խոսում էին տարբեր լեզուներով, ունեին տարբեր անուն-ազգանուններ: Ֆիրդուսը հավաքվում էր այդ սենյակների ու շինությունների խճանկարից: Եվ եթե կարող են լինել տարբեր, ապա տեղի հիշողությունն ավելի կայուն է: Այսօր, երբ աղքեշանցիներն ու իրանցիները լքել են փոքրիկ շինությունները, ֆիրդուսցիների բակ մտնելիս կարելի է հանդիպել հնդիկների ու պակիստանցիների, որոնք ցածր վարձավճարով ապրում են այդ սենյակներում: Շուկայի՝ տուն չունեցող որոշ աշխատողներ նույնպես ապրում են այստեղ վարձով: Եթե պատահաբար մտնեք փողոցի մեջտեղի տներից մեկը, ապա կարելի է հանդիպել գրեթե հովվերգական տեսարանի. հնդիկները ծածկ են սարքում այգու մեջտեղում, շուկայի աշխատողները



Pakistani people who rent cheap rooms here. Some of the workers of the market who do not own a house, also rent a room here. Accidentally entering one of the houses in the middle of the street, one can see almost an idyllic scene: the Hindus are building a hut in the center of the garden, market workers dine around table in the summer terrace, and the owners are engaged in gardening.

In the historical perspective, the ability of this piece of land to accept “others” is realized from completely unexpected sides. Maps of the beginning of the 19th century point Firdus as “a place of various philistine houses that the Persians razed to the ground during the siege to build an esplanade”, a fact that points two important characteristics of the further urban organization of this part of the city. Firstly, these territories were located outside the fortress, that is, out of the space of the official power protected from ‘others’, which again brings them closer to the topos of the chora⁵⁶, that is, to the land of

⁵⁶ Interestingly, Chora, located outside the city-state (Constantinople), was also surrounded by lands occupied by peasants producing food for the center, etc. In modern Istanbul, which is much larger now, the Balat region, where Chora church is located, has changed significantly, but it is also still inhabited mainly by the poor, and the function of hospitality and care is also preserved here, as many refugees from Syria now shelter in the area. On the platonic concept of “chora” as a place of “autochthonousness”, in short, as an inhabited place, see, for example, José M. Zamora, *La Chóra après Platon*,

ճաշում են ամառային պատշգամբում, իսկ տանտերերը բոլորներն են խնամում:

Այս հողի՝ «ուրիշներին» ընդունելու ունակությունը պատմական հետաքննարկում մարմնավորվում է բոլորովին անսպասելի կողմերից: 19-րդ դարասկզբի քարտեզները նշում են «վայր տարբեր բնակելի տների, որոնք պարսիկները հիմնովին ավերել են պաշարման ժամանակ էսպլանադայի կառուցման համար», ինչը ցույց է տալիս քաղաքի այդ հատվածի հետագա քաղաքաշինական կառուցվածքի երկու կարևոր առանձնահատկություն: Նախ և առաջ այդ տարածքները ամրոցից դուրս են, ինչը հերթական անգամ մոտեցրել է նրանց «արգանդի» (chora) տոպոսին⁵⁶՝ մայրական խնամքի հողին, որը կերակրում է ֆալլուսային կենտրոնը⁵⁷: Եվ երկրորդ՝ ակնհայտ է, որ ի տարբերություն քաղաքի այլ հատվածների՝ այստեղի քիչ թե շատ հարթ ռելիեֆն ապահովում էր խիտ բուսականության հետևում թաքնված փոքր տների անտեսանելիությունը և հնարավորություն էր տալիս զբաղվելու հողագործությամբ: Տների հիմնաքարերը շատ խոր թաղված են հողի մեջ, և նկուղային հատվածները խոսում են այն մասին, որ այստեղ ապրել են հողագործությամբ ակտիվորեն զբաղվող մարդիկ, նկուղներում պահել են մթերք ու վարել են տնային տնտեսություն: Ժամանակակից բնակիչների պատմություններն ու արխիվային տվյալները ցույց են

maternal care feeding the phallic center⁵⁷.

Secondly, it is obvious that, unlike other parts of the city, the relief here was more or less flat, ensuring the invisibility of small dwellings hidden behind dense vegetation and making it possible to engage in agriculture. The foundation of the houses that go deep into the earth and fragments of the basement structures indicate that the people living here were actively engaged in farming, stored supplies in cellars and led rural life. Archival data and stories of current residents show that at the beginning of the 20th century, after the years of the Genocide, many families moved here from the cities of the Ottoman Empire, such as Igdir, Erzurum and Van. At that time, the entire quarter was inhabited by the Islamic part of the city's population. The Armenians bought part of their houses and lands, rented their rooms, roofs and basements. For decades, there was an equal number of Armenians and Azerbaijanis in Firdus.

In the middle of the 20th century, this intercultural and peaceful image of cohabitation was gradually disappearing. Some families who moved here in the 1960s were only told that the house belonged to the “Turks”; there were less and less Azerbaijanis living here. In the early 50s, the ethnocultural picture of the region began to be modified by the new decrees of the Soviet authorities⁵⁸. The alignment of the national

⁵⁶ Յետաքրքիր է, որ Կոստանդնուպոլսից դուրս գտնվող «խորա»-ն (chora) նույնպես շրջապատված էր գյուղացիների զբաղեցրած հողերով, որոնց վրա ստեղծվում էր կենտրոնի համար առաջին անհրաժեշտ սնունդը: Ժամանակակից, տասնյակ անգամ ավելի մեծ Ստամբուլի Բալատ թաղամասը, որտեղ հորա եկեղեցին է, բոլորովին այլ տեսք ունի, բայց այնտեղ շարունակում է բնակվել հիմնականում աղքատ խավը, այստեղ պահպանվում է էյուրընկալության ու հոգատարության գործառնությունը, քանի որ այժմ այդ թաղամասում են ապաստանել Սիրիայի փախստականները: «խորա»-ի պլատոնյան՝ որպես «տեղաբնակչության», «շարժման մեջ» տեղի հասկացության, կարճ ասած՝ որպես բնակելի տեղի մասին տե՛ս, օրինակ՝ José M. Zamora, La Chóra après Platon, dans Dokic, Jérôme. Symboliques et dynamiques de l'espace. Publications de l'Université de Rouen, 2003, էջեր 15-34: Յուլիա Կրիստևան հանգամանակից ուսումնասիրել է «խորա»-ն որպես Նշանաբանական հոգաճության տարածություն, տե՛ս նրա վաղ շրջանի Նշանաբանական աշխատությունները:

⁵⁷ Ֆիդոդյան մայրության տոպոսի հետ համեմատելուց զատ կարևոր է նշել տարածության հանդեպ հոգաճության փաստը, հոգաճություն, որ 1990-ականներին իրենց վրա էին վերցրել հիմնականում կանայք: Այս մասին տե՛ս Սոնա Զալանթարյանի հոդվածը սույն գրքում:

dans Dokic, Jérôme. Symboliques et dynamiques de l'espace. Publications de l'Université de Rouen, 2003. pp. 15-34. Choir as a semiotic care space was actively studied by Yu. Kristeva, see her earlier semiotic texts.

⁵⁷ In addition to comparing Firdus with the topos of motherhood, it is important to note the fact of caring for a place that women have mostly undertaken since the 1990s. See the article by Sona Kalantaryan in this edition.

⁵⁸ In 1948, Stalin signed a decree on the “resettlement of collective farmers and other Azerbaijani people from the Armenian SSR to the Kura-Araks lowland of the Azerbaijan SSR”. According to some historians, the Azerbaijani population was deported from Armenia in order to accept Armenian repatriates in their place. For several reasons, it is difficult to restore accurate data today: 1) a part of Azerbaijani families lived here, but were not officially registered; 2) they are not on the lists of the deportees, as there were no court sentences, arrests, etc., since the Stalinist project was presented as a “relocation” within one state (USSR); 3) The fact of the change of surnames by some Azerbaijani families remains unconfirmed. This is indicated by the locals, but I could not find a special study on this subject. In any case, until the mid-30s, more than 130 people of Azerbaijani nationality lived in the street. By the 1970s, only a few



տալիս, որ 20-րդ դարասկզբին՝ Ցեղասպանությունից հետո, Օսմանյան Կայսրության քաղաքներից այստեղ ապաստան են գտել ընտանիքներ Իզմիրից, Կարինից, Վանից: Այդ շրջանում ամբողջ թաղամասը բնակեցված էր քաղաքի մահմեդականներով: Հայերը նրանցից գնում էին տուն, հող, վարձակալում սենյակներ, տանիքներ ու նկուղներ: Տասնամյակներ շարունակ այստեղ հայերն ու ադրբեջանցիներն ապրել են գրեթե հավասար թվով:

Ամենայն հավանականությամբ, արդեն իսկ 20-րդ դարի կեսերին այս միջնակության խաղաղ համակեցությունը անցյալ էր դառնում: 1960-ականներին այստեղ տեղափոխված ընտանիքներն արդեն միայն պատմություններով գիտեին, որ սա «թուրքի» տուն է. ադրբեջանցիներն աստիճանաբար հեռանում էին: 1950-ականներին խորհրդային իշխանության նոր հրամաններով⁵⁸ էթնովակության պատկերը սկսվեց փոփոխվել: Անդրկովկասյան քաղաքների ազգային համահարթեցումը⁵⁹ բերեց նրան, որ

⁵⁸ 1948 թվականին Ստալինը ստորագրեց «Կոլտնտեսականների և այլ ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ-ի Բուռ-Արաքսյան հարթավայր» հրամանը: Պատմաբանների վարկածներով ադրբեջանական բնակչությունը արտաքսվեց Հայաստանից, որպեսզի նրանց փոխարեն երկիրն ընդունի հայրենադարձներին: Մի շարք պատճառներով այսօր դժվար է վերականգնել հստակ տվյալները: 1) Ադրբեջանական ընտանիքներն ապրում էին այստեղ, բայց գրանցված չէին պաշտոնապես: 2) Արտաքսվածների ցուցակում նրանք չկան, քանի որ դատական գործընթացներ՝ ձերբակալություն և այլն, տեղի չեն ունեցել, քանի որ ստալինյան Նախագիծը ներկայացվում էր որպես «վերաբնակեցում» մեկ պետության տարածքում (ԽՍՀՄ): 3) Հաստատված չէ փաստը որոշ ադրբեջանցի ընտանիքների ազգականափոխության վերաբերյալ: Այդ մասին ասում են տեղի բնակիչները, բայց որևէ ուսումնասիրություն այս թեմայով ես չգտա: Ամեն դեպքում ակնհայտ փաստ է, որ մինչև 1930-ականների կեսերը փողոցում բնակվել է ադրբեջանական ծագումով ավելի քան 130 մարդ, իսկ 1970-ի դրությամբ մնացել են մի քանի ընտանիք, այսինքն՝ ադրբեջանցիները մեծ մասամբ արդեն գնացել կամ արտաքսվել էին այստեղից:

⁵⁹ Խորհրդային շրջանում կովկասյան հանրապետությունների քաղաքային տարածությունների համահարթեցումն ու ոճական միօրինակությունը գրեթե մշտապես ուղեկցվում էին այդ քաղաքների ազգային համահարթեցումներով: Հավանաբար էթնիկական միօրինականացման և ազգային մոնոլիտության ամենադժան համահարթեցումները խորհրդային ճշշումներն էին՝ Վրաստանի մայրաքաղաքի ազգային համայնքների հանդեպ: Այստեղ, սկսած 1930-ականներից, ակտիվորեն ջնջվում էր մեծ բազմամշակութային քաղաքի հիշողությունը: Հավասար

image of Transcaucasian cities⁵⁹ led to the fact that long before the 'Sumgayit events' and the Karabakh conflict, the housing exchange between Armenians and Azerbaijanis was carried out regularly. If in the 1980s the residents themselves found those who were ready to exchange housing with them, then in the 1950s these were resettlements to fixed places by the order of the Soviet authorities. One of the residents says:

"I was born in 1944. In the early 1950s, I was a child, and I remember many Azerbaijanis among my friends. When they were about to leave, the whole yard wept, they also cried and did not want to go."

One of the elderly local women repeats the same episode, adding:

"They were evicting Azerbaijanis from here, as if they were giving houses to those Armenians who had repatriated to the Soviet Union. But even they did not live here, since everyone was exiled to the Siberia. These decisions of the Union were not good for anyone."

Firdus was in a constant change, however, it remained a refuge for "others". It is difficult to recover exact data of resettlements as during the Second World War and after war period many archives suffered, some were never formed, people changed their surnames, etc., but the same Firdus resident confirms the official data with her story:

"... By the 1980s, there were only three Azerbaijani families left, one of them lived at the beginning of the street in the odd side, the other family lived here in Alaverdyan Street..."

families remained, that is, most of the Azerbaijani population had already left or been deported from here.

⁵⁹ In the Soviet times, the stylistic homogeneity of the urban space of the Caucasian republics was almost always accompanied by the leveling of the national image. Probably the most rigid type of leveling ethnic unity and the monolithic nature of the nation became repression against national groups in the capital of Georgia, where the memory of a large multicultural city has been actively erased since the 1930s. Behind the smooth lines of the streets there were people of completely different social, ethnic and religious backgrounds. In the case of Yerevan, Firdus remains one of the monuments of the experience of living together. It was also constantly destroyed by the Soviet politics and was interrupted due to the outbreak of the Karabakh conflict. See more about the Soviet repression between 1934 and 1950 in Tbilisi (demolition of a large Armenian cemetery, a Muslim cemetery and other places of memory under the pretext of landscaping, urbanization, etc.) Amiryany, Tigran, Kukia Alphabet, GeoAir, Tbilisi 2017.

տների պարբերական փոխանակումը տեղի էր ունենում սուբգայիթյան դեպքերից և դարաբաղյան հակամարտությունից շատ առաջ: Եթե 1980-ականներին հենց ընտանիքներն էին գտնում նրանց, ովքեր պատրաստ էին տուն փոխանակելու, ապա 1950-ականներին դրանք խորհրդային իշխանության որոշմամբ հստակ վերաբնակեցումներ էին հստակ տարածքներում: Բնակիչներից մեկը պատմում է.

«Ես 1944-ին եմ ծնվել, 50-ականներին երեխա էի, հիշում եմ, որ աղբբեջանցի ընկերներ ունեի: Երբ իրանց տարան, մենք սաղ թաղով լացում էինք, իրանք էլ էին լացում, չէին ուզում գնային»:

Տեղի տարեց բնակիչներից մեկը կրկնում է նույն դրվագը և հավելում.

«Աղբբեջանցիներին հանում էին ստեղից, որ իբր տները տան էն հայերին, որ հետ են եկել Սովետություն: Բայց իրանք էլ տենց էլ ստեղ չապրեցին, Սիբիր էին աքսորում բոլորին: Էդ Սովետի հրամանները ոչ մեկի համար էլ լավ չէին»:

Ֆիրդուսը փոխվում էր, բայց շարունակում էր ապաստան դառնալ «ուրիշների» համար: Դժվար է վերականգնել հստակ տվյալներ. պատերազմի տարիներին մարդիկ փոխել են ազգանունները և այլն, բայց Ֆիրդուսի բնակիչը հաստատում է պաշտոնական տվյալներն իր պատմությամբ. «80-ականներին փողոցում երեք աղբբեջանցի ընտանիք էր մնացել: Մեկի տունը փողոցի էն կողմում էր, էն մեկն էլ էս՝ Ալավերդյանի կողմերն էր ապրում...»:

Վերջինը այստեղից հեռացավ Կաֆարովների ընտանիքը: Գրեթե բոլոր բնակիչները հիշում են Կաֆարովների տղային, որը «Կոմունիստ» թերթի խմբագրի վարորդն էր:

«Երևի 90 թիվն էր, տեսա փողոցում, հարցնում եմ՝ ինչի եք գնում, ո՞վ ա ստեղ ձեզ նեղացնում: Ասեց՝ եղբայր, չեն նեղացնում, բայց երեխեքիս ապագայի մասին եմ մտածում, էսօր չեն նեղացնում, վաղը կարան նեղացնեն»:

Որքան հեռանում ենք պատերազմի ծանր

գծով փողոցներում ապրում էին տարբեր սոցիալական, էթնիկական ու կրոնական պատկանելության մարդիկ: Ֆիրդուսը համատեղ կյանքի փորձառության բազմաթիվ հուշարձաններից մեկն է, որը շարունակ վնասվել է խորհրդային քաղաքականությամբ և ընդհատվել դարաբաղյան հակամարտությամբ: Թբիլիսիում 1934-1950 թթ. խորհրդային բռնաճշումների մասին (հայկական և մահմեդական գերեզմանների և այլ իշխողության վայրերի ապամոնտաժում՝ կանաչապատման և ուրբանացման պատրվակով և այլն) տե՛ս Amiryan Tigran, Kukia Alphabet, GeoAir, Tbilisi, 2017:

The Kafarov family were the last to leave the street. Almost all residents remember the young Kafarov, who was the editor's driver working in the "Komunist" newspaper.

"It was probably in 1990, I saw him in the street and asked: "Why are you leaving, who is offending you here?" And he answered: "Brother, they do not offend me, but I think about the future of my children. Not today but tomorrow they may be offended."

Now it is easier for the local residents to remember the peaceful life before the conflict, since the difficult years of war seem far away, although they are often not sure of their own voice and do not understand how their experience can be interpreted, and what will happen tomorrow at the border.

"Sophia and her sons left in the 80s after the Sumgayit events. Her husband was a great guy, my friend. The children studied at the university in Baku, but they spent all the holidays here, their home was here. They exchanged their house with the Armenians living in Baku and left. It is hard to forget that day. The guys were crying so hard, Sophia did not cry, but the guys really didn't want to leave."

Closer to the beginning of the street, the voices of the inhabitants recall the 1980s:

"In our house there is nothing interesting to write about. Yes, before the renovation on the walls of the basement there were paintings that their son had probably made. They exchanged their house with the residents of Baku or sold it to them, but we already bought it from Armenians. I remember Azerbaijanis here, then our street was a big family. We all communicated very closely, no one cared about who was Azerbaijani or Armenian, we just lived together."

The departure of the Muslim population is a serious blow to the living organism of the community, which is formed here naturally and independently of political orientations. However, no matter how much the locals differ from the rest of the townspeople living in the center, it is no longer possible to restore the old model of tightly interconnected family and neighborhood communications. The same Firdusian reflects:

"...You know, people used to have more humanity, and we were more friendly. This market





տարիներից, այնքան տեղացիների համար ավելի հեշտ է հիշել խաղաղ կյանքը հակամարտությունից առաջ, չնայած հաճախ նրանք վստահ չեն իրենց սեփական ձայնի հանդեպ, քանի որ չեն հասկանում, թե ինչպես է վերամեկնաբանվելու իրենց փորձառությունը, ինչ է սպասվում վաղը սահմանին.

«Սոֆյան տղաների հետ գնաց 80-ականներին, Սոււզայիթի դեպքերից հետո: Ամուսինը շատ լավ տղա էր, իմ ընկերն էր, երեխեքը Բաքվի համալսարանում էին սովորում, բայց արձակուրդներին միշտ ստեղ էին գալիս, իրանց տունը ստեղ էր: Հետո Բաքվում ապրող հայերի հետ տներով փոխանակվեցին, գնացին: Էդ օրը չեմ մոռանա: Երեխեքը նենց էին լացում, բայց Սոֆյան չէր լացում: Երեխեքը չէին ուզում գնային»:

Տիգրան Մեծի պողոտայի մոտակայքում նորից բնակիչների ձայները վերադառնում են 1980-ականներ.

«Մեր տանը գրելու համար հետաքրքիր բան չկա: Բայց մինչև ռեմոնտը պաղվալում գրաֆիտիի նման բաներ կային, որ իրանց տղեն էր արել: Հետո բաքվեցիների հետ տներով փոխանակվել են կամ ծախել, բայց մենք էս տունը հայերից ենք առել: Հիշում եմ ստեղի աղբբեջանցիներին, էս ժամանակ մի մեծ ընտանիքի պես էինք ապրում, շատ էինք շփվում, աղբբեջանցի, հայ չէինք ճանաչում, ուղղակի ապրում էինք իրար հետ»:

Մահմեդական բնակչության հեռանալը լուրջ հարված է հասցնում կենդանի օրգանիզմին ու համայնքին, որը ձևավորվում է բնականորեն և քաղաքական կողմնորոշումներից անկախ: Որքան էլ այստեղի մարդիկ տարբերվեն կենտրոնաբնակ մյուս քաղաքացիներից, ընտանիքների ու հարևանների հետ ակտիվ հաղորդակցվելու նախկին մոդելն անհնար է վերականգնել: Նույն ֆիդոյուցին ունի իր հիմնավորումները.

«... Գիտեք, առաջ ավելի մարդկային էր, ավելի մոտիկ էինք իրար, էս շուկան սաղ փոխեց: Համ էլ էս Բաքվից եկած հայերը մեր նման չէին, աղբբեջանցիների հետ ավելի շատ էինք շփվում, բաքվեցիների հետ դժվար էր: Հա, հասկանում եմ, թողել էին իրանց լավ տները, ու մեր փողոցը իրանց համար ավելի վատն էր, բայց դե...»:

Այստեղ հասկանալի է դառնում, որ գրավոր խոսքը պատմական կամ քաղաքական մակարդակում բացարձակապես անտարբեր է տեղի և այն բնակեցնողների հանդեպ: Պատմական խոսույթը

has somehow changed everything. And then the Armenians who moved here from Baku were different. We communicated with Azerbaijanis more, with Bakinians it was difficult. I understand that they had to leave good housing there, and our street seemed far worse to them but still...”

Now it is clear that the historical or political letter is completely indifferent to the place and to those who inhabit these places. Historical discourse is a document of the past. Memory, as it is known, is a part of the present⁶⁰. Memory continues to live and be a manifestation of life itself. If the majority of the houses in Firdusi Street testify to the memory of the peaceful cohabitation of Armenians and Azerbaijanis before the outbreak of the Karabakh conflict, and if the experience of living together remains in the memory of people who, after decades, are given to the flow of everyday life and often - in the natural process of forgetting – submerge the scraps of memory of “other” past, the past with others, then behind some doors the everyday life itself is an active memory or a continuation of the memory of the joint past, of the idiorhythm that was suddenly interrupted⁶¹.

One of the local residents is returning home with heavy bags and workers in the market run up to help her bring her purchases. At some point, they sit down near the shopping pavilion and start chatting. Such scenes of the confluence of two streams of daily life in Firdus could be almost always be observed during the last 30 years. Suddenly, the loud voice of an eighty-year-old woman interrupts the hum of cooing and laughter, and addresses someone who has just joined the group of women: “Yes, after all I am a native-born

⁶⁰ Nora, Pierre. Les lieux de mémoire. Edited by Éditions Gallimard. Vol. 3. Paris: Gallimard, 1997.

⁶¹ The small and simple rooms of the house in which polyethnic families live, and their separate (family) and common (collective) life in this neighborhood, which is separated from the turmoil of the city center, often leads to a comparison of the Barthian idiorhythmic life. Barthes, Roland. Comment vivre ensemble. Cours et séminaires au Collège de France (1976-1977). Le Seuil, 2015. In the context of apartment buildings in Soviet cities and the evolution of communal housing from early to late Soviet period, “living together” obviously requires a separate study, and here the Barthian concept and methodology can serve as a serious basis for similar studies in the future.

անցյալի փաստաթուղթ է: Հիշողությունը, ինչպես հայտնի է, ներկայի մասնիկն է⁶⁰: Հիշողությունը շարունակում է ապրել ու լինել հենց կյանքի երևույթ: Եթե Ֆիդդուսի տներից շատերը վկայում են մինչև դարաբաղյան հակամարտությունը հայերի ու աղբբեշանցիների խաղաղ համակեցության հիշողության մասին, եթե համատեղ կենցաղի փորձը մնում է մարդկանց հիշողությունում, և եթե նրանք տասնամյակներ անց տրվում են առօրեականության հոսքին ու հաճախ խորտակում անցյալի, ուրիշ անցյալի, մյուսների հետ մոռացության բնական ընթացքի մեջ գտնվող անցյալի հիշողության այդ բեկորները, ապա որոշ դոնների հետևում հենց առօրեականությունն է ակտիվ հիշողությունը կամ համատեղ անցյալի, այն ինքնակարգավորման⁶¹ մասին հիշողության շարունակությունը, որն անսպասելիորեն ընդհատվել է:

Տեղի բնակիչներից մեկը տուն է վերադառնում ծանր տոպրակներով: Շուկայում աշխատող կանայք վազում են ընդառաջ, որ օգնեն, և ահա բոլորը միասին նստում են տաղավարներից մեկի մոտ ու սկսում զրուցել: Ֆիդդուսում առօրեականության երկու հոսքերի ձուլման այսպիսի տեսարաններ հաճախ կարելի է տեսնել վերջին 30 տարում: Հանկարծ կանանց քչիչոցի ու ծիծաղի միջից լսվում է ութսունամյա կնոջ զրնգուն ձայնը. նա փողոցում զրուցում է ընկերուհիների ու շուկայի աշխատողների հետ և խմբին նորից միացողներից մեկին ասում՝ «ես դե արմատներով Բաքվից եմ, չէ՞»: Մի երկրի մայրաքաղաքի հենց սրտում մյուս երկրի մայրաքաղաքի մասին հնչող այս ձևակերպումն ասես ստեղծում է կենդանի սինեկդոխ, կյանքի բաբախող խոսույթ, որ միավորում է երկու տարբեր վայրերը



Bakinian”. Uttered in the very heart of the capital of one state, about the capital of the other state, this phrase alone creates a living synecdoche, the pulsating discourse of life, connecting two different places in one memory, a memory that is subjected to narration and articulation. The woman lives against the shopping pavilion, where she rests over a conversation, having made a long way with packages that are almost not bearable for her aging and fragile body. Her house is a kind of palimpsest of a series of tragic events, each of which is frozen in stones, furniture and clothes, but somehow continues to live and pronounce here and now. She is one of those Armenians who after the Sumgayit events in Azerbaijan in the late 1980s peacefully exchanged her house with ethnic Azerbaijanis, moved to Armenia and found her new home here. She tells how they had to stand for hours at the post office in Baku leafing through

⁶⁰ Sté u Nora Pierre, *Les lieux de mémoire*. Edited by Éditions Gallimard, Vol. 3. Paris: Gallimard, 1997:

⁶¹ Տան փողոց, իրենց պարզության մեջ գրեթե միանման սենյակները՝ բնակեցված բազմազգ ընտանիքներով, նրանց միաժամանակ տարբեր (ընտանեկան) և ընդհանուր (կոլեկտիվ) կյանքն այդ թաղամասում՝ կտրված քաղաքի աղմուկից, հաճախ համեմատելի է բարտյան ինքնակարգավորման հետ: Sté u Barthes, Roland, *Comment vivre ensemble, Cours et séminaires au Collège de France (1976-1977)*. Le Seuil, 2015: Խորհրդային քաղաքների բազմաբնակարան տների «միասին կյանք»-ը և վաղ խորհրդայինից մինչև ուշ խորհրդային շրջանի կոմունալ բնակարանների էվոլյուցիան ակնհայտորեն կարիք ունեն առանձին ուսումնասիրության, և բարտյան հայեցակարգն ու մեթոդաբանությունը բավական լուրջ հիմք են տրամադրում հետազայում նման հետազոտության համար:

մեկ հիշողությունում, որը ենթակա է պատմվելու և արտահայտման:

Առևտրային տաղավարում գրուցող ու հանգստացող կինն ապրում է հենց դրա դիմաց: Երկար ճանապարհ է անցել ծանր տոպրակներով բեռնված նրա ծերացող ու փխրուն մարմինը: Նրա տունը յուրատեսակ կրկնագիր ձեռագիր է, որում ողբերգական իրադարձություններից ամեն մեկը սառել է քարերի, կահույքի, հագուստի վրա, բայց շարունակում է ապրել ու խոսել այստեղ ու հիմա: Նա մեկն է այն կանանցից, որոնք Ադրբեջանում 1980-ականների վերջում սումգայիթյան դեպքերից հետո տեղափոխվեցին Հայաստան և այստեղ գտան նոր տուն՝ խաղաղ փոխանակելով այն էթնիկ ադրբեջանցիների հետ: Կինը պատմում է, թե ինչպես էին ժամերով կանգնում Բաքվի փոստի բաժանմունքում ու թերթում տեղեկատուները՝ զանգելով այդ ժամանակ Երևանում ապրող անձանդներին:

«Առաջ ոչ կապ կար նորմալ, ոչ մի բան, մենք ուղղակի հեռախոսի գրքից պատահական համարներ էինք ընտրում ադրբեջանական ազգանուններով ու զանգում, է՛ն հույսով, որ կստացվի փոխանակվել տներով: Նենց ընտիր տուն եմ թողել է՛ստեղ, Կոմիտասի նման փողոց էր, սիրուն բալկոններ ունեինք, բարձր պատալոկներով...»:

Այսօր նրան և նրա տղաներից մեկին է պատկանում այս մի քանի սենյակ ու շատ բարձր առաստաղով, դռների ու պատուհանների նեղ բացվածքներով տունը: Սենյակներից մեկը՝ դեղինով պատտառապատված և ժամանակակից տան համար անսովոր, պատերի մեջ փորված պահարաններով, գրեթե դատարկ է. արևի վառ ճառագայթները նրբագեղ կամարային բացվածքով սենյակի դռան միջով ընկնում են սենյակում դրված միակ կահույքի՝ մեկտեղանի մետաղյա մահճակալի վրա, որը կնոջ ընտանիքը իր հետ բերել էր Բաքվից: Նախկինում սենյակները վարձով էին տրվում շուկայում առևտրով զբաղվող իրանցիներին: Այժմ վարձակալները մեկնել են, և արդեն քանի տարի շուկայի ավերումից հետո տան այս հատվածը դատարկ է: Տան հետևի հողամասը զարնանը ծածկվում է անմշակ կանաչով, դրա փոխարեն նախկինում ծաղիկների շարքեր էին, որոնք կինն աճեցնում էր իր և իր հարազատների համար:

Այս փոքրիկ հողամասը տան և դարպասի միջև է, իսկ դարպասի հետևում՝ քանդված տների տեղում, մի քանի տարի առաջ քաղաքի իշխանության թույլտվությամբ փորվել է հերթական նորակառույցի

the pages of the phone books and calling around to strangers living in Yerevan at that time.

“At that time there was no special service, no devices, we almost randomly chose numbers next to which we saw Azerbaijani names, and called them in the hope that we could agree on an exchange. I left a beautiful apartment that was located in a place like Komitas Avenue. We had such nice balconies, high ceilings ...”.

Now she and one of her sons own this house with several rooms and extremely high ceilings, narrow door and window openings. One of the rooms, decorated with yellow wallpaper and built-in wardrobes, unusual for modern buildings, is practically empty. Through the elegantly arched doorway, bright sunshine falls on the only furniture here, a metal single bed that her family brought from Baku. Previously, these rooms were leased to Iranians trading in the market, but now the tenants have left, and for several years, after the destruction of the market, this part of the house is empty. In the spring, her small garden plot behind the house chaotically overgrows with grass, in the place of well-groomed rows of flowers that the woman grew for herself and her intimates. This small garden plot is sandwiched between the house and the metal fence, behind which the developers, with the consent of the city authorities, demolished the house several years ago and dug a foundation pit for a new building. Construction projects were just launching, but they took away houses and land from the residents, rummaged them and left only empty pits. This went on for more than a decade. Now this woman's house, like many other houses on the odd side of Firdusi, exist almost over a cliff. The condition of the house is as fragile as the floor, on which the family members walk every day. Below is the basement, which served as the main dwelling for the former owners. This half-stone and half-earthen structure with a cone-shaped roof and small square windows, reminiscent of the structure of the late 18th and early 19th centuries, served as a home for the Azerbaijani family. After the exchange, the woman's family began to strengthen the house, and this basement became just a cellar, on the wooden beams and columns of which the floor of the upper structure stands on.



հիմնափուլը: Շինարարական նախագծերը սկսվում էին, ու բնակիչներից խլվում էին տներն ու բակերը, իսկ հետո փորվում ու լքվում էին հիմնափուսերը: Այդպես շարունակվեց շուրջ մեկ տասնամյակ: Այժմ կնոջ տունը, ինչպես և Ֆիրդուսի փողոցի կենտրոնով բազմաթիվ տներ հայտնվել են գաղիվայրին: Տան ինժեներական վիճակը նույնքան փխրուն է, որքան փխրուն ու երերուն է տան հատակը, որի վրայով ամեն օր քայլում են բնակիչները: Ներքևում նկուղն է, որը նախկին տանտերերի հիմնական բնակատեղին էր: Մասամբ քարից և մասամբ հողից կառուցված, կոնաձև տանիքով ու փոքր քառակուսի պատուհաններով այս նկուղը, որը հիշեցնում է 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի շինությունները, որպես տուն է ծառայել աղբբեջանական ընտանիքին: Փոխանակումից հետո կնոջ ընտանիքը սկսել է ամրացնել տունը, և այս նկուղային հատվածը մնացել է որպես մառան. դրա փայտե չորսուների և սյուների վրա է պահվում վերնահարկի հատակը:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ

Ֆիրդուսի փողոցում ոչ մի հուշարձան չկա: Չկան պաշտոնական հաստատություններ: Միակ ոչ բնակելի տունը մինչև 1980-ականները⁶² գործող մսուր-մանկապարտեզն էր, բայց այն ի գործու չէր պահպանելու իր պաշտոնական-պետական սահմանները: Ինչպես պատմում են տեղի բնակիչները, համայնքը շարունակ ասիմիլյացիայի էր ենթարկում այն: Մասնավորը շարունակ քայքայման էր ենթարկում ոչ որի չպատկանող պետականը: Չունենալով ոչինչ, որը կարելի է ամրագրել որպես մշակութային կամ ճարտարապետական արժեք, Ֆիրդուսը շրջապատված է կառույցներով, որոնք պաշտոնապես մշակութային հուշարձաններ են քաղաքական իշխանության, երաժշտական դպրոցի և համալսարանի դեպքում՝ գիտելիքի

⁶² 1987-ի տեղեկատվությամբ № 3 մսուր-մանկապարտեզը դեռ նշվում էր Ֆիրդուսի 11 հասցեում, բայց նշված է Սպանդարյանի շրջանում (Ереван. Телефонный и адресный справочник (по состоянию на 1 января 1987 г.), Ереван, «Айастан», 1987, էջ 402: Մանկապարտեզը փակվել էր վերակառուցման պատճառով և գալիք «մութ տարիների» պատճառով այդպես էլ չվերաբացվեց, աստիճանաբար ավերվեց ու մնաց ավերակի տեսքով: Նույն տեղեկատվությամբ (էջ 189) հիշատակվում է № 6 ունիվերսալը (տրիկոտաժ) Յոկտեմբերյան պողոտայում՝ Ֆիրդուսի փողոցի անկյունում: Արժե նշել, որ մինչ օրս Ֆիրդուսի և Տիգրան Մեծի անկյունում վաճառում են տեքստիլ, թեև ունիվերսալը վաղուց գոյություն չունի:



MEMORY WITHOUT MEMORIALS

There are no monuments in Firdus. There are no official agencies. The only non-residential building was a nursery and kindergarten, which existed until the 1980s⁶². Even this institution was unable to keep its official / state borders. Stories of the residents show that the nursery was constantly assimilated by the local community. All the time,

⁶² In the Reference book 1987, nursery No. 3 at Firdusi St. 11 continues to be listed, but in the territory of Spandaryan district. Erevan. Telefonny'j i adresny'j spravochnik (po sostoyaniyu na 1 yanvara 1987 g.). Erevan "Ajastan", 1987. S. 402. The kindergarten was closed for renovation, and did not open anymore due to the "dark years" in the early 1990s. It gradually collapsed and exists now in the form of ruins. In the same Reference book (p. 189) the Univermag (knitwear) No. 6 is listed in Hoktemberyan Avenue, the corner of Firdusi Street. It should be noted that until now, at the intersection of Firdusi and Tigran Mets, textile trade is popular, although the Univermag has long since disappeared.



խորհրդանիշներ: Իսկ Ֆիրդուսն արժեքավոր է միայն իր ոչ արժեքավորի հոնտորությամբ, արժեքավորի հիերարխացման բուն սկզբունքներին ուղղված իր ժեստով: Ֆիրդուսի արժեքավորությունը, թվում է, իր տարածական իմաստների արտադրելիության մեջ է⁶³, որոնք բազմանում են և ունակ են վերարտադրվելու, քանի դեռ կենդանի հիշողությունը դրսից չի ենթարկվել հիշողության կորստի:

Մի քանի տարի առաջ, երբ այս տեքստը դեռ նոր էր մտահղացվում, և ես բանավոր պատմություններ էի հավաքագրում Ֆիրդուսում, կանանցից մեկը, միայն թեթև հիշատակելով, որ նախնիները գնել են տունը «թուրքերից», սկսեց պատմել իրանցիներից ու շուկայից:


«Երբ նոր էկան, տեղացիները տարբեր խանութներ էին առաջարկում Տիգրան Մեծի վրա ու քաղաքի ուրիշ

the private was eating away the state structure since it did not belong to anyone. Having nothing that can be registered as a cultural or architectural value, Firdus is surrounded by buildings that are officially cultural monuments, symbols of political power or, in the case of the music school and the university, symbols of knowledge. Firdus is valuable only for the rhetoric of the 'non-valuable', since it is a gesture to the very principles of the hierarchy of the "valuable". The value of Firdus seems to be in the creation of spatial values⁶³ that constantly multiply and are able to reproduce, until the living memory will not undergo an amniotic effect caused from the outside. Before this happens, the space of Firdus will reproduce life per se: natural, sometimes chaotic and diverse.

Several years ago, when the idea of this text was first generated, and I collected oral stories in Firdus, one woman, briefly mentioning that at the

⁶³ Լեֆևրի՝ տարածության՝ որպես ապրանքի գաղափարն այստեղ կարելի է կիրառել տարբեր տեսանկյուններից: Մի կողմից՝ առևտրականները, արհեստավորներն ու հողագործները սեփական աշխատանքով, այսինքն՝ ապրանքի արտադրմամբ և դրա փոխանակմամբ ստեղծում էին այդ տեղի տարածական իմաստավորումը: Մյուս կողմից՝ Ֆիրդուսը ոչ միայն ընթերցման ու մեկնաբանման վայր է, պատմություն, այլև հիշողության գրի, պատումայնացման փորձառություն: Այդ իմաստով այսօր այն հայերի ու արդրեջանցիների համատեղ կյանքի հիշողության հիմնանշանակության փորձառություններից մեկն է և արտադրությունը այդ համատեղ տեքստի, որը կարող է օգտագործվել տեղի հանդեպ արտաքին քաղաքական խոսույթի, բայց միաժամանակ հենց տեղացիների կողմից՝ վերագրելու և ակտիվացնելու տեղի հիշողությունը (իրանցիներին, հնդկներին ընդունելու փորձը) (Lefebvre H. La production de l'espace, Paris. Anthropos, 1974):

⁶³ Lefebvre's idea of space as a product can be applied here from different points of view. On the one hand, merchants, craftsmen and farmers created the spatial semiosis of this place by their labor, that is, by producing or exchanging products. On the other hand, this place is not only for reading and interpretation, but also for the narration, the experience of writing and narrativization of memory. In this regard, the memory of the common life of Armenians and Azerbaijanis today is one of the experiences of denotation and production of a joint text, which can be used in external political discourse but at the same time, local people can rewrite it, and activate the memory of the place (the experience of receiving Iranians and Indians). Lefebvre H. La production de l'espace, Paris. Anthropos. 1974.



Փողոցի կենտ կողմի երկհարկանի տներից մեկը վարձակալում են երիտասարդ արվեստագետներ: Նրանք արդեն մի քանի տարի է, ինչ այստեղ զբաղվում են խճանկարչությամբ, դարբնությամբ և քանդակագործությամբ:

One of the two-storey houses on the odd side has been rented for several years by young artists who are engaged in mosaics, forging, and sculpture.

փողոցներում, բայց չէին ուզում: Մի պարսիկ տնեց
էլ ասեց՝ ուրիշ տեղերում սենց լավ չի, ոնց էստեղ: Էս
փողոցը պարսիկ գրողի անունով ա: Հնար լիներ, էս
թաղամասը սիրուն կաարքենք, ախր Ֆիրդուսը մերն
ա: Ֆիրդուսի հուշարձան էլ էին ուզում դնելին»:

Պոետի հուշարձանը չկանգնեցվեց, բայց
դրանից հիշողությունը չպակասեց: Միշտ չէ, որ
հուշարձանները կապ ունեն հիշողության, այն է՝
կյանքի հետ: Ֆիրդուսը բնակիչների համար մնում
է ակտիվ փոխազդեցության տարածություն:
Յուրաքանչյուր պատմություն, յուրաքանչյուր
գրույց և ֆիրդուսիների ողջ փորձառությունը
համատեղ գոյության փորձառություն է՝
հայերի ու ադրբեջանցիների, իրանցիների ու
հայերի, առևտրականների ու տեղացիների,
արհեստավորների ու առևտրականների: Այստեղ
հիշողությունը փորագրված չէ գրանիտի կամ
բրոնզի վրա և ապրում է առանց հուշարձանի⁶⁴: Եվ
համագոյակցության վերաբերյալ բոլոր գրույցները՝
քանդված և նորից հավաքված մեկ պատկերում, բոլոր
պատումներն ու կիսաքանդ, բայց ժամանակին դեռ
խիզախորեն դիմադրող տների պատերը Ֆիրդուսին
նվիրված ամենախիսկական հուշարձանն են:

Այս հողվածի ստեղծման ժամանակ Ֆիրդուսի
կարգավիճակն այդքան էլ պարզ չէր. շուկան
պարբերաբար վերականգնում է աշխատանքը, որոշ
տներ արդեն քանդված են, մի քանիսը՝ լքված, բայց
գարնան գալու հետ բնակիչները սկսում են խնամել
այգիները՝ արհամարհելով թաղամասի անհետացման
վտանգը, որն արդեն մեկ դար է՝ կախված է փողոցի
վրա:

beginning of the century her ancestors bought
this house from the “Turks”, began to talk about
Iranians and the market.

“When they first arrived, they were offered
various shops in Tigran Mets and other parts of
the city, but they refused. One Iranian told me
that other places were not as good as this one.
This street was named after an Iranian poet, he
said, if it were possible, we would have made this
neighbourhood beautiful, because Firdus is our
place. They even wanted to erect a monument to
Firdus.”

The monument to the poet was not installed
but the memory was not diminished because of
this. Monuments are not always associated with
memory, that is, with life. Firdus remains a space
of active interaction of residents with each other.
Each story, each conversation and the whole
experience of Firdusi residents is an experience
of being together: Armenians with Azerbaijanis,
Iranians with Armenians, traders with local
residents, craftsmen with merchants. Memory,
not fettered in granite or bronze, not being a
monument, lives here without any memorial⁶⁴.
All the stories about co-being, scattered,
but assembled into one big picture, all these
narrations, all half-ruined but still stubbornly
resisting walls of the houses, all this is a real
monument to Firdus.

While writing this article, Firdus status is not yet
clear. From time to time the market resumes its
work; some houses are already destroyed, others
are abandoned, but by the spring somewhere,
the residents again begin to nurse their gardens,
ignoring the danger of the neighborhood's
disappearance threatening this street for almost a
century.

⁶⁴ Վերնակուլյար ճարտարապետության և «վերնակուլյար
հիշողության» և դիսցիպլինար ճարտարապետության և
հասարակության «դիսցիպլինար հիշողության» հետ դրա
փոխներգործության մասին ավելի մանրամասն տե՛ս
Stanford Anderson, Memory without Monuments: Vernacular
Architecture, Traditional Dwellings and Settlements Review,
vol. 11, No. 1 (1999), էջեր 13-22:

⁶⁴ See more about vernacular architecture, “vernacular memory”
and its interactions with disciplinary architecture and “disciplinary
memory” of society in the work of Stanford Anderson, Memory
without Monuments: Vernacular Architecture. Traditional Dwellings
and Settlements Review, Vol. 11, No. 1 (1999), pp. 13-22.





ՖԻՐԴՈՒՍ. ՇՈՒԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ
Համլետ Մելքումյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆիրդուսի շուկա» կամ «Ֆիրդուսնոց» անունը 1990–2000–ականների քաղաքային առօրյայում տարածվածներից էր: Թե՛ քաղաքաբնակների, թե՛ քաղաքի հետ կապ ունեցող մարզային բնակչության համար այն ընկալվում էր որպես առևտրի վայր, որտեղ ամեն ինչ կար, մասնավորապես հագուստեղեն: 2014–2016–ից այն կրկին մեծ հանրային առօրյայում դարձավ հաճախակի շրջանառվող այն պատճառով, որ Ֆիրդուսի թաղամասը, որտեղ շուկան է, ճանաչվել էր հանրային գերակա շահ և վաճառվել ներդրողներին՝ տարածքի ամբողջական վերակառուցման նպատակով: Թե՛ թաղամասի բնակիչները, թե՛ առևտրականները բողոքի տարբերակցիաներ և ցույցեր արեցին իրենց իրավունքները ոտնահարող այս գործընթացը կանխելու համար¹: Հանրային տարածքների զավթման և ապրանքայնացման այս գործընթացները քաղաքի մարդաբանները և ուրբանիստները համարում են նեոլիբերալ տնտեսական քաղաքականության հետևանք²: Երևանում հանրային տարածքների

¹ Վիրաբյան, Հերմինե. «Ֆիրդուսի» շուկա. Զառոթ դարի պատմություն ունեցող տոնավաճառն ապամոնտաժվում է՝ տեղը նոր հրապարակ կառուցելու նպատակով, 2017: 15.03.2019, <https://bitly.su/soYt> Բոդադյան Նայրա, Բոգոկի ցույցի թաղամասի շենկի չեղման համար, 2017: 15.03.2019, <https://bitly.su/hdEk> «Ֆիրդուսնոց». Հեռացող պատմության վերջին ակնաստեսները, 2017: 03.15.2019, <https://bitly.su/9uLu0s0l>

² Prigge, Walter. "Reading The Urban Revolution." Space, Difference, Everyday Life: Reading Henri Lefebvre, Ed. Kanishka Goonewardena, New York, London: Taylor & Francis: Routledge, 2008: 46–61. Lefebvre, Henri. State, Space, World.

FIRDUS: THE MARKET AND URBAN
MEMORY OF YEREVAN
Hamlet Melkumyan

INTRODUCTION

In the years 1990–2000, the name “Firdus Market” or “Firdusnots” was regularly circulating in the city. Residents of the capital and also people from the regions, considered Firdus a place where they could buy everything, especially clothing. From 2014 to 2016, the Market again became a major theme in everyday life of Yerevan, as the whole Firdus district, including the Market, was recognized as an area of “State priority interest” and was sold to investors for complete reconstruction. The residents of the neighborhood, as well as the retailers, initiated several protest actions and demonstrations in order to prevent the process of violating their basic rights¹.

Urban anthropologists and urbanists claim that the usurpation and productization of public spaces are the result of neoliberal economic policy². The aggressive appropriation of public

¹ Virabyan, Hermine, Firdusi shuka. Qarord dari patmutyun unetsogh tonavacham apamontajvum e teghy nor hrarak karutselu npatakov, 2017: 15.03.2019, <https://bitly.su/soYt> Budaghyan Naira, Boghoki cuyts karavarutyan shenki dimats. Firdusi taratski bnakichnery parzabanumner en pahanjum, 2017: 15.03.2019, <https://bitly.su/hdEk> “Firdusnots”. Heratsogh patmutyan verjin akanatesnery, 2017: 03.15.2019 <https://bitly.su/9uLu0s0l>

² Prigge, Walter. "Reading The Urban Revolution." Space, Difference, Everyday Life: Reading Henri Lefebvre, Ed. Kanishka Goonewardena, New York, London: Taylor & Francis: Routledge, 2008: 46–61. Lefebvre, Henri. State, Space, World. Ed. E. Stuart N. Brenner. Minneapolis–London: University of Minnesota Press, 2009.

ագրեսիվ զավթումը սկսվել է դեռևս 2000–ականներից³, և միայն 2018 թվականին՝ Թավշյա հեղափոխությունից հետո, նորընտիր ավագանին և քաղաքապետարանը հանրայինը հանրությանը վերադարձնելու նոր քաղաքականություն սկսեցին՝ նշելով, որ «հանրային տարածքը վերականգնելու խնդիր կա»⁴:

Ֆիրդուսի շուկան Տիգրան Մեծի պողոտայի,, Հանրապետության և Արամի փողոցների միջև ընկած առանձնատների թաղամասում է: Շուկան ոչ ֆորմալ փոքր առևտրային տարածք էր, որպիսիք 1990-ականներին ձևավորվել էին քաղաքի վարչական շրջանների հիմնականում կենտրոնական մասերում: Սակայն ամբողջությամբ ետնաբերված տարածքներում ձևավորված լինելու պատճառով այս շուկան տարբերվում էր մյուսներից: Նեղիկ փողոց էր՝ վերափոխված շուկայի: Ժ. Դելյոզի այն ձևակերպումը, թե յուրաքանչյուր քաղաքի մեջ թաքնված է մեկ այլ քաղաք⁵, ինձ հիշեցնում է Ֆիրդուսի թաղամասը: Այն թաքնված էր մնում խորհրդային և հետխորհրդային տարիներին իր շուրջը կառուցված նոր ճարտարապետական պատմեղների և սոցիալական, մշակութային սահմանների մեջ: Ներսը և դուրսը սկսում են ունենալ լիովին տարբեր քաղաքային կենսագրություն և առօրեականություն:

Ֆիրդուսի թաղամասում շուկա սկսել է ձևավորվել 1990-ականներից: Սակայն եթե վաճառողները շուկայի ձևավորման սկիզբը համարում են այդ տարածքում իրենց առաջին անգամ աշխատելու տարին, ապա գնորդները հիշում են շուկան իրենց առաջին անգամ գնումներ կատարելու տարվանից: Տարածքի՝ շուկայի վերափոխման և սկզբի մասին հանրային հիշողությունները միանման չեն, ինչը բնորոշ է այդ

spaces in Yerevan began in the 2000's³, and only after the Velvet revolution in 2018, the newly elected Council of Elders and the City Hall launched a new policy to return the public property to the public, noting that “there is a need to restore the public space”⁴.

The Firdus Market was a small informal trading zone among the others, formed around administrative centers of the city in the 1990s. Located between Tigran Mets Avenue, Hanrapetutyan and Arami Streets, this narrow street named Firdusi turned into an open market and, unlike the others, was completely built up in the territory of the courtyards.

Deleuze notion that each city has a city hidden in itself⁵ can be well applied to the neighborhood of Firdus. In Soviet and post-Soviet times, the Market remained behind new architectural barriers and social-cultural boundaries. Thus, the inner and outer parts of the city had a completely different urban biography and lived a quite different daily life.

The market in Firdus district began to take shape in the 1990s. But if retailers believe that it started to function in the year when they started trading there, the buyers remember the market from the year they first bought goods there. Thus, the collective memory regarding transformation and the initial year of the market may not coincide. This is also characteristic of other informal urban markets that were formed during the 90s, the same applies to the Vernissage Souvenir Market⁶.

In the 2000s, the construction in the Small

Ed. E. Stuard N. Brenner. Minneapolis–London: University of Minnesota Press, 2009.

³ Taalaibekova, Gulniza, and Hamlet Melkumyan. “Public Space Commercialized and Commodified: A Case Study of the Vernissage in Yerevan.” In *Transnational Trade, Trade Routes, and Marketplaces between the Caucasus and Central Asia*, eds. Susanne Fehlings and Hamlet Melkumyan. Tbilisi: Universal, 2018: 48–64.

⁴ Մելքոմյան Գայանե Մելքում. Ինչպես Մաշտոցի պուրակի ժամանակ, այժմ ևս կա հանրային տարածքը վերականգնելու խնդիր. ավագանու անդամ, 2019, <https://bitly.su/spKs>

⁵ Deleuze, Gilles. *The Logic of Sense*. London: The Athlone Press – Columbia University Press, 1990. Frichot, H., Gabrielsson, C., and Metzger, J. *Deleuze and the City*. Edinburgh: Edinburgh University Press, 2016.

³ Taalaibekova, Gulniza, and Hamlet Melkumyan. “Public Space Commercialized and Commodified: A Case Study of the Vernissage in Yerevan.” In *Transnational Trade, Trade Routes, and Marketplaces between the Caucasus and Central Asia*, eds. Susanne Fehlings and Hamlet Melkumyan. Tbilisi: Universal, 2018: 48–64.

⁴ Melkumyan, Gayane Melkom, Member of Council of Elders, Yerevan, “Inchpes Mashtotsi puraki jamanak, ajym evs ka hanrayin taratsky verakangnelu khndir, 2019: <https://bitly.su/spKs>

⁵ Deleuze, Gilles. *The Logic of Sense*. London: The Athlone Press – Columbia University Press, 1990. Frichot, H., Gabrielsson, C., and Metzger, J. *Deleuze and the City*. Edinburgh: Edinburgh University Press, 2016.

⁶ Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” *Working Paper Series on Informal Markets and Trade*: 5, 2018.





«Ֆիրդուս». Արմինե Շահբազյան, 2019 թ.

տարիներին ձևավորված քաղաքային ոչ ֆորմալ այլ շուկաներին ևս: Նույնն է հուշանվերային շուկայի՝ Վերնիսաժի դեպքում⁶:

2000-ականներին Փոքր կենտրոնի կառուցապատման պատճառով Ֆիրդուսի թաղամասը ճանաչվում է հանրային գերակա շահ, որին պետք է հաջորդեր տարածքի օտարումը սեփականատերերից և նոր կառուցապատում սկսելը⁷: 2013–2017 թթ. արդեն սկսվում են տարածքի մասնակի քանդման աշխատանքները, որի պատճառով նախկին հայտնի շուկան ևս հիմնականում փակվում է, իսկ վաճառողները տեղափոխվում են «Սասունցի Դավիթ» կայարանին կից նորակառույց շուկան⁸: 2019-ի ձմռանը դեռևս մի քանի տաղավարներ գործում էին Ֆիրդուսի շուկայում:

Ֆիրդուսի շուկան միջնաշխարհային հանրային տարածք էր, այստեղ համատեղվում էին տարբեր ինքնություն և պատկանելություն ունեցող սոցիալական, կրոնական և էթնիկ բազմաթիվ խմբեր: Լինելով հայտնի առևտրական և միջնաշխարհային հանգույց՝ այն միաժամանակ անհայտ և թաքնված ետնաբակային միջավայր էր:

Մենք առնչվելու ենք նաև քաղաքային, հանրային հիշողությանը, նկատի ունեմ՝ կարևորվելու են ոչ միայն այդ տարածքի ճարտարապետությունը, կառույցները, իրերն ու փաստերը, որոնք պատմում են իրենց ձևավորման ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալական և տնտեսական գերակայությունների և աշխարհընկալումների մասին, այլ նաև առօրյա կյանքը՝ առօրեականությունը, որն ապրվել է այդ քաղաքային միջավայրում⁹:

Քաղաքային տարածքի ապրանքայնացումը և առևտրականացումը հաճախ ուսումնասիրվող

Center of Yerevan was in full swing, and the Firdus district was recognized as a “State Priority Interest” area, which meant that the area had to be subsequently freed from the old owners in order to start a new construction⁷. In 2013–2017, the site underwent a partial deconstruction, the market basically ceased to exist, and retailers moved to the newly built market near the Sasuntsi David Metro Station⁸. In the winter of 2019, there were still few pavilions operating at the Firdus Market.

The Firdus Market was a multicultural public space, combining different identities, different social, religious and ethnic groups. As a well-known commercial and intercultural center, it included, at the same time, an unknown and hidden courtyard environment.

In this paper, I will also discuss the collective urban memory. I will focus not only on the architecture, objects and facts, which tell about political, social and economic priorities and perceptions of their time, but also on everyday life led in this specific urban environment⁹.

The commercialization and productization of urban space is a frequently researched topic¹⁰, and the Firdus Market can serve an example in this sense. I will discuss the Firdus area and its surroundings in the context of the commercialization of urban spaces in the 90s.

⁶ Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” Working Paper Series on Informal Markets and Trade: 5, 2018.

⁷ Երևանի քաղաքապետը հանդիպել է 33-րդ թաղամասի նախկին բնակիչների հետ, 2013: 20. 02. 2019, <https://bitly.su/YsP65>

⁸ Երևանի քաղաքապետարան. Ֆիրդուսի փողոցի առևտրականները կտեղափոխվեն գործող այլ շուկաներ, 2017: 28. 02. 2019, <https://bitly.su/tmAZU4cl>

⁹ Van Dyke, Ruth M. and Alcock, Susan E., “Archaeologies of Memory: An Introduction.” *Archaeologies of Memory*. Ed. Van Dyke Ruth M. and Alcock Susan E. Oxford: Blackwell, 2003: 1–13. Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 17–44. Crinson, Mark. “Urban Memory: An Introduction.” Mark, Crinson. *Urban Memory: History and Amnesia in the Modern City*. London and New York: Routledge, 2005: xi–xxiii.

⁷ Yerevani khaghakapety handipel e 33-rd taghamasi nakhkin bnakichneri het, 2013: 20. 02. 2019, <https://bitly.su/YsP65>

⁸ Yerevani Khaghakapetaran: Firdusi poghotsi arevtrakannery kteghapokhven gortsogh ayl shukaner, 2017: 28. 02. 2019, <https://bitly.su/tmAZU4cl>

⁹ Van Dyke, Ruth M. and Alcock, Susan E., “Archaeologies of Memory: An Introduction.” *Archaeologies of Memory*. Ed. Van Dyke Ruth M. and Alcock Susan E. Oxford: Blackwell, 2003: 1–13. Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 17–44. Crinson, Mark. “Urban Memory: An Introduction.” Mark, Crinson. *Urban Memory: History and Amnesia in the Modern City*. London and New York: Routledge, 2005: xi–xxiii.

¹⁰ Prigge, Walter. “Reading The Urban Revolution”, pp. 46–61. Lefebvre, Henri. *State, Space, World*. 2009.

թեմաներից է¹⁰, և Ֆիրդուսի շուկայի դեպքը նույնպես դիտարկելի է այս տեսանկյունից: Ես քննարկելու եմ Ֆիրդուսի և հարակից թաղամասի, Հանրապետության հրապարակից դեպի «Ռոսիա» կինոթատրոն և Գումի շուկա հատվածների առևտրականացումը 1990-ականներին՝ քաղաքային միջավայրի շուկայականացման համատեքստում:

«ԵԿԵ՛Ք, ՇՈՒԿԱՆ ԲԱՑՈՒՄ ԵՆ».
ՇՈՒԿԱՆ ՈՐՊԵՍ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԵՏՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

Ֆիրդուսի շուկայի ձևավորման մասին այս հետազոտությունը ես սկսեցի 2018-ին¹¹: Շուկայի մուտքը հանրային տրանսպորտի՝ Հանրապետության հրապարակից հեռոտ առաջին կանգառի մոտ է՝ Տիգրան Մեծի և Մելիք-Աղամյան փողոցի խաչմերուկի հարևանությամբ: Դեռ 2000-ականներին շուկայի մուտք համարվող և ետնաբակ տանող նեղլիկ փողոցի սկզբնամասը միշտ բանուկ և դժվարանցանելի էր անընդհատ շարունակվող մարդկանց հոսքից: Մուտքի մոտ վաճառում էին նաև տեխնիկական սարքավորումներ, սնունդ ևն: Այժմ շուկայի մուտքը դժվարությամբ կարելի է ճանաչել, քանի որ այն դատարկ է, չկա առևտրային եռուզեռ: Իսկ շուկայի մասին հիշեցնում են սև տուֆից կառուցված հնաժողովրդի պատին փակցված հատուկ նշանները և դեպի շուկան նայող պատին մարդահասակ բարձրության վրա արված մատնաչափ փորվածքները: Պատի վրայի այդ փորվածքները առաջին հայացքից զարմանալի են թվում: Քանի որ շուկայի մուտքի այդ մասը նեղ է սեղանիկներ կամ տաղավար տեղադրելու համար (3–4 մ), վաճառողները պատին խփած մեխերից են կախել, ցուցադրել վաճառքի ապրանքները կամ հայտարարությունները: Իմ այցելություններից մեկի ժամանակ այդ մեխերից մեկ-երկուսը օգտագործվում էին որպես պայուսակների, գլխարկների կախիչներ: Շենքի վրայի այս փորվածքները նման են հրահրող կետի (trigger), և դրանք նկատողը գուցե հետաքրքրվելով կսկսի Ֆիրդուսի շուկայի առօրեականության մասին հիշողությունների

“COME, THEY AGAIN OPEN THE MARKET!”
MARKET AS A PLACE OF MEMORY AND POST-
MEMORY

I began my research on the formation of the Firdus Market in 2018¹¹.

The so called entrance to the market is in two steps from the bus stop, at the intersection of the Tigran Mets ave. and the Melik Adamyan Street. In the 2000s, the entrance of this narrow street looked very busy and impassable due to the flow of people. At the entrance different technical devices and food was on sale. Now the entrance is hardly recognizable as it is abandoned and there is no turmoil. Only random ads on the black tuff walls and finger-sized holes trace the market. At the first glance, the holes on the wall look weird. Since the entrance was too narrow (3–4 m) for desks or pavilions to install there, traders used walls and displayed their goods or ads attached to nails. During one of my visits, I noticed that nails were still used as hangers for bags and hats. But these holes look like triggers, and if someone becomes interested in them, s/he can “excavate” memories on the daily life of the Firdus Market and engage himself with the archeology of private and public memory¹².

Today, there are only a few clothing stores and outside desks in the Firdus Market. Women venders aline underwears and clothes on the desks, evoking memories of street trading in Yerevan in the 1990s¹³. The 90s were transitional years of extreme poverty in Armenia, as well as in the other post-Soviet countries¹⁴. The street trade was widespread.

¹¹ Thanks to Tigran Amiryany for the invitation to join “Firdus: The Memory of a Place” research program.

¹² Van Dyke, Ruth M. and Alcock, Susan E., “Archaeologies of Memory: An Introduction.” *Archaeologies of Memory*. Ed. Van Dyke Ruth M. and Alcock Susan E. Oxford: Blackwell, 2003: 1–13. Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 17–44. Mark, Crinson. *Urban Memory: History and Amnesia in the Modern City*, 2005.


¹³ Tadevosyan, Aghasi. “The Everyday Life and Cultural Transitions in the Post-Independence Period.” *The Urban Culture of Yerevan*. Yerevan: VEM-Pan Armenian Journal, 2011.

¹⁴ Buehn, Andreas, Alexander Karman and Friedrich Schneider. “Shadow Economy and Do-it-Yourself Activities: The German Case.” *Journal of Institutional and Theoretical Economics* 165(4),

¹⁰ Prigge, Walter. “Reading The Urban Revolution”, pp. 46–61. Lefebvre, Henri. *State, Space, World*. 2009.

¹¹ Շնորհավարություն «Ֆիրդուս. տեղի հիշողությունը» հետազոտական ծրագրի համակարգող Տիգրան Ամիրյանին՝ այս ծրագրին միանալու առաջարկի համար:





Շուկայի հերթական ապամոնտաժմից հետո:

«պեղում»՝ զբաղվելով մասնավոր և հանրային հիշողության հնագիտությամբ¹²:

Շուկայի տարածքում մնացել են մի քանի հագուստի խանութներ և փողոցում տեղադրված սեղանիկներ: Վաճառող կանայք սեղանիկներից դասավորում են վաճառքի ներքնաշորեր և հագուստներ, ինչը արթնացնում է 1990-ականների Երևանի փողոցային առևտրի մասին հիշողություններ¹³: 1990-ականները հետանկախացման տնտեսական ճգնաժամի և ծայրահեղ աղքատության տարիներ էին անցումային Հայաստանում (նաև հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում)¹⁴: Այդ ժամանակաշրջանում մեծ տարածում էր ստացել սեղանիկային առևտուրը. մարդիկ վաճառում էին առօրյա-կենցաղային ապրանքներ, իսկ շատերը՝ նաև իրենց օգտագործման իրերը¹⁵: Այդ պատճառով այժմ Ֆիրդուսի շուկայի սեղանիկային վաճառքը նման է ժամանակի հետընթացի՝ 1990-ականների շուկայի ձևավորման սկզբի վիճակին՝ հիշեցնելով ռետրոպատմություն:

Հինգ առևտրական գնտող հայացքով նայում էին ինձ, ինչպես հետո ասացին՝ փորձելով հասկանալ՝ գնորդ եմ, թե շուկան քանդողներից: Իմանալով, որ

People sold household goods, many sold their own used homestuff¹⁵. And today a trading desk at Firdus Market looks like a setback in time, a return to the situation of formation of street market, and it reminds of a retro history.

A couple of women looked at me, trying – I learned later – to find out I was a buyer or one of the destroyers. When one of them learned that I was interested in the daily life of the Market, she called the others, laughing and looking at me with certain optimism: “Come here, they again open the Market!”. The women selling there were in warm clothes for they were working in the open air, almost on the snow. I asked how they worked in such a cold weather, and they reasoned they had nowhere else to go. One of the women insisted that she was among the “founders” of the Market and imagined no other place to go. Her story began in 1994.

“Come, write about this! I was the first to set a trading desk in Firdus! It was the year of 94, Iranians had just arrived, and there were no garages here, as now. There were only plots and fences around. We were selling hot dogs, made on kerosene fire. Hot dogs ... with an assortment of greens. Yeah...”

The words of interviewee reveal three layers in the history of the market. First, it is her experience and personal participation as she began to sell; her story began in 1994. Secondly, the establishment of the market is associated with the “arrival of Iranians”, which is described as an obvious episode in the social memory. Therefore, she looked at the other traders, while talking about it, without providing any details, believing that I was also informed about this fact. And third, the memory of the

¹² Van Dyke, Ruth M. and Alcock, Susan E., “Archaeologies of Memory: An Introduction.” *Archaeologies of Memory*. Ed. Van Dyke Ruth M. and Alcock Susan E. Oxford: Blackwell, 2003: 1–13. Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 17–44. Mark, Crinson. *Urban Memory: History and Amnesia in the Modern City*, 2005.

¹³ Tadevosyan, Aghasi. “The Everyday Life and Cultural Transitions in the Post-Independence Period.” *The Urban Culture of Yerevan*. Yerevan: VEM-Pan Armenian Journal, 2011.

¹⁴ Buehn, Andreas, Alexander Karmann and Friedrich Schneider. “Shadow Economy and Do-it-Yourself Activities: The German Case.” *Journal of Institutional and Theoretical Economics* 165(4), 2009: 701–722. <https://bitly.su/WWXMu> Humphrey, Caroline and Vera Skvirskaja. “Trading Places: Post-socialist Container Markets and the City.” *Focaal – European Journal of Anthropology* 55, 2009: 61–73. Sike, Endre, and Clarrie Wallace. “Development of open-air Markets in East-Central Europe.” *International Journal of Urban and Regional Research* 23(4), 1999/2008: 697–713. 24. 09. 2018, <https://bitly.su/DljspQ>

¹⁵ Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” Working Paper Series on Informal Markets and Trade 5, 2018. Tadevosyan, Aghasi. “The Everyday Life and Cultural Transitions in the Post-Independence Period.” *The Urban Culture of Yerevan*. Yerevan: VEM-Pan Armenian Journal, 2011.

2009: 701–722. <https://bitly.su/WWXMu> Humphrey, Caroline and Vera Skvirskaja. “Trading Places: Post-socialist Container Markets and the City”. *Focaal – European Journal of Anthropology* 55, 2009: 61–73. Sike, Endre, and Clarrie Wallace. “Development of open-air Markets in East-Central Europe.” *International Journal of Urban and Regional Research* 23(4), 1999/2008: 697–713. 24. 09. 2018, <https://bitly.su/DljspQ>

¹⁵ Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” Working Paper Series on Informal Markets and Trade 5, 2018. Tadevosyan, Aghasi. “The Everyday Life and Cultural Transitions in the Post-Independence Period.” *The Urban Culture of Yerevan*. Yerevan: VEM-Pan Armenian Journal, 2011.

ես հետաքրքրվում եմ շուկայի առօրյայով, կանանցից մեկը, ժայտով, բայց նաև ակնկալիքով նայելով ինձ, մյուսներին կանչեց. «Եկե՛ք, շուկան բացում են»։ Առևտուր անող կանայք փաթաթված էին տաք հագուստներով, քանի որ աշխատում էին բացօթյա և գրեթե ձյան վրա։ Իմ հարցին, թե ինչպես են աշխատում այսպիսի ցրտին, ասացին, որ գնալու ուրիշ տեղ չունեն։ Իսկ նրանցից մեկը շեշտեց, որ ինքը այս շուկայի առաջին աշխատողներից է կամ «հիմնադրողներից մեկը» և չի էլ պատկերացում, որ կգնա այլ տարածք։ Նրա պատմությունը սկսվում է 1994-ից.

«Ֆիրդուսի ամենասկզբի սեղանիկ դնողը ես եմ եղել, եկեք գրեք։ [19]94-ին, որ սոր եկել էին պարսիկները, հլա էս գարաժները չկար։ Լրիվ հողամասեր ու ցանկապատեր էին։ Բան էինք ծախում մենք՝ հոթողկ, նավթի կերասիներով [կերասիների վրա]։ Հոթ դոկ... կանաչիների տեսականին դրած։ Էէհ...»:

Ջրուցակցիս խոսքերում հիշվում է շուկայի ձևավորման պատմության երեք շերտ։ Առաջինն իր անձնական մասնակցության փորձառությունն է, երբ ինքն է սկսել առևտուր շուկայում. նրա պատմությունը սկսվում է 1994-ից։ Երկրորդը՝ երբ շուկայի ծնունդը կապվում է «պարսիկների գալու» հետ, որը պատմվում է իբրև սոցիալական հիշողության համար հայտնի իրադարձություն։ Այդ պատճառով պատմելիս նա նայում էր մյուս վաճառողներին, իսկ ինձ չբացատրեց մանրամասներ՝ ենթադրելով, որ ես ևս տեղեկացված եմ այդ «իրադարձությանը»։ Իսկ երրորդը լանդշաֆտի ֆիզիկական, քաղաքաշինական միջավայրի փոխակերպման մասին հիշողությունն է. «Էս գարաժները չկար։ Լրիվ հողամասեր ու ցանկապատեր էին»:

Այս երեք շերտերը անձնային, սոցիալական և հավաքական հիշողության դրսևորումներ են։ Առաջին երկուսը անձնական կամ միմյանց հետ որոշակի փոխհարաբերությունների մեջ եղող մարդկանց փորձառություն է։ Իսկ տարածքի փոխակերպումը արտահայտվում է քաղաքային, հավաքական-հանրային հիշողության ձևով։ Այդպես միմյանցից անկախ և իրար անծանոթ մարդիկ նույն երևույթը կարող են վերհիշել, սակայն յուրաքանչյուրի վերհիշող տարբերվում է մյուսներից անձնական փորձառության պատճառով¹⁶:

Անձնական, հանրային, հավաքական հիշողությունների համատեղումը ոչ ֆորմալ

physical transformation of the landscape and urban environment: “These garages were not here. There were only plots and fences”.

These three layers are manifestations of personal, social and collective memory. The first two reveal the personal experience of people who are interconnected. But the transformation of the place is expressed in a form of collective urban memory. Thus, people may separately recall the same phenomenon, but their memories cannot be the same due to their personal experience¹⁶.

The combination of personal, social, and collective memories has been shown in other field studies that I conducted on the formation of informal urban markets¹⁷. I believe that we can consider the presence of these three conditions as general trends in the formation of commercial urban spaces.

The interviewers remembered that as early as in 1990–94, there were courtyards, flowerbeds and even small vegetable gardens on Firdusi Street. In 2019, I found no yards there. After 1994, the owners started to build garages or tin cubes to give them to retailers for rent. It is still possible to see this long line of garage constructions on both sides of the street. The last traders I met there regretted that none of these profitable garages belonged to them.

The courtyards that provided a free space for daily life and interconnection or were at the disposal of people for urban gardening in the pre-Soviet and Soviet times, encountered unauthorized construction, privatization and wild commercialization since 1994. Numerous descriptions of legalization of unauthorized premises or court proceedings connected to this can be found on the City Hall website (Yerevan Mayor's Decree 2017, 2014). There are many cases of partial productization of private spaces (leasing and renting) around the Firdus Market and the Vernissage

¹⁶ Cf. Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 21–30.

¹⁷ Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” *Working Paper Series on Informal Markets and Trade*: 5, 2018. Melkumyan, Hamlet. “Yerevanski Vernisazh: mezhdru vystavkoi i iarmarkoi [Transformation of an Open Air Exhibition into a Flea Market: the Case of Yerevan Vernissage].” *Gorod, Migraciia, Rynok [City, Migration, Markets: New Studies in Social Science from the South Caucasus]* (HBS): 5, 2011: 48–66.

¹⁶ Չմմտ.՝ Casey, Edward. “Public memory in place and time.” Phillips, Kendall R. *Framing Public Memory*. Tuscaloosa: University of Alabama Press, 2004: 21–30:

քաղաքային շուկաների ձևավորման մասին իմ այլ դաշտային աշխատանքների ժամանակ ևս արտահայտվել է¹⁷: Ենթադրում եմ, որ այս երեք պայմանների առկայությունը քաղաքային շուկայական կամ առևտրային տարածքների ձևավորման օրինաչափություններից է:

Շուկայի ձևավորման սկզբի մասին հիշողություններում գրուցակիցներս պատմում էին, որ դեռևս 1990–1994-ին Ֆիրդուսի փողոցը ազատ տնամերձ բակային հողատարածքներ էին, կային ծաղկաթփեր, երբեմն նաև գյուղատնտեսական մշակաբույսեր: 2019-ին, երբ ես այնտեղ էի, բակային տարածքները գրեթե չէին մնացել, քանի որ դրանցում 1994-ից հետո սեփականատերերը սկսել էին կառուցել շինություններ, առևտրականների խոսքով՝ «գարաժներ» (ավտոտնակ), կամ տեղադրել մետաղյա տնակներ: Այդ կառույցները տվել են վարձակալության շուկայի աշխատողներին: Նախկին շուկայի տարածքով անցնելիս կարելի է տեսնել այդ կառույցների երկարաձիգ շարքը փողոցի երկու կողմերում: Առևտրական կանայք ափսոսանքով ասում էին, որ եթե կարողանային այդ ավտոտնականման կառույցներից մեկի սեփականատեր լինել և դրա վարձակալությունից եկամուտ ստանալ, գոհ կմնային:

Բակերը, որոնք նախախորհրդային և խորհրդային տարիներին հարևանների առօրյա փոխհարաբերությունների համար ազատ հանրային կամ քաղաքային այգեգործության տարածքներ էին, 1994-ից սկսած, ինքնակամ կառուցապատվում, մասնավորեցվում և ապրանքայնացվում են: Օրինակ՝ տարածքի ինքնակամ կառույցների օրինականացման կամ բակային հողատարածքների դատական վիճարկման մասին բազմաթիվ նկարագրություններ, իրավական որոշումներ կան քաղաքապետարանի կայքում (Երևանի քաղաքապետի որոշում, 2017, 2014): Մասնավոր տարածքի մասնակի ապրանքայնացումը և այն վարձով տալու դեպքերը բազմաթիվ են նաև Ֆիրդուսի շուկայի հարևանությամբ գործող հուշանվերային Վերնիսաժի շուկայի օրինակով: Այստեղ ևս նկարիչները, փայտագործները,



Market. Painters, woodworkers, carpenters and others who trade at Vernissage rent rooms and store their goods in the apartments located nearby, on Firdusi and Hanrapetutyan Streets.

In the 1990s, this was a continuous process of informal commercialization of public spaces, typical not only for Armenia but also for the most post-Soviet countries (various researchers believe that the commercialization and productization of public spaces is a typical practice in liberal and neo-liberal economy)¹⁸.

THE REPUBLIC SQUARE AND THE MOSAIC OF MARKETS

Since 1993, two informal commercial zones had already been formed near the Republic Square in Yerevan, the Firdus market and the

¹⁷ Melkumyan, Hamlet. "Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets." Working Paper Series on Informal Markets and Trade: 5, 2018. Melkumyan, Hamlet. "Yerevanskii Vernisazh: mezhdru vystavkoi i iarmarkoi [Transformation of an Open Air Exhibition into a Flea Market: the case of Yerevan Vernissage]." Gorod, Migraciia, Rynok [City, Migration, Markets: New Studies in Social Science from the South Caucasus] (HBS): 5, 2011: 48–66.

¹⁸ Prigge, Walter. "Reading The Urban Revolution", pp. 46–61. Lefebvre, Henri. State, Space, World. Taalaibekova, Gulniza, and Hamlet Melkumyan. "Public Space Commercialized and Commodified: A Case Study of the Vernissage in Yerevan." Melkumyan, Susanne Fehlings and Hamlet. Transnational Trade, Trade Routes, and Marketplaces between the Caucasus and Central Asia. Tbilisi: Universal, 2018: 48–64.





գորգավաճառները և այլ աշխատողներ իրենց ապրանքը պահեստավորում են հարևանությամբ գտնվող Ֆիրդուսի թաղամասի և Հանրապետության փողոցի բազմաբնակարան տներում վարձակալած սենյակներում:

1990-ականներից արդեն Երևանում հանրային տարածքների ոչ ֆորմալ ապրանքայնացման գործընթացը դառնում էր շարունակական: Նման գործընթացները ոչ միայն Հայաստանին, այլև հիմնականում հետխորհրդային տարածքի բոլոր քաղաքներին էին բնորոշ (հետագոտողներից շատերը հանրային տարածքների ապրանքայնացումը և առևտրայնացումը դիտարկում են որպես լիբերալ և նեոլիբերալ տնտեսվարմանը բնորոշ գործելակերպ)¹⁸:

ՀՐԱՊԱՐԱԿԸ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐԸ

Երևանում՝ Հանրապետության հրապարակի հարևանությամբ, 1993-ից արդեն գործում էին երկու միանման ոչ ֆորմալ առևտրային գոտիներ՝ Ֆիրդուսի և հուշանվերային շուկաները: Ֆիրդուսի շուկան մի նեոլիկ փողոց էր, որ ձգվում էր Տիգրան Մեծի պողոտայի և վերջինիս զուգահեռ Բուզանդի փողոցի միջև: Ֆիրդուսի և Բուզանդի փողոցների խաչմերուկում՝ զբոսայգում, ձևավորվել էր հուշանվերային շուկան՝ Վերնիսաժը՝ իր քրջի շուկայի՝ Բարախոլկայի¹⁹ հատվածով²⁰: Այս շուկաների առաջացումը հետխորհրդային տնտեսական իրավիճակի հետևանք էր: Այդ պատճառով երկուսում էլ աշխատողների համար առևտուր անելը տնտեսական և սոցիալական ծանր վիճակում

Vernissage Market. Firdus was a narrow street between the Tigran Mets Avenue and Buzand Street. The Vernissage Souvenir Market, located at the intersection of Firdus and Buzand Streets, in the city park, included also a rag market¹⁹, called Barakholka²⁰. All of them appeared due to the post-Soviet economic situation.

In both the markets, trade was a way to survive in a difficult socio-economic situation. Many try to forget and not mention the first years of trading in these markets²¹. They think of it as a shameful experience. Trade in the open air would not bring great honor, but it was particularly shameful in the context of the still existing Soviet mentality, and could also be regarded as fraud and speculation²². Many of the interviewees remember that they were ashamed of meeting with acquaintances and tried to hide somewhere once saw them.

It was not by chance that both the markets appeared near the Republic Square. The area was located at the junction of busy roads and bus stops, and this was one of the main reasons. In addition, there is a tendency during times of an unstable economy and political situation, that the informal market zones appear close to the major government and tourist centers²³. After 1994,

¹⁹ In the post-Soviet period, the first partially formalized rag market in Saryan Park moved to Gikhsavor Avenue. (Gikhsavor poghota). The traders recall this place as "Hnamash ireri shuka". People still remember it as Barakholka (from Russian barakholka or tolkuchka, flea market).

²⁰ Melkumyan, Hamlet. "Metamorphoses of the Yerevan Vernissage: From Cultural Event to Market." *Market Beyond Economy*. Ed. Levon Abrahamian and Kathryn Franklin Arsen Bobokhyan. Yerevan: Gitutyun, 2014: 13–22.

²¹ Brockmeier, Jens. "Remembering and Forgetting: Narrative as Cultural Memory." *Culture & Psychology* 8 (1), 2002: 15–43. Vinitzky-Seroussi Vered and Teeger Chana. "Unpacking the Unspoken: Silence in Collective Memory and Forgetting." *Social Forces*, 2010: 1103–1122.

²² Dumitru, Răzvan. "Politics and Practices in Post-Soviet 'Business': Between Shame and Success." *Martor*, 2011: 52–67. Burawoy Michael and Krotov Pavel. "The Soviet Transition From Socialism to Capitalism: Worker Control and Economic Bargaining in the Wood Industry." *American Sociological Review* 57, 1992: 16–38. Scheff, Thomas J. "Shame in Self and Society." *Symbolic Interaction* 62(2), 2003: 239–262.

²³ Rekhviashvili, Lela. "Marketization and the public-private divide: Contestations between the state and petty traders over the access to public space in Tbilisi." *International Journal of Sociology and Social Policy* 35 (7%), 2015: 478–496. Sike,

¹⁸ Prigge, Walter. "Reading The Urban Revolution", pp. 46–61. Lefebvre, Henri. *State, Space, World*. Taalaibekova, Gulniza, and Hamlet Melkumyan. "Public Space Commercialized and Commodified: A Case Study of the Vernissage in Yerevan." Melkumyan, Susanne Fehlings and Hamlet. *Transnational Trade, Trade Routes, and Marketplaces between the Caucasus and Central Asia*. Tbilisi: Universal, 2018: 48–64.

¹⁹ Չեխոխորհրդային շրջանում առաջին մասնակի ֆորմալացված քրջի շուկան դարձավ 1993-ին Սարյանի արձանի պուրակից Գլխավոր պողոտայի տարածք տեղափոխված առևտրի մասը: Այդտեղ աշխատող վաճառողները առևտրի միջավայրը անվանում են հնամաշ իրերի շուկա, հանրության մեջ միջև այժմ այդ շուկան հիշվում է Բարախոլկա անունով, որը առաջացել է ռուսերեն баракхолка – խլամանկը բառից:

²⁰ Melkumyan, Hamlet. "Metamorphoses of the Yerevan Vernissage: From Cultural Event to Market." *Market Beyond Economy*. Ed. Levon Abrahamian and Kathryn Franklin Arsen Bobokhyan. Yerevan: Gitutyun, 2014: 13–22.

գոյատևելու հնարավորությունն էր դարձել: Շատերը նույնիսկ փորձում են չհիշել ու չպատմել շուկայում աշխատելու իրենց առաջին տարիների մասին²¹: Նրանք իրենց այդ փորձառությունը համարում են ամոթալի: Փողոցում կանգնած առևտուրը համարվում էր անպատվաբեր, մանավանդ որ դեռ խորհրդային տարիներից ժառանգած արժեհամակարգում այն ընկալվում էր որպես խարդախություն կամ սպեկուլյացիա²²: Զրուցակիցներիցս շատերը հիշում են, որ այդ տարիներին, երբ ծանոթ մարդ էին նկատում շուկայում, թաքնվում էին, որովհետև անհարմար էին զգում:

Վերնխաժի և Ֆիրդուսի շուկայի՝ Հանրապետության հրապարակի հարևանությամբ հայտնվելը պատահականություն չէր: Պատճառներից մեկը ուղևորափոխադրման հանգույցների մոտ գտնվելն է: Բացի դրանից՝ տնտեսական, քաղաքական անկայուն ժամանակաշրջանում ոչ ֆորմալ առևտրի գոտիներ ու կետեր սկսում են սովորաբար հայտնվել քաղաքի կենտրոնական կամ կառավարական, զբոսաշրջային կենտրոններին հարակից²³: Հանրապետության հրապարակից Տիգրան Մեծի պողոտայի, Երվանդ Քոչարի, Խորենացու փողոցների խաչմերուկում գտնվող Գումի շուկայի միջև ընկած հատվածը առևտրականացվում է 1994-ից հետո:

1990-ականներին Ֆիրդուսի շուկայի հարևանությամբ՝ Տիգրան Մեծի պողոտայի հատվածում, փողոցում սեղանիկային առևտրին



commercialization spread throughout Tigran Mets ave, and covered the territory of the Gum Market at the intersection of Yervand Kochar and Khorenatsi Streets.


In the 1990s, another informal market of currency exchange was formed next to the Firdus Market, parallelly to the street trading there. This market was later transformed into legal currency exchange or “change” services as it is called in Armenia. One of the interviewers who often visited this place in his childhood, told me that he still remembered young guys in black leather jackets and cheap black caps, the currency exchangers. For him, this part of the city is associated with noise and sounds like ‘dollar arnem-tsakhem’ and ‘vaucher arnem-tsakhem’ (I buy and sell dollar, voucher). The city and the

²¹ Brockmeier, Jens. “Remembering and Forgetting: Narrative as Cultural Memory.” *Culture & Psychology* 8(1), 2002: 15–43. Vinitzky-Seroussi Vered and Teeger Chana. “Unpacking the Unspoken: Silence in Collective Memory and Forgetting.” *Social Forces*, 2010: 1103–1122.

²² Dumitru, Răzvan. “Politics and Practices in Post-Soviet ‘Business’: Between Shame and Success.” *Martor*, 2011: 52–67. Burawoy Michael and Krotov Pavel. “The Soviet Transition From Socialism to Capitalism: Worker Control and Economic Bargaining in the Wood Industry.” *American Sociological Review* 57, 1992: 16–38. Scheff, Thomas J. “Shame in Self and Society.” *Symbolic Interaction* 62(2), 2003: 239–262.

²³ Rekhviashvili, Lela. “Marketization and the public-private divide: Contestations between the state and petty traders over the access to public space in Tbilisi.” *International Journal of Sociology and Social Policy* 35 (%), 2015: 478–496. Sike, Endre, and Clarrie Wallace. “Development of open-air Markets in East-Central Europe.” *International Journal of Urban and Regional Research* 23(4), 1999/2008: 697–713. Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” *Working Paper Series on Informal Markets and Trade* 5, 2018.

Endre, and Clarrie Wallace. “Development of open-air Markets in East-Central Europe.” *International Journal of Urban and Regional Research* 23(4), 1999/2008: 697–713. Melkumyan, Hamlet. “Informality, Politics and Mutual Support in Armenian Flea Markets.” *Working Paper Series on Informal Markets and Trade* 5, 2018.



Առևտրային վայրեր, որոնք չընդհատվող շղթա են կազմում քաղաքում:

1. Ֆիրդուսի շուկա կամ «Ֆիրդուսնոտ» գործում է 1993-1994 թվականներից:
Firdus Market or "Firdusnots" functions since 1993/4-2019.
2. Արտաթուղթի փոխանակման և վաճառքի կետեր՝ հայտնի ընդհանուր «Բիրծա» անունով. գործել է 1990-2000-ական թվականներին:
Currency Exchange Offices from the 1990 to 2000.
3. Հագուստի, օժանդեղի, կոշիկի խանութներ, ավելի ուշ՝ «Գրանդ Բենդի», «Յուքոմ» և այլ ընկերությունների մասնաճյուղեր: Ֆիրդուսի շուկայի շարունակությունը՝ գրեթե նույն ապրանքատեսակներով. գործում է 2000-ականների սկզբից:
Clothing, perfume and shoe boutiques. Later Grand Candy, Ucom and other companies opened their branches here. Since 2000's, the Firdus Market expanded on Tigran Mets ave. Displaying almost the same products for sale.
4. Քրքի շուկա. գործել է 1990-ականների սկզբին: 1998 թվականից նույն տարածքում գործում է «Լուսապարկ» մանկական ժամանցի կենտրոնը:
Luna Park Leisure Park for kids since 1998. A rug market functioned here in the 90's.
5. Սև շուկա. գործել է մինչև 1974 թվականը, երբ նույն տեղում կառուցվեց «Ռոսիա» կինոթատրոնը:
Black Market functioned here until 1974 when the Rossia Cinema was built in its place.
- 5a. «Ռոսիա» կինոթատրոնի հարակից տարածք, խմիչքի, քաղցրավենիքի և տնտեսական ապրանքների առևտրի կետեր. գործում է 2005-2006 թվականներից:
Shopping pavilions around the Rossia Cinema, 2005-2006.
- 5b. «Ռոսիա մոլ» առևտրի կենտրոն (2016):
Rossia Mall, 2016.
6. Փողոցային մանրածախ առևտրի կետեր, տնտեսական, մթերային և հագուստի խանութներ, կոշիկի նորոգման կետեր. գործում են 1993 թվականից:
Open-air shopping pavilions, shops for household goods, grocery stores, clothing and shoe boutiques since 1993.
7. Կտորեղենի, սպիտակեղենի խանութներ, դիզայնի պարագաների ու դեկորի խանութներ:
Shops of bedding, fabric and design accessories.
8. «Տաշիր» առևտրի կենտրոն (2004). ԳՈՒԲ (Государственный универсальный магазин) հանրախանութի (1987) տեղում:
Former GUM (State Department Store, 1987). Tashir Trade Center since 2004.
9. Գյուղմթերքի շուկա. խորհրդային վաղ տարիներին կոչվել է Կոլխոզ շուկա, ապա վերանվանվել № 2 գյուղմթերքի շուկայի: Այսօր առավել հայտնի է որպես Գումի շուկա, գործում է նախկին ԳՈՒԲ հանրախանութի հարևանությամբ:
"Kolkhoz Market" in the early Soviet years that was renamed Agriculture Market № 2. Known as GUMI shuka because it functions near the former GUM.
10. Մանրածախ փողոցային առևտուր. տնտեսական, մթերային և հագուստի խանութներ:
Open-air trade, stores for household goods, grocery stores and clothing boutiques.
11. Նար-Դուսի փողոցի մի հատվածը, որը նաև անվանվում էր «Դազաղների փողոց»։ թիթեյա իրերի և սզո պարագաների արհեստանոցներ, սզո ծառայություններ:
"Coffin's Street": small Funeral offices and tin workshops.
12. Կերամիկական սալիկների, սանտեխնիկայի, երեսպատման նյութերի խանութներ:
Stores for interior design and construction materials.
13. Դռների, կողպեքների և լուսամուտների վաճառակետեր:
Stores for Construction materials: doors, windows, locks.
14. Ավտոմեքենայի անվադողների, դիմապակիների վաճառակետեր և սպասարկման սրահներ. գործում են 2004-2005 թվականներից:
Car services and shops, since 2004-2005.
15. Նախաձեռն, լամպերի, լուսավորության և այլ ապրանքների վաճառակետեր. գործում են 2000-ականների սկզբից: Բնակելի տների առաջին հարկերը վերածվել են խանութների, ինչպես Ֆիրդուսում:
Different stores for construction and interior materials, beginning of the 2000's.
16. Քրքի շուկա. գործում է 1997-1998 թվականներից:
Rug Market since 1997/8.
17. «Գնուկի» շինանյութի և շինարարական գործիքների շուկա (1993):
Gnuni Market for Construction, Interior Materials, Instruments and building tools.
18. «Վերնիսաժ». հուշանվերային շուկա (1993):
Vernissage Souvenir Market since 1993.
19. 2016 թվականից այս հատվածում գործում են զբոսաշրջային ծառայություններ պարսկերենով իրանցիների համար:
Formal and informal Tourist services for Iranians since 2016.
20. Սեքս-աշխատանքով զբաղվող կանանց ոչ օրինական տարածք:
Sex workers' illegal location.
21. Ոսկու շուկա (1995). իհն բաղնիքի շենքի (1930-ականներ) տեղում: Հայտնի է որպես «Բաղնիքի ոսկու շուկա»:
Gold Market since 1995. In the place of the former public bath house, built in the 1930's.
22. Սեքս-աշխատանքով զբաղվող կանանց ոչ օրինական տարածք:
Sex workers' illegal location.
23. «Ֆայլաբազար». տղամարդկանց օրավարձով աշխատանքի ոչ պաշտոնական շուկա. գործում է 1990-ականներից:
"Failabazar", informal male labor market since 1990-2000.
24. «Պարսակյան խանութներ». Իրանից ներմուծված տնտեսական ապրանքները Ֆիրդուսի շուկայից տեղափոխվել են այստեղ 1998-1999 թվականներին:
"Persian shops" moved here from Firdus in 1998/9.
25. «Փեթակ» առևտրի կենտրոն (1998):
Petak Trade Center since 1998.
26. «Սուրմալու» տնտեսական մեծածախ ապրանքների շուկա (1996):
Surmalu wholesale market of goods since 1996.





զուգահեռ ձևավորվել էր արտարժույթի շուկա, որը հետո վերակազմավորվեց արտարժույթի վաճառքի կետերի՝ «չենջերի» (անգլերեն Exchange-ից): Զրուցակիցս, որ փոքր տարիքում պարբերաբար եղել էր այդ հատվածում, պատմում էր, որ մինչև հիմա այդ տարածքով անցնելիս հիշում է «սև կաշվե կուրտկաներով» և «սև, 1000 դրամանոց գլխարկով երիտասարդ տղաներին»՝ արտարժույթ փոխանակողներին: Քաղաքի այդ հատվածը նրա մոտ նույնացվում է նաև արտարժույթ փոխանակողների «դոլար առնեն-ծախեն», «վաուչերներ առնեն-ծախեն» ձայներին և աղմուկին: Քաղաքը և շուկան նաև աղմուկների հիշողություն է²⁴:

Նոր ձևավորվող շուկաները երբեմն ունեին նաև պատմական շարունակականություն: Օրինակ՝ Տիգրան Մեծի և Խանջյան փողոցների խաչմերուկում խորհրդային տարիներին գործել էր «Սև շուկան»: 1974-ին այդտեղ բացվում է «Ռոսիա» կինոթատրոնը: «Ռոսիա» կինոթատրոնի շենքի համահեղինակ ճարտարապետներից Հ. Պողոսյան իր հարցազրույցներից մեկում պատմել է. «Նախկինում «Ռոսիա» կինոթատրոնի տարածքում գտնվում էր Երևանի ամենահին շուկաներից մեկը՝ բավականին կեղտոտ տարածքով, սակայն ինքնատիպ

Market provide also a memory of noise²⁴.

New markets were sometimes formed against a historical background. In early Soviet times, for example, a 'black market' was functioning at the intersection of Tigran Mets ave. and Khanjyan Streets. In 1974, the Rossia Cinema was opened in its place. One of the architects of the Cinema, H. Poghosyan, recalls this place in one of his interviews: "Previously, one of the oldest markets in Yerevan worked on the site of the Rossia Cinema. It was a rather dirty place, but it had its own unique coloring"²⁵.

The Rossia Cinema was renamed the Ayrarat Cinema during the early years of independence, but the building owner named it "Rossia Shopping and Cultural Center" in 2006²⁶. Since the first years of independence, an active street trade began in this place, especially fast-foods were popular here, offering mainly patties with potato and meat, called "perashki" and "cheboureki". Now Rossia Mall expands stoutly here.

²⁴ Cf. Hetherington, Kevin. "Rhythm and Noise: The City, Memory and the Archive." *The Sociological Review* 61(S1) 2013: 17–33.

²⁵ Bubushyan Anna, Lena Gevorgyan, Ekaterina Poghosyan, Eleonora Araratyan, Anna Zilfugharyan, Ara Tadevosyan, Armine Melkonyan, Rossia kinotatron, (an)kendani patmutyun, 2012, <https://bitly.su/AiXr>

²⁶ Bubushyan et al., 2012.

²⁴ Հմմտ.՝ Hetherington, Kevin. "Rhythm and Noise: the City, Memory and the Archive." *The Sociological Review* 61 (S1) 2013: 17–33:

կուրքիտով»²⁵։ Անկախության առաջին տարիներին կինոթատրոնը վերանվանվել էր «Այրարատ», սակայն «2006 թվականին շենքի սեփականատերը այն վերանվանում է «Ռոսիա» առևտրամշակութային կենտրոն»²⁶։ Անկախության առաջին տարիներից «Ռոսիա» կինոթատրոնի շուրջը ծավալվում էր ակտիվ փողոցային առևտուր, գործում էին արագ սննդի կետեր (հիմնականում՝ կարտոֆիլով կարկանդակ և մսային ուտեստներ)։ Այժմ կինոթատրոնի շենքում և հարևանությամբ գործում է «Ռոսիա մոլ» առևտրի կենտրոնը։

«Ռոսիա» կինոթատրոնի մերձակայքում՝ Ագաթանգեղոսի և Խորենացու փողոցների խաչմերուկում, «Ֆայլաբազարն» է, որտեղ գործազուրկ տղամարդիկ օրավարձով առաջարկում են իրենց բանվորական կամ արհեստագործական աշխատուժը²⁷։ Իսկ «Ֆայլաբազարի» հարևանությամբ 1990–2000-ականներին սեռական ծառայություններ առաջարկող (հանրային խոսույթում՝ մարմնավաճառ) կանայք էին հավաքվում ուշ ժամերին (մամուլի արխիվում կարելի է պարբերաբար նյութեր հանդիպել այս թեմայով)²⁸։

Շարունակելով քարտեզագրելը՝ նշեմ, որ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարակից տարածքում՝ Օղակաձև զբոսայգու սկզբնամասում, 1990-ականների վերջից մինչև 1998 թվականը կար քրջի շուկա։ Զրուցակիցներս հիշում են, որ այդ տարածքում ապրանքները պարզապես դրված էին գետնին, նրանց տպավորությամբ՝ դրանք ուղղակի թափված էին։ Սակայն երբ կառուցվում է մանկական ժամանցային զբոսայգին՝ «Լուսապարկը», իսկ ավելի ուշ նույն վայրում՝ նաև Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, քրջի շուկան տեղափոխվում է «Դինամո» մարզադաշտի հետևամաս²⁹։

Failabazar is another informal ‘labor’ market that exists alongside the Russia Cinema. Out-of-work men gather at the intersection of Agatanghegosi and Khorenatsi Streets to offer daily wage services²⁷. Another market of sex workers functioned near the Failabazar between 1990–2000. Women gathered there late in the evening to offer their services. Several archival materials can be found in the media on this topic²⁸.

From 1990 to 1998, another rag market operated in the front part of Circular Park. My interviewees remember that the products there were displayed straight on the ground, giving the impression that they were thrown out there. This market moved to the backyard of the Dynamo Stadium when the Yerevan “Lunapark” was established here, and later Saint Gregory the Illuminator’s Cathedral was built²⁹.

This rag market was semantically similar to Barakholka near the Republic Square, but the organization of the space was different: “I remember that things were displayed on the ground [here], but in Vernissage there were arranged on the edges of pavement or on desks. That is why it seemed to me even more raggy here.” The interviewee insisted that the objects here (second hand household goods or spare parts) were overused and more raggy (or they looked so) than in Vernissage.

The Vernissage souvenir market appeared in this part of the city in 1993 by the decision of the City Hall. Then Barakholka joined it. Barakholka was located on the territory from the “Republic Square” Metro Station to Khanjyan Street, between the Republic Square and the square

²⁵ ստորակետը չլքել Լենա Գևորգյան, Եկատերինա Պողոսյան, Էլենուրա Արարատյան, Աննա Չիլֆուղարյան, Արա Թադևոսյան, Արմինե Մեղրեյան. «Ռոսիա» կինոթատրոն՝ (ան)կենդանի պատմություն, 2012, <https://bitly.su/AiXr>

²⁶ Բուբուշյան և ուրիշներ, 2012։

²⁷ Սիմոնյան Վարդուհի. Տղամարդկային մկանների տոնավաճառ. քրտնաթոր գրույցներ 16-ից բարձրորի համար, 2016, 01. 03. 2019, <https://bitly.su/phWm7>

²⁸ Մարմնավաճառները ջահեղների գլխին սարքում են, 2009, 01. 03. 2019, <https://bitly.su/sgae0>

²⁹ Սիմոնյան, Աննա. Քրջի բազարից՝ Լուսապարկ 2008, 02.03.2019, <https://bitly.su/gWHubUe> Կարապետյան Աննա. Երևանում օձվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, «Ազատություն» ռադիոկայան, 2001,

²⁷ Bubushyan Anna, Lena Gevorgyan, Ekaterina Poghosyan, Eleonora Araratyan, Anna Zilfugharyan, Ara Tadevosyan, Armine Melkonyan, Russia kinotatron, (an)kendani patmutyun, 2012, <https://bitly.su/AiXr>

²⁸ Marmnavajarnery jahelneri glkhin sarkum en, 2009, 01. 03. 2019, <https://bitly.su/sgae0>

²⁹ Simonyan, Anna, Khriji bazaris Lunapark, <https://bitly.su/gWHubUe> Karapetyan Anna, Yerevanum otsvets Surb Grigor Lusavorich Mayr ekeghetsin, Azatutyun.am, 2001, 02.03.2019, <https://bitly.su/gWHubUe> HH varchapeti voroshum Yerevan kaghakum Surb Grigor Lusavorich ekeghetsi karutselu masin, Vers (24), 27.01.1997. IRTEK. 02.03.2019, <https://bitly.su/CGs8Qkl>

Այս քրջի շուկան սեմիոտիկ առումով մոտ էր Հանրապետության հրապարակի մոտ Վերնիսաժի հուշանվերային շուկայի Բարախոլկա կոչվող օգտագործված իրերի վաճառքի հատվածին: Սակայն տարբեր էր տարածքի կազմակերպումը. «Գետնին էր շարված, եթե Վերնիսաժում բորոյությունների վրա էր, կամ սեղանիկների... իմ հիշողության մեջ գետնին էր շարված: Դրա համար ավելի քրջոտ էր իմ աչքին երևում, որովհետև գետնին էր շարված»: Այդ պատճառով, զրուցակիցս ասում էր, այստեղ իրերը (դրանք կենցաղային իրեր էին, պահեստամասեր) ավելի հին էին [կամ այդպես էին թվում], «ավելի քրջոտ», քան Վերնիսաժում:

Վերնիսաժը ևս քաղաքի այս հատվածում հայտնվում է 1993-ից քաղաքապետարանի որոշմամբ: Վերնիսաժին միացավ նաև Բարախոլկա քրջի շուկան: Բարախոլկան սկսվում էր «Հանրապետության հրապարակ» մետրոկայարանից և հասնում մինչև Խանջյան պողոտա, այսինքն՝ երկու՝ Հանրապետության և Վարդան Մամիկոնյանի արձանին հարակից հրապարակների միջև: Սակայն ավելի լայն տեղայնացմամբ՝ Բարախոլկան մեծ շուկայի եզրամաս կարելի էր համարել, որը սկսվում էր Հանրապետության հրապարակից և Վարդանանց փողոցով շարունակվում մինչև³⁰ «Դինամո» մարզադաշտ (1.20 կմ երկարությամբ):

Վերնիսաժում Բարախոլկայի տարածքի նորովի իմաստավորումը սկսվեց 2015-ին, երբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ քաղաքապետարանը նախաձեռնեց «Cultural genocide: symbol of khachkars» մշտական ցուցահանդեսը, իսկ տարածքը ստացավ «Խաչքարերի պուրակ» անունը³¹: Այս օրինակով մենք տեսնում ենք, որ հանրային

around Vardan Mamikonyan statue³⁰. In a broader sense, we could consider Barakholka as an edge of a 1.20km long market which started from The Republic Square and reached the Dinamo Stadium via Vardanants Street.

The territory of the former Barakholka market in Vernissage was revised in 2015. The City Hall initiated the “Cultural genocide: symbol of khachkars” – a permanent exhibition of khachkars on the occasion of the 100th anniversary of the Armenian Genocide, and the area was named “Khachkari Purak” (Park of Khachkars)³¹. This is an example how the political organizations and the bureaucratic system establishes monuments in a public space, legitimizing their political power. Previously commercialized, this place has become a kitschy place that ‘brings up’ nationality. On the one hand, the Souvenirs market produces and reproduces ‘exotic Armenianness’, and on the other hand the park, where the khachkars and the national hero Garegin Nzhdeh’s statues is installed, creates a nationalistic atmosphere.

The most popular market of building materials and home accessories, called “Gnuni shuka”, operates on Vardanants Street. At the end of Vardanants St., next to a semi-built and abandoned building (S. Vratsyan deadlock), there is another rag market. Thus, this long and partially street market between the Republic Square and Dynamo Stadium begins and ends with rag markets. In 2016, Barakholka finally moved to the area of the Dynamo Stadium, connecting the dynamic Gnuni market with an environment of extreme poverty in the rag market³².

02.03.2019, <https://bitly.su/EWnUvt> ՀՀ վարչապետի որոշում երևան քաղաքում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի կառուցելու մասին, Vers (24), 27.01.1997. ԻՐԾԿ. 02.03.2019, <https://bitly.su/CGs8Qkl>

³⁰ Բարախոլկան միմյանց զուգահեռ Նալբանդյան և Հանրապետության ուղղահայաց և դրանց հետ հորիզոնական հատվող Արամի և Փավստոս Բուզանդի զուգահեռ փողոցների միջևամասում էր՝ ավերված պուրակում: Քրջի շուկայի երկու ճյուղավորում շարունակվում էին դեպի Խանջյան փողոց և շրջապատում էին հուշանվերային Վերնիսաժը:

³¹ Գլխավոր պողոտայի Նալբանդյան-Հանրապետության փողոցների միջևամասի այցում ապրիլի 20-ին կազմվի «Մշակութային եղեռն-խաչքարերի խորհուրդը» բացօթյա ցուցահանդեսը: Երևանի քաղաքապետարանի հանրային կապերի բաժին, 2015 <https://bitly.su/LgChFs>

³⁰ Barakholka was located at the intersection of Nalbandyan and Hanrapetutyan, Arami and Pavstots Buzand Streets, in an abandoned park. Two branches of the market surrounded the Vernissage Souvenir's market on the right and left, across Khanjyan Street.

³¹ On April an open-air exhibition called “The cultural genocide: symbol of khachkars” opens in the park at the junction of Nalbandyan and Hanrapetutyan streets of Main avenue, Yerevan: Information and Public Relations Department of the City Hall of Yerevan, 2015. Accessed 01.22.2017. <https://bitly.su/LgChFs>

³² I think that rag markets or street trading mostly appear and function side by side with the active economic sites. One of the interviewers recalls that before the appearance of the rag market in the backyard of the Dynamo stadium, one of the largest gold markets functioned here. It is no wonder that the Barakholka





տարածքում քաղաքական կազմակերպությունները և բյուրոկրատական համակարգը տեղադրում են իրենց քաղաքական ուժը լեգիտիմացնող հուշարձաններ: Գլխավոր պողոտայի նախկինում առևտրայնացված տարածքը առևտրային միջավայրից դառնում է ազգայնականություն կառուցող կիտչային տարածք: Մի կողմից խաչքարերի պուրակը, հուշանվերային շուկան ստեղծում, վերարտադրում են «էկզոտիկ հայկականություն», մյուս կողմից Նժդեհի արձանն է, որը փորձ էր՝ ստեղծելու կամ ներկայացնելու արմատական ազգայնականության և «հերոսական հայկականության» պատում:

2010–2016-ին Վերնիսաժի Բարախոյկան տեղափոխվեց Վարդանանց փողոցում գործող Գնունու մեծածախ շուկայի տարածք, որտեղ վաճառում են շինանյութ, շինարարական գործիքներ և տան ինտերիերի պարագաներ: Իսկ Վարդանանց փողոցի վերջում՝ լքված, կիսակառույց շենքի հատվածում (Ս. Վրացյան փակուղիում՝ դեպի «Դինամո» մարզադաշտ), գործում է մեկ այլ քրջի շուկա: Հանրապետության հրապարակի և «Դինամո» մարզադաշտի միջև գտնվող առևտրային տարածքի սկզբնամասում և վերջնամասում ձևավորվել էին քրջի շուկաներ: Վերնիսաժի Բարախոյկան այստեղ զբաղեցրեց միջանկյալ-կամրջող դիրք շինարարական գործիքների և ծայրահեղ աղքատ միջավայր ունեցող քրջի շուկաների միջև³²:

Շարունակելով նշեմ, որ դեռ խորհրդային տարիներից Տիգրան Մեծի–Խորենացու–Նար–Դոսի փողոցների հարևանությամբ գործում էր հայտնի Գումի շուկան (ԽՍՀՄ տարիներին հայտնի է եղել Կոլխուզ շուկա³³ անունով): Իսկ հետխորհրդային տարիներին դրա շուրջը լուրջ և ոչ ֆորմալ առևտրային գոտիներ էին՝ հազուստի և կոշիկի, մսամթերքի, գյուղատնտեսական ապրանքների ևն:

³² Կարծում եմ՝ քրջի շուկաները կամ փողոցային ոչ ֆորմալ առևտուրը առավելապես հայտնվում և գործում են ակտիվ տնտեսական տարածքների կից: Չորուցակիցներիցս մեկը հիշում էր, որ Նախքան «Դինամո» մարզադաշտի հարևանությամբ քրջի շուկայի առաջնակարգ այստեղ կազմակերպվում էր ոսկու մեծ շուկաներից մեկը քաղաքում: Այդ պատճառով պատահական չէր, որ այստեղ Նախքան Բարախոյկան տեղափոխվել արդեն կար քրջի շուկա, իսկ նույն տրամաբանությամբ էլ Բարախոյկան էր հայտնվել հուշանվերային շուկային կցված, որը նույնպես ակտիվ տնտեսական գոտի էր հատկապես այցելու զբոսաշրջիկների շնորհիվ:

³³ Ասատրյան, Գովհաննես. «Կոլխուզ շուկան Երևանում», 1946, Հայաստանի ազգային պատկերասրահ, <https://bitly.su/9dfXc>



In this part of our market mosaic, at the intersection of Tigran Mets Ave., Khorenatsi and Nar Dos Streets, there is a well-known Gum Market functioning since the Soviet times³³. In the post-Soviet period, it became completely surrounded by informal market zones of clothing and footwear, meat, fish, agricultural goods etc.

This huge commercial zone somehow ends up in two informal market zones for the sale of tires and other car accessories, home accessories and building materials, hand-made tin products and funeral accessories all over Nar-Dos Street. Further, at the intersection of Nar-Dos St. and Tigran Mets Ave., there are the famous shops of Iranian goods. It is said that this market moved here from Firdus. The commercial chain is complete now.

We can map a market route like this: Republic Square–Khanjyan Street–Vardanants Street–Nar-

joined the already existing rag market. But before that, it logically appeared next to the souvenir market, which was very active, especially thanks to tourists (Melkumyan 2018).

³³ It was also called Kolkhozi Shuka, Kolkhoz Market. Asatryan Hovhannes. Kolkhoz shukan Yerevanum, 1946, <https://bitly.su/9dfXc>

Այս առևտրային գոտիները շարունակվում են մինչև Ե. Չարենցի փողոցի վերջնամաս և Նար-Դոսի փողոց՝ «Դինամայի» հետնամաս: Այս հատվածներում վաճառում են անվադողեր, հուղարկավորման պարագաներ, դոներ, թիթեղյա խողովակներ և այլ արհեստագործական իրեր: Իսկ Նար-Դոսի և Տիգրան Մեծի փողոցների խաչմերուկում գործում է պարսկական իրերի հայտնի շուկան, որը, համարվում է, որ ժամանակին տեղափոխվել է Ֆիրդուսի շուկայից: Այս հատվածում էլ շուկայական շղթան ամբողջանում է:

Շուկայական երթուղին ներառվում է մի շրջանի մեջ. սկսվելով Հանրապետության հրապարակից՝ Վարդանանց փողոցով միանում է Նար-Դոսին, որն էլ, միանալով Տիգրան Մեծի պողոտային, հասնում է կրկին Հանրապետության հրապարակ: Զրուցակիցներիցս մի երիտասարդ կին հիշում է. «Էդ հատվածը, ոնց որ հիմա և խառը, էն ժամանակ էլ էր: Իմ հիշողություններով՝ խառը, արևելյան շուկա հիշեցնող տարածք էր, էլի կար փողոցային առևտուր»:

Արևելյան շուկաների՝ աղմուկոտ ու խառնաշփոթ միջավայր լինելու մասին ընկալումները կարելի է քննադատաբար դիտարկել նաև օրինենտալիստականության համատեքստում³⁴: Ինչպես տարբեր հետազոտողներ են նկարագրում, շուկաների (նաև արևելյան) հատկանիշներից էր կենտրոնական հրապարակներում կամ հրապարակներին կից լինելը³⁵: Ֆիրդուսին և դրան հարակից տեսանք շուկայական գոտի, որը ևս սկսվում է Երևանի կենտրոնական հրապարակից: Պատմականորեն քաղաքի այս հատվածը ֆորմալ և ոչ ֆորմալ շուկաների, առևտրային գոտիների ձևավորման և դրանց տեղակայման խտացված միջավայր է դարձել: Այդ պատճառով Երևանի

Dos Street–Tigran Mets Ave–Republic Square.

“This part of [the city] has always been mixed. I remember it as a mixed place, reminiscent of an eastern market. Street trading has always been here,” recalls one of the interviewers.

The perception of Eastern markets as noisy and messy environment can be critically viewed in the context of Orientalism³⁴. Nevertheless, many researchers describe that it is natural for a market (including the eastern one) to appear in or near the central squares³⁵. We started with Firdus because the market zone in Yerevan historically starts with the Republic Square. Historically, this part of the city has become a favorable environment for formation of various markets and shopping areas. That’s why this part of Yerevan looks like a huge market. I think that the location of Firdusi Street and the formation of the Firdus Market correspond to the context and logic of this environment. The Firdus Market was perceived as an Eastern market, especially as it was founded by the Iranians.

BOUNDARIES OF IDENTITIES IN THE PUBLIC SPACE AND THE FIRDUS MARKET

In the 1990s, the informal markets in Yerevan appeared in places where there was a constant flow of people. The Firdus Market is located between the Republic Square and Zoravar Andranik Metro Stations. In the backyard of the Rossia Cinema (now Rossia Mall), almost on the same back side of the Zoravar Andranik metro station, one of the central regional bus stations operated until the 2010s, where metropolitan

³⁴ Khan, Samra Mohsin. “A Tale of Bazaars: The Impact of Cultural Change on Tangible and Intangible Heritage.” THAAP Journal: Cultural Roots of Art & Architecture of the Punjab, 2014: 152–165. Casson Mark and Lee John S. “The Origin and Development of Markets: A Business History Perspective.” Business History Review 85, 2011: 9–37, Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26. Abrahamian, L., Bobokhyan, A. and Franklin, K. Market Beyond Economy. Yerevan: Gitutyun, 2014, Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26.

³⁵ Abrahamian, L., Bobokhyan, A. and Franklin, K. Market Beyond Economy. Yerevan: Gitutyun, 2014. Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26.

³⁴ Khan, Samra Mohsin. “A Tale of Bazaars: The Impact of Cultural Change on Tangible and Intangible Heritage.” THAAP Journal: Cultural Roots of Art & Architecture of the Punjab, 2014: 152–165. Casson Mark and Lee John S. “The Origin and Development of Markets: A Business History Perspective.” Business History Review 85, 2011: 9–37, Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26. Abrahamian, L., Bobokhyan, A. and Franklin, K. Market Beyond Economy. Yerevan: Gitutyun, 2014, Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26.

³⁵ Abrahamian, L., Bobokhyan, A. and Franklin, K. Market Beyond Economy. Yerevan: Gitutyun, 2014. Pottie-Sherman, Yolande. “Markets and Diversity: An Overview.” MG Working Paper, 2011: 1–26.

այս հատվածը նման է մեծ շուկայի: Կարծում եմ, որ Ֆիրդուսի շուկայի՝ այս հատվածում ձևավորվելը համընկնում է քաղաքի այս միջավայրի համատեքստին և տրամաբանությանը: Ֆիրդուսի շուկան ընկալվում էր որպես արևելյան շուկա, մանավանդ այն պատճառով, որ սկզբնական շրջանում այն հիմնադրում են իրանցիները:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՖԻՐԴՈՒՍԻ ՇՈՒԿԱՆ

1990-ականներին Երևանի կենտրոնում ոչ ֆորմալ շուկաները ձևավորվում էին մարդկանց ակտիվ հոսքեր ունեցող տարածքներում: Նույն օրինաչափությամբ Ֆիրդուսի շուկան է այդպիսի հանգուցային կետերի հարևանությամբ՝ «Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» մետրոկայարանների միջնամասում: Իսկ «Զորավար Անդրանիկ» մետրոկայարանի հետնամասում՝ «Ռոսիա» կինոթատրոնի ետնաբակում, մինչև 2010-ականները միջմարզային երթուղիների ավտոկայանն էր: Այստեղ հանդիպում էին քաղաքային և մարզային մշակույթները: Այդ պատճառով շատերը քաղաքի այս հատվածը նկարագրում են իբրև խառնաշփոթ, «քաղաքի տարածք»՝ լեզվական բազմազանությամբ:

Միաժամանակ այս հատվածը նմանեցվում է արևելյան շուկաներին, և այս ընկալումը կարծեք լրացվում է այստեղ պարսկական մշակույթի առկայությամբ: Իրանցիները դեռ 1990-ականներին տարածքներ էին վարձակալել Ֆիրդուսի թաղամասում և հարակից շինություններում: Նրանք Իրանից ներկրում ու վաճառում էին զանազան կենցաղային ապրանքներ, հագուստ: Այս պատճառով Ֆիրդուսի շուկան հանրային խոսույթում նաև պարսկական շուկա էր համարվում: Սովմազ Յադոլլահինը, իր հետազոտության մեջ քննարկելով իրանական շուկաները, նշում է, որ դրանք՝ որպես հանրային տարածքներ, բազմամշակութային են³⁶: Անկախության սկզբի տարիներից Ֆիրդուսի շուկան արդեն ուներ այդպիսի բազմամշակութային բնույթ: Սակայն այդ բազմամշակութայնությունը



and regional cultures met. Many describe this part of the city as a mixed place, a “bazaar” with a language diversity.

This area, at the same time, resembled the type of Eastern markets, and this perception was partially fueled by the presence of Iranian culture here. Since the 1990s, the Iranians rented in and around Firdus neighborhood. They imported and distributed home products and clothing from Iran. That’s why in public discourse Firdus was considered an Iranian market. Solmaz Yadollahi, who examines Iranian markets in his research, emphasizes their multiculturalism³⁶.

From the outset of independence, multiculturalism was inherent in the Firdus Market. But first of all, it was connected with the history of the neighborhood. In the early years

³⁶ Yadollahi, Solmaz. *The Iranian Bazaar as a Public Place: A Reintegrative Approach and a Method Applied Towards the Case Study of the Tabriz Bazaar*. Tehran: Brandenburg University of Technology Cottbus-Senftenburg, 2017.

³⁶ Yadollahi, Solmaz. *The Iranian Bazaar as a Public Place: A Reintegrative Approach and a Method Applied Towards the Case Study of the Tabriz Bazaar*. Tehran: Brandenburg University of Technology Cottbus-Senftenburg, 2017.

պայմանավորված էր նաև թաղամասի պատմությամբ, քանի որ դեռևս վաղ խորհրդային տարիներին նաև մահմեդական բնակչություն (աղբբեշանցիներ, իրանցիներ) էր ապրել այս տարածքում:

Ջրուցակիցներիցս շատերը այն համոզման էին, որ հետխորհրդային տարիներին Ֆիրդուսի թաղամասի աղբբեշանցի նախկին բնակիչներն էին, որ «գնացին Պարսկաստան, դարձան պարսիկ, բայց էլի թուրք էին» և Իրանի թաղաքացիությամբ վերադառնում էին Երևան և վաճառականությամբ զբաղվում Ֆիրդուսում: Այս մասին նրանք ինձ հետ խոսում էին ցածրաձայն՝ նկատելի կարևորություն տալով իրենց ասածին և զգուշանալով: Ազգայնության և ազգայնականության խոսույթը շուկայում, սակայն, փոխվում է 2010–ականներից, և զրուցակիցներիցս մեկը ասում էր. «Պարսիկները հմի էլ չեն գալիս Ֆիրդուս, հիմի էլ հնդիկներն են եկել լցվել Ֆիրդուս, այ ընդել լիքը վարձով են ապրում, շատացել են»: Այս բազմամշակութայնությունը և բազմաէթնիկությունը զրուցակիցներիս մեջ անհանդուրժողականություն արտահայտող «լցվել», «գեշ», «ահավոր», «կեղտոտ», «աղքատ» բառամթերքով էին արտահայտվում:

Այնուհանդերձ, Հանրապետության հրապարակը և Տիգրան Մեծի փողոցը հիմնականում ընկալվում են որպես բազմաէթնիկ արևելյան մշակույթով հարուստ միջավայր: Իսկ Ֆիրդուսի շուկայի փոխակերպումներին զուգահեռ վերափոխվում է նաև Տիգրան Մեծի պողոտայի՝ Ֆիրդուսի և Հանրապետության հրապարակի միջև գտնվող հատվածը: Հանրապետության հրապարակում զբոսնելիս այնտեղ կայանած մեքենաներից ինձ էին մոտենում մարդիկ և խոսելով պարսկերեն՝ առաջարկում էին (ինչպես հետո իմացա) վարձով բնակարան կամ զբոսաշրջային տուրեր Հայաստանով: Այսինքն՝ այս հատվածը համարվում է իրանցիների ակտիվ այցելության վայր: Այս պատճառով է, որ Հանրապետության հրապարակում՝ Կառավարության տան կողմի կանգառում հիմնականում պարսկերեն գրառմամբ պաստառներով միկրոավտոբուսներն են: Հրապարակը ոչ ֆորմալ այն սահմանն է, որտեղից սկսվում և տեսանելի է դառնում քաղաքային առօրյայում պարսկական մշակույթի արդի մի շերտը: Այդպես հրապարակից դեպի Ֆիրդուսի շուկա հատվածում խոսացված են պարսկերեն պաստառներ, գովազդներ և հայտարարություններ, ռեստորաններ, հյուրանոցներ, անշարժ գույքի գործակալություններ, տուրիստական

of Soviet Armenia, the area was settled by the Muslim community, and the Azerbaijani people lived here. Many of my interviewees believed that those traders in Firdus were the same Azerbaijanis who lived there, but “left for Iran, became Iranians, remained the same Turks” and returned to Yerevan as citizens of Iran. They said this in a low voice, apparently giving importance to what they said, and, as it were, exercising caution. However, the discourse on national and nationalism in the market changes since the 2010s, and, as one of the interviewees noted, “the Persians are no longer interested in Firdus, now it is full of Hindus who rent there. Their number has increased.” The interviewees described the multiculturalism and multi-ethnicity of this place using words of intolerance such as “filled”, “ugly”, “terrible”, “dirty”, “poor”, etc.

However, the Republic Square and Tigran Mets ave. are usually perceived as a multi-ethnic environments rich in oriental culture. The Firdus district is transformed continuously. In the Republic Square, I was greeted by various people in Farsi, as I learned later, they were offering houses for rent or tours in Armenia. This means that the Iranians are actively visiting this part of the city. For this reason, various minibuses covered with posters in Persian are parked near the Republic Square.

The square itself is an unofficial boundary that reveals one of the layers of Persian culture and makes it visible in the daily life of the city. This part of Tigran Mets Avenue, between the Republic Square and the Firdus Market, contains Persian restaurants, as well as hotels, travel agencies and real estate agencies, posters, advertisements and announcements. This part of the street has become a tiny environment for intercultural communication, which combines ethnic, religious and social identity.

The Firdus Market and its neighborhood are not similar to other districts and public spaces of Yerevan. The Firdus Market was formed, among other commercial places, due to economical crisis in the years of early independence. But it is distinguished by its urban environment, as it

Линейный
депозитарий



ընկերություններ: Այն դառնում է միջմշակութային հաղորդակցության միջավայր, որտեղ համատեղվում են տարբեր ինքնություններ և պատկանելություններ (էթնիկ, կրոնական, սոցիալական):

Ֆիրդուսի շուկան և դրան հարակից թաղամասը տարբերվում են երևանյան այլ թաղամասերից և հանրային տարածքներից: Ֆիրդուսի շուկան, ինչպես 1990-ականներին ձևավորված երևանյան այլ առևտրային տարածքներ, ձևավորվում է անկախության առաջին տարիների տնտեսական ճգնաժամի պատճառով: Սակայն այս շուկան մյուսներից տարբերվում է իր քաղաքաշինական միջավայրով. ամբողջությամբ ձևավորված լինելով ետնաբակային տարածքում՝ առանձնատների բակերում, այն ըստ էության նեղիկ փողոց է՝ վերափոխված շուկայի: Խորհրդային և հետխորհրդային տարիներին դրա շուրջը կառուցված բազմահարկ շենքերը դարձել են այդ թաղամասը քաղաքից թաքցնող բնական պատնշները կամ սահմանները:

Ֆիրդուսի շուկան ավելի մեծ և բազմաբնույթ շուկայական միջավայրի մի հատվածն է: Այդ պատճառով Ֆիրդուսի շուկայի՝ այս հատվածում ձևավորվելը համապատասխանում է միջավայրի համատեքստին և տրամաբանությանը: Քաղաքի այս հատվածը պատմականորեն և օրինաչափորեն դառնում է որպես ֆորմալ և ոչ ֆորմալ շուկաների, առևտրային գոտիների ձևավորման և դրանց տեղակայման խտացված միջավայր: Այդ պատճառով Երևանի այս հատվածը նման է մեծ շուկայի:

Ֆիրդուսի շուկան նաև ընկալվում է որպես արևելյան շուկա, հատկապես այն պատճառով, որ սկզբնական շրջանում այն հիմնադրում են հենց իրանցիները:

Այն միջմշակութային հաղորդակցության միջավայր էր, և այստեղ հանդիպում էին ոչ միայն գյուղ-քաղաք ինքնություններով և պատկանելությամբ, այլև տարբեր էթնիկ և կրոնական ինքնությամբ մարդիկ:

Այստեղ հանգուցվում են քաղաքային, հանրային, նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի առօրեականության մասին հիշողությունները:



was completely formed using the courtyards of houses. In fact, it was a narrow street that turned into a market. High-rise buildings that appeared around it in the Soviet and post-Soviet times became natural barriers or boundaries to keep it hidden from the city.

Historically, the Firdus Market has been part of a larger and more diverse commercial environment. The formation of the Market corresponds to the context and logic of its distinctive environment. This part of the city has become a favorable environment for formation of formal and informal markets and concentration of commercial zones, which makes it look like a huge market.

The Firdus Market was also perceived as an Eastern market, especially because it was founded by the Iranians. It created an environment for intercultural communication where people with different cultural backgrounds as well as different ethnic and religious backgrounds could meet. Here is the intersection of daily life memories of the urban, social, pre-Soviet, Soviet and post-Soviet eras.



ՖԻՐԴՈՒՍԻ ՄԱՐԴԻԿ

ՆԱԻՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մանկությունս անցել է Ֆիրդուսում. այնտեղ ապրել ենք մինչև 1966 թվականը, բայց ամեն ինչ շատ պարզ հիշում եմ: Ապրում էինք փողոցի վերջում գտնվող տներից մեկի երկրորդ հարկում: Հարևաններին լավ եմ հիշում: Մի անգամ կատվի քայլվածքով գաղտագողի անցա հարևանի բակը: Զոջ Աղայի տունն էր: Նրանից բոլոր երեխաները վախենում էին, բայց ես խախտեցի արգելքը, որովհետև շատ էի ուզում տեսնել ճագարներին, որ նրանք պահում էին իրենց այգում:

Երբ փոքր ենք, մեզ ամեն ինչ մեծ ու զարմանալի է թվում: Ու նրանց տան կցակառույցներից մեկի փայտե ցանկապատի ճեղքերն ինձ համար մեծ էկրաններ էին: Ես տեսա, թե ինչպես էր նա հաշվում իր ոսկիները, որ իրար վրա էին դարսված: Ինչ-որ տեղից նրա վրա լույս էր ընկնում, շողքն ընկնում էր ուղիղ ոսկու շարքերի ու նրա ձեռքերի վրա: Օդում կանգնած փոշին ու ոսկիների փայլը... Այնքան գեղեցիկ էր: Այդ տեսարանը ընդմիշտ մնաց հիշողությանս մեջ:

Առաջ այնտեղ ծառերի միջև ամվակներ էին հոսում. ընկերներով գնում էինք, ձեռքներս փայտ վերցնում ու կանգնում ամվակի գլխին, իբրև թե ձուկ ենք որսում: Այսպես մանկության տարիներին Ֆիրդուսում երևակայում ու գիտակցությանս մեջ դաջում էի տարբեր կերպարներ ու սյուժեներ, որ ծնվում էին իրական առօրյայից: Ծնողներս նկարիչներ են. հայրս ու մայրս նկարում էին, մինչ մենք իրար գլխի էինք հավաքվում հարևանի տան տանիքին. մեր տունը գնել էինք Բագր անունով ադրբեջանցուց: Երբեմն մաման նկարում էր բակի քարերին նստած, ու

PEOPLE OF FIRDUS

Naira Muradyan

I spent my childhood in Firdus where we lived until 1966, but I remember everything very well. We lived on the second floor in one of the houses at the end of the street. I well remember our neighbors. One day, I slipped into our neighbor's courtyard in cat's gait. It was Jodj Aga's house. All the children were afraid of him, but I braved the prohibition as I really wanted to see the rabbits they kept in their garden.

When we are small, everything seems big and amazing to us. The small holes in the wooden fence around one of the outbuildings of Jodj Aga's house were for me as large screens. I saw him counting his golden coins, stacked in columns. The light coming from somewhere fell on him, and the rays fell straight on golden columns and on his hands. The dust, frozen in the air, and the glitter of the golden coins... It was so beautiful! I kept this scene in my memory forever.

Then little streams flowed under trees, and we went to play there with friends. We stood over the streams, holding sticks and pretending to fish. So I spent my childhood on Firdus, visualizing and absorbing various images and scenes born there from everyday life. My parents are artists. They painted even then, when we huddled on the roof of the neighbor's house. We bought our part of that house from an Azerbaijani man named Bagr. Sometimes my mum worked sitting on the stones in the yard, and the children around would gather

փողոցի բոլոր երեխաները հավաքվում էին՝ նայելու,
թե ինչպես են նրա շտրիխներից ծնվում տարբեր
կերպարներ: Հավանաբար այդ ժամանակ ես էլ
փողոցից հավաքում էի պատկերներ ու կերպարներ՝
ծակ փորով տղամարդ, կերոսին վաճառող կին,
գեղեցիկ վարսերով, գլխաշոր կապած աղջիկ: Նրանք
միշտ ինձ հետ են, և երբեմն ես նկարում եմ նրանց իմ
նոթատետրերում:

to watch attentively how her touches gave birth
to various characters. Apparently, I also collected
scenes and characters from this street – a man
with a holey belly, a woman selling kerosene,
a girl with beautiful hair, covered with a shawl.
They have been with me along all my life, and
sometimes I draw them in my notebooks.

շնորհ
 սպիտակ սիրուն ժպիտ աղջիկ
 ծիղր խաղա՛ծ գլխով, գլխին
 ինչ անհմ զգեստ և կապտո՛ւ Եվն,
 որ խիստ գունդա՛յն ծաղիկ
 անուն











Լուսանկարում եմ 4 տարեկան եմ: Հագել եմ նոր ձմեռային կոշիկներս,
որ սխալվել ու ամռան կեսին էին նվիրել:

I am four years old in this photo. I wear my new winter shoes, which I
jokingly received in the middle of summer.



Մամայիս գրկում, Ակուլիկենց պատի ֆոնին:



Եղբորս սարքած հագուստով՝ Չինգաչգուկ-Գոյկո Միտիչի կերպարում:



Մամայի նկարած՝ իմ մեկ տարեկան գլուխը:

Mom drew my year-old head.



Գրիշը, ես ու Այծուն մեր աստիճաններին:

Grish, me and Aytso, sitting on the stairs in our house.



Բազմաշերտ հագուստին սագող
ալելը ձեռքիս:

With a broom suitable for my multi-
layered clothes.



Տան իմ անկյունում:

In my corner.



Մաման նկարում է բակի երեխաներին, ես սպիտակ գլխարկ եմ դրել ու նայում եմ եղբորս ֆոտոխցիկի օբյեկտիվին:

Mom draws children from the yard. Wearing a white hat and looking into my bro's camera.



Խմբակային արևային

Sunny group picture.





Անոյենց պատուհանի մոտ, դեղին վերնաշապիկով. սա վերջին լուսանկարն է Ֆիրդուսում:

Against Ano's window, wearing a yellow t-shirt. This is the last photo from Firdus.

«Ֆիրդուսի փողոցը Երևանի ամենահին առանձնատներով թաղամասն էր: Փողոցի անունը առաջացել ա մոտ 250 տարի առաջ: Դա միակ փողոցն ա, որի անունը երբեք չի փոխվել, նույնիսկ սովետական շրջանում. անհատի անունը պահպանվեց: Երբ փոքր էի, մեր բնակչության կեսից ավելը երևի մահմեդական էին: Ասում էին՝ պարսկահայատակներ էին: Հայրս որ եկել ա, 20-ական թվերին, տունը առել ա պարսկահայատակից: Էդ մարդը 1930-ական թվերին թողել գնացել ա Պարսկաստան, բայց մինչ էդ 10 տարի մեր հետ տարբեր մասնաշենքերում ապրել ա: Երբ քաղաքական իրավիճակը բարդանում ա, ոչ էլ վաճառում ա տան իրա մասը, հորս ա նվիրում ու գնում Պարսկաստան: Մեր կողքի հարևանը, լսած կլինեք, հանրահայտ քամանչահար էր, Վիդոկը: Վիդոկի հայրը էլի նույն ցեղերից էր, ադրբեջանցի էր, իսկ մայրը հայ էր:

Որ փոքր էի, մեզ չէին թողում դուրս գալիք, փողոցը ցեխոտ էր, կավահող էր ամբողջը: Հիշում եմ՝ անգամ պատերազմից հետո գերիները, որոնց մենք բոլորս ֆաշիստ էինք համարում, ես փոքր էի, առանձնապես էդ բաները լավ չէի հասկանում, մտնում էին փողոց խմբերով: Ըստ երևույթին, դա արդեն Նյուրնբերգյան դատավարություններից հետո էր: Գալիս էին, հաց ու շաքար մուրում: Հրաշալի գործիքներ էին շինում, նվիրում էին, երբ մայրս հաց էր տալիս: Ավագները՝ արդեն մոտ 15 տարեկան երեխաները, գոռում էին՝ Հիտլեր կապուտ: Ես էլ չէի հասկանում՝ կապույտ, կապույտ. գույն ա էլի: Իսկ գերիները հասկանում էին ու քֆուր էին տալիս Հիտլերին, որ ընկել էն էդ վիճակին: Հետագայում իմացա, որ հիմնականում հունգարացիներ էին:

Մայրս շաքարն ու հացը տալիս էր մեզ՝ տանենք էդ գերիներին, որ ծտողներիս չասեն՝ կուլակի երեխեք են ու հաց են բաժանում... 1937-ին պապիս տարել, գնդակահարել էին, որովհետև հոգևորական էր: Հորս էլ էին բռնել՝ որպես տերտերի տղա, բայց հայրս հայկոպի, հայիդդոքչինի տնտեսական մասի հիմնադիրներից էր: Հիմնարկությունները համարձակվել էին նամակներ գրել. հորս մի 6 ամիս պահելուց հետո ազատել էին:

Firdusi Street was in one of the oldest neighborhoods with private residences. It was named Firdusi about 250 years ago and was the only street that was never renamed even in the Soviet times. Individual's name was preserved. When I was young, half the neighbors here were probably Muslims. They said they were Persian citizens. My father moved here in the 20's and bought the house from a Persian subject person who lived with us for about 10 years in different parts of the house but then left in the 1930's. When the political situation became complicated he gifted his part of the house to my father and moved to Persia. Our neighbor was a famous kamancha player, Vidock, maybe you have heard of him. Vidock's father was from one of those tribes, he was Azerbaijani, and his mother was Armenian.

As kids we were not allowed to play outside. It was a muddy street of alum earth. I remember how the prisoners of the Second World War whom we considered fascists came to our street in groups. Probably, it was after Nuremberg trials. They came to ask for bread and sugar. They mastered perfect tools and instruments and presented them when my mother gave them bread. By that time, teenagers would shout "Hitler Caput". And it was incomprehensible to me: the word "kapuyt" means "blue" in Armenian, so caput for me was the color. But the captives understood this very well and cursed Hitler for they were in such a situation. Then I learned that they were Hungarians.

My mother gave us bread and sugar to give them to that prisoners, so that no one would say that we are children of the kulak. My grandfather was a priest and was executed in 1937. My father was also arrested as a priest's son but he was one of the founders of the economy of Armenian hydraulic engineering. These cooperatives dared to write letters and rescue him after six months.

After the war, many moved to Firdus from

Պատերազմից հետո գյուղերից ահագին մարդիկ էին եկել Ֆիրդուս, մանկավարժականի կողմը ֆաներայից փոքր տնակներ էին սարքել ու մեջը ապրում էին: Պահակություն էին անում, բանվորություն էին անում մանկավարժականում և այլն: Ապարանցիներ կային, մարտունեցիներ: Այդտեղ սառցադաշտը որ կա, պահպանվել ա, թուրքի դվոր էին ասում: Ուղտեր էին գալիս, տասը-տասնհինգ հատ, վրաները՝ աղ: Առաջ Հայաստանում աղի հանք չկար, աղը Երևան բերում էին Նախիջևանից, Կողբի կողմերից: Բրիկետներ էին՝ ոնց որ մարմարի կտորներ՝ կապած ուղտի երկու կողմերից: Էդ ուղտերը ծանրության տակ որ բարձրանում էին, նենց ոռնոց էին հանում, ոնց որ առյուծի ոռնոց լիներ:

Երբ դեռ ներգաղթի կոչեր էին անում, ահագին հայ եկավ քաղաք Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից: Դա խրախուսվում էր Սովետի կողմից. տեսե՛ք Սովետը ինչքան լավն ա, մարդիկ գալիս են ստեղ: Էդ ժամանակ դեռ ահագին աղբրեջանցի էլ կար: 40-ականների վերջին Ստալինը կազմակերպում ա տեղաշարժը, ես դա հիշում եմ, Ֆիրդուսի աղբրեջանցիներն էլ գնացին: Օրինակ՝ Վիդոկի հորեղբայրները կային, մաքուր աղբրեջանցիներ էին: Իմ հասակակիցներից կային շատ, հուզմունքով ճանապարհեցիք իրանց... Թուրք ու հայ չկար, բոլորը մեր հարևաններն էին: Մեր տան պաղվալային մասում էլ էին ապրում աղբրեջանցիներ: Բանվոր մարդիկ էին, աղքատ: Բայց արդեն 1980-ականների դեպքերի ժամանակ մի երեք ընտանիք էր մնացել: Վերջին գնացողներից մեկը մեր հարևանն էր՝ Հուսեին էր անունը: «Կոմունիստ» թերթի խմբագրի վարորդն էր: Մինչև 1991 թիվը մնաց: Մի օր էլ տեսնեմ՝ տունը վաճառեց... քայց հարևանների կողմից ոչ մի թշնամական բան չկար: Դուրս եկա, ասեցի. «Հուսեին, դո՛ւ ուր ես գնում»: Իրա հերն ա ծավել Երևանում, մի տղեն էլ Կենտկոմում հրահանգիչ էր աշխատում: Ասեց. «Հաղթանակ եղբայր, Հայաստանում թուրք չմնաց, երեխեքս մեծացել են, վաղը, մյուս օր պիտի պսակվեն, հա, հիմա չեն նեղում, քայց հետո խնդիր ա դառնալու...»:

villages. They built houses from the plywood or other materials near the Pedagogical University and lived there. There were from the regions of Aparan and Martuni, and were guards or laborers at the university.

The site of the preserved rink was called “Turki dvor” (Turk’s yard). They brought salt on camels for sale. There was no salt mine in Armenia then, salt was brought from Nakhijevan or Koghb regions. You would see from 10 to 15 camels loaded with salt bricks similar to marble, which were hung on a camel on both sides. The camels were overloaded and roared like lions while trying to get up.

When there still was a call for repatriation, many Armenians arrived from France, Bulgaria, and Romania. It was encouraged by the Soviet power, that is, look how great the Soviet is, people come here to live. At that time we had many Azerbaijanis living here. In the late 40’s, Stalin organized this resettlement, and I remember that Azerbaijanis of Firdus also left. For example, uncles of Vidock left, they were native Azerbaijani. Many of my age, we saw them off with sorrow. We did not see any difference between Armenians and Turks, they were our neighbors. Some of them rented the basement of our house. They were laborers, they lived poorly. Then, at the time of the 1980’s events, only three families remained. Among the last people who left was Hossein, our neighbor. He was “Komunist” newspaper editor’s driver. He lived here until 1991. Once I saw him sell the house... but he was just well getting on with neighbors. I went out and asked him “Hossein, why did you decide to leave?” His father was born in Yerevan, one of his sons worked as an instructor at the Central Committee. He said: “Haghtanak brother, there are no more Turks in Armenia. My children are already grown up, and they will be getting married one day or another. Nobody insults them now, but it can turn into a problem...”





ՏՈՒՆ № 12/7
ՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

HOUSE № 12/7
NINA SARGSYAN

Սարգսյանների ընտանիքը Ֆիրդուսի փողոցում սկսել է բնակվել 1950-ականների կեսից: Ըստ Նինա Սարգսյանի՝ տունը ստացել են խորհրդային տարիներին պետության կողմից, երբ նախկին բնակիչներին այլ տուն են տվել:

Այժմ այստեղ ապրում է Նինայի թոռը՝ Վահեն, իր կնոջ ու երկու երեխաների հետ: Վահեի հայրը, որ մեծ սեր ուներ լուսանկարչության հանդեպ, ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար դեռևս խորհրդային տարիներին պատրաստել է անհատական ֆոտոալբոմներ, որոնցում մեծ հոգատարությամբ շարված են ընտանիքի առօրյայից բազմաթիվ լուսանկարներ ժամանակագրական հաջորդականությամբ:

The Sargsyan family moved to Firdusi Street in the mid-1950's. According to Nina Sargsyan, the house was given to them by the state, as the former residents received another house. Now Nina's grandson, Vahe, lives here with his wife and two children. Vahe's father was big fan of photography and created personal photo albums for the family and neatly placed pictures from everyday life in chronological order.

Ֆիրդուսի մուկ-մանկապարտեզի խմբային նկար. 1985-1986 թթ:

Group picture from the kindergarten, 1985-1986.





Վահեն և հարևան Արամը
Սարգսյանների տանը
Ֆիրդուսում, 1988 թ:

Vahe and his neighbor
Aram in Sargsyan's house
in Firdusi Street, 1988.



Նինա Սարգսյանը ընտանիքի անդամների հետ, 1960-ականների սկիզբ:

Nina Sargsyan with her family. Beginning of the 1960's.

«Մեր նախնիները Թավրիզից են: Երբ սաղ ցեղով տեղափոխվել են Նախիջևան, մեր կողմը հետո էկել ա Արմավիր, հայրս հետո էնդեղից գնացել ա Վորոնեժ՝ սովորելու: Իսկ պատերազմից հետո արդեն Ֆիրդուսի տունն ա անել: Իմ հայրը հայտնի ատամնաբույժ էր, փողոցում բոլորին ինքն էր բուժում, դրա համար էլ դեռ էն տարիներից սաղին ճանաչում էինք:

Փողոցում Թավրիզից էի կային մարդիկ, «թուրքեր» էին, 80-ականներին, որ ստիպված պետք ա գնային Բաքու, չէին ուզում: Օրինակ՝ տիկին Սոֆյան, բուժքույր էր, ասում էր ինձ. «Էմո ջան, գնա՛ք Բաքու, ինչ անենք. ոչ մի ծանոթ չունենք, չենք ապրել ադրբեջանցիների հետ, մերոնք Թավրիզից են, իսկ մենք ստեղ ենք մեծացել»: Սոֆյայի եղբայրները Բաքվում էին սովորում, իսկ հայրը էս մեր մանկավարժականում էր դասախոսում: Հենց ընկի թուրքեր չէին ապրում ստեղ, Սալմաստից եկածներ էին: Մայրս լավ գիտեր թուրքերեն, հարցնում էր՝ բաջի ջան, դրտեղից եք, ասում էին՝ Սալմաստից, Թավրիզից: Սաղ լաց էին լինում, չէին ուզում գնային: Դե իրանք միշտ ռուսական դպրոց էն գնացել, լեզուն չգիտեին: Հետո նոր մանկավարժականի ադրբեջաներենի բաժինը բացվեց:

Ստեղ բնակիչներով իրար շատ մոտիկ ենք՝ մի ընտանիքի նման: Էս շուկայի ժողովրդի հետ էլ շատ լավ ենք: Ստեղ պրոֆեսոր Զոլյանն ա ապրել, բժիշկներ, օրգանների աշխատողներ, շատ տարբեր մարդիկ կային, բոլորս էլ շատ էինք սիրում էս տեղը: Ուրիշ երկրներում շատ են տեսել՝ ո՞նց են մեր փողոցի նման տեղերում տարբեր ազգային տարազներ, բաներ վաճառում, մենք էլ կարայինք նման մի բան անենք, եթե պետությունը օգներ»:

Our ancestors were from Tabriz. My ancestors, the whole family moved from Tabriz to Nakhijevan. Then a part of the family moved to Armavir. My father left for Voronej to study there. He bought our house after the war. My father was a famous dentist, a dentist for everyone living here, so at that time we knew everyone here.

There were other people, ‘Turks’ from Tabriz in our street who had to but were unwilling to move to Baku in the 80’s. Mrs. Sofia, for example, she was a nurse at the hospital, told me: “Emo jan, what we will do in Baku? We have no friends there, we never lived with Azerbaijanis, our ancestors were from Tabriz and we were grown up here”. Sofia’s brothers were students in Baku, and his father was a lecturer here, at the Pedagogical University. There were not Turks by origin, they had moved from Salmas. My mother was good at Turkish and asked them where they were from. They replied that they were from Salmas, Tabriz. They were very sad then, nobody wanted to leave. They had studied Russian and could not speak Azerbaijani. Later, the department of Azerbaijani language opened at the Pedagogical University.

Here in this street we are like a family for each other. We have good relations also with the workers of the market. Here lived Professor Yolyan, as well as doctors, and people working in the departments of state security, and people with different backgrounds. I visited streets like ours in other countries where national costumes and other national accessories are sold. We could do the same here with the help of the state.



Էմիլյա Սաֆարյան, 1970-ականների սկիզբ



Սաֆարյանների ֆոտոարխիվից. 1950-ականներ



ՏՈՒՆ N° 15/3
ԿԼԱՐԱՅԻ ՏՈՒՆԸ

«Օրիորդական ազգանունս Քոչարյան է, հիմա՝ Մելքումյան: 1988-ին եմ տեղափոխվել Ֆիրդուս, հենց Սումգայիթից հետո: Եկա, ու 15 օր հետո պատերազմը սկսվեց: Մինչև էդ 17 տարի ես ստեղ տուն էի փնտրում... Արթուրս դեռ փոքր էր, հա ասում էր՝ մամա, պիտի Հայաստան գնանք, հա կրկնում էր: Բաքու ոչ տեսար էինք գնում, ոչ կինո էինք գնում: Ամուսինս գնում էր տների շուկա: Ես էլ գնում էի Բաքոռուսպոլկա. գրքեր կային, Մոսկվա, Երևան, Թբիլիսի, ամեն ինչ, ու գրած՝ Երևան-նա-Բաքու, Երևան-նա-Բաքու: Տուն էի ման գալիս: Հետո գտանք մեկին, արագ պայմանավորվեցինք ու փոխեցինք: Մեզնից առաջ ապրող կնոջ անունը Սուլեյմանովա Սոֆյա էր. իրանք գնացին, մենք եկանք՝ նույն օրը: Արդեն տուրուդմիտը սկսվել էր: Իրանց երկու երեխան էլ ընդել էին սովորում: Լավ երեխեք էին, վատը չէին: Իրանք էլ էին հանգիստ մարդիկ: Իմ հինգ սենյականոց 4 բալկոնով ընտիր տունը փոխեցի էս ավերակների հետ... Ստեղ 15 հատ ծառ կար առաջ, կտրել, ճանապարհ են բացել: Իսկ տան մոտ մի հատ հոր ա եղել: Ասում էին՝ թուրքը ոչխարը մորթում էր, կախում մեջը: ...Կոմիտասի նման ուայոն էր իմը, իսկ ստեղ հողաշեն էր սաղ, ընկնում էիր մուտքի մոտ»:

HOUSE N° 15/3
HOUSE OF CLARA

“My maiden name was Kocharyan, now Melkumyan. I moved to Firdus in 1988, after the Sumgayit events. I moved here and the war began in two weeks. I had been looking for a house in Armenia for 17 years. My son Arthur, he was a little boy then, insisted all the time that we should move to Armenia. We had no leisure time there in Baku, we didn’t attend theaters or cinemas. My husband looked for a house in the market of house. And I often visited Bakgospravka (Baku State Reference). There were books about Moscow, Yerevan, Tbilisi, everything was written there Yerevan-to-Baku, Yerevan-to-Baku. I was looking for a house. Then we found someone and quickly agreed to exchange houses. Her name was Suleymanova Sofia. They left and we moved here on the same day. The scrimmage had already begun. Her children studied in Baku. Good guys, really. They were calm people. I changed my luxurious house with 5 rooms and 4 balconies with these ruins... there were about 15 trees here; they cut them for making a road. And here, near the house, there was a pit. They say Turkish men butchered sheeps and hung there [to cook a barbeque]... I lived in a district like the Komitas district in Yerevan, and here everything was made of earth, you could fall in front of the house entrance...”



«Էս շենքը 1930-ականներին են սարքել, առաջ մի բնակարանում մի քանի ընտանիք էր ապրում: Մեր տանը երկու ընտանիք կար, վերևի հարկում էլ էր տեղ, անգամ պաղվալում էին վարձով ապրում: Հայրս տեղափոխվել ա էս տուն 30-ականներին, իսկ 40-ականներին արդեն ես եմ ծնվել: Հիմա բնակարանի կեսը եղբորինս ա: Դիմացի սեփական տներից մեկում էի մեր բարեկամներն են, եղբորս տղան ա: Սա միակ պետական շենքն ա Ֆիրդուսում, հայրս ու պապս էլ են մասնակցել շինարարությանը: Առաջ շաբաթվա վերջին գալիս էին ստեղ ու շաբաթ-կիրակի շենքի պատերն էին կանգնացնում: Մի մետր հաստության պատեր են, երկու շաբթ քարերով, փայտե առաստաղով:

Սաղ փողոցը ճանաչում ա իրար, ընկերություն անում: Ներքևը Շամիրամի տունն էր, տղեն Սովետի հերոս էր, էս վերևում ապրողը արդեն գնացել ա, ուսկումի քարտուղար էր, հետո դառավ Պիշետորգի տնօրեն, հետևի տանը (Հանրապետության փ.) աղրբեջանցիներ էին ապրում, Էփոյի ընտանիքն էր, լավ մարդիկ էին:

Էփոն, Զեփիրը իմ մանկության ընկերներն են: Բաքվում էին սովորում, բայց արձակուրդներին միշտ գալիս էին: Էս ժամանակ չգիտեինք ինչ ա աղրբեջանցին կամ հայը: Բոլորը գնացել են վաղուց, մնացել էին մենակ կողքի տանը ապրող աղրբեջանցիները, Սոֆյայի ընտանիքը, իրանք էլ 1988-ին գնացին, Կարայի հետ փոխանակեցին տունը: Սոֆյայի տղաները լացում էին, չէին ուզում գնային: Էլի մեկը կար, Կադրը, լավ տղա էր, Մասիսում հողեր ուներ, բանջարեղեն էր աճացնում, նախ բերում էր թարմ բանջարեղենը մեզ տալիս, հետո նոր վաճառում»:

ՄԻԼԵՏԱ ԱԴԻՅԱՆ

«Ես Կիրովպաբադում եմ մեծացել, աղրբեջանցիների մեջ: Հայերեն էլ, աղրբեջաներեն էլ լավ խոսում եմ: Ստեղ պաղվալային հարկ էինք վարձում, հետո Գագայի հետ ծանոթացանք ու ամուսնացանք: Սաղ կյանք ստեղ ենք ապրել: Շատ ենք սիրում մեր փողոցը:

Երբ շուկան դեռ կար, լիքը պարսիկներ կային, բայց դրանից առաջ աղրբեջանցիներն էին շատ:

“This is a building from the 1930’s, and several families lived here in the same apartment. We lived with another family, two more families lived in an apartment on the next floor. They even rented and lived in the basement. My father moved here in the 30’s, and I was born in the 40’s. Now my brother owns half of this apartment. Some of our relatives, my brother’s son, live next door, in a private house. And this is the only public housing here. My father and grandfather worked on its construction. They came here on weekends and made the walls. These are one-meter-thick walls with a double line of stones and wooden ceilings.

Everyone in the street knew them and was friends with them. Shamiram lived down the street, her son was a Soviet hero. The one who lived on the next floor also left; he was the secretary of the Regional Committee, then he was the director of the Pishchetorg. On the back side of our house (Hanrapetutyanyan St.) also Azerbaijanis lived, the family of Epho, very nice people.

Epho and Zephir were my childhood friends. They studied in Baku but they always came here for the summer holidays. At that time, we never figured out for ourselves who is Azerbaijani or Armenian. All they left long ago. The last to leave was Sofia’s family. They exchanged their house with Clara and left in 1988. Sofia’s sons wept, they didn’t want to leave. There was another nice guy, Kadr, he had land in Masis and he cultivated vegetables. He provided us with fresh vegetables before selling them to others”.

MILETA ADIYAN

“I was born in Kirovabad, among Azerbaijanis. I speak both languages well. Here we rented a basement. Then we met with Gaga and got married. We have lived here all our lives, and we love our street very much.

In the active years of the market, there were many Persians here, but there used to be many Azerbaijanis before. Everyone had to leave in



Հարությունյանների ֆոտոարխիվից 1970–ականներ, 1980–ականների սկիզբ:

Harutunyan family's photo archive, 1970s, early 1980s.



1980-ականներից բոլորը ստիպված գնացին, Սումգայիթում, Բաքվում մերոնց երբ սպանում էին, իրանք հասկանում էին, որ վտանգավոր կլինի դրանից հետո ստեղ մնալը: Բայց հայերից մնացել են էստեղ, որ փոխել են ազգանուններն ու վախում են ասեն՝ հայ են: Իմ բարեկամուհին էլ ա էստեղ. ամուսնացել էր ադրբեջանցու հետ ու չէր կարա թողնել ընտանիքը: Մեր կապը տենց էլ կորավ... Մի քանի տարի առաջ չդիմացա, զանգեցի Բաքու. մի երկու թույլ խոսացինք, բայց երբ երեխեքը մտան սենյակ, սկսեց ադրբեջաներեն խոսալ...»:

the 1980's. When the Armenians were killed in Sumgayit and Baku, they realized that it was dangerous for them to stay here. But there are Armenians who still live there. They've changed their surnames and they're afraid to talk about their origin. I have a relative there who had married an Azerbaijani, and she could not leave her family. That's how we lost contact with her... I could not help myself and phoned her a few years ago. We could speak for a few minutes, and then her children entered the room, and she began to speak Azerbaijani..."

ՏՈՒՆ №26
ՎԱՐԴՈՒԻՏԻ (ՍԵԴԱ) ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ֆիրդուսի մի նեղիկ անցումում, որտեղ իրար կպած կիսաշեն կացարաններ են, Վարդուիին է ապրում: Տեղացիները նրան Սեդա են ասում: Նա ծնված օրվանից ապրում է Ֆիրդուսում: Հոր ընտանիքը այստեղ բնակություն է հաստատել՝ գաղթելով Մուշից: 26 տարեկանում հայրը սպանվել է, և մոր ու հորաքույրների հետ շարունակել են ապրել Ֆիրդուսի կացարանում: Վարդուիին խոհարար է, աշխատում է Երևանի հյուրանոցներից մեկում: խոհարարության հանդեպ հետաքրքրությունն ու սերը ձեռք է բերել մորից, որը խորհրդային տարիներին աշխատել է նախկին կարամելի գործարանում: Մինչ օրս էլ Ֆիրդուսում հարևանները սովորություն ունեն բակերում խնջույքներ կազմակերպելու, որոնց ժամանակ խոհարարի դերը միշտ Սեդայինն է:

Այժմ Վարդուիին Ֆիրդուսում ապրում է իր երկու տղաների հետ: Մինչև հիմա էլ նա մեծ հոգատարությամբ պահպանում է ընտանիքին հարազատ հին իրերը՝ խորհրդային տարիներից մնացած Լենինի դիմանկարով այբբենարան, լուսանկարների ալբոմներ և այլն:

HOUSE №26
VARDUHI (SEDA) GRIGORYAN

Varduhi lives in a narrow passage, where the half-built residencies follow each other. Locals call her Seda. She lives in Firdus since her birth. Her father's family emigrated from Mush and settled here. Her father was killed when she was 26 years old. Together with her mother and aunts, she stayed at their house in Firdus. Varduhi is a cook and works in one of Yerevan hotels. She gained curiosity and love for cooking from her mother, who worked in a caramel factory in the Soviet times. Until now, neighbors are used to organize parties in the courtyards, and every time the cook is Seda.

Now Varduhi lives in Firdus with her two sons. She with great care keeps old and valuable items from her family: the alphabet with Lenin's portrait on the cover, old photo albums, etc.



1960-ականներ, Սեդան շարքում ձախից 5-րդն է:



ՏՈՒՆ №30 ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ (ԳԻՐԱԳՈՍՅԱՆՆԵՐ)

Նորա Կիրակոսյանը ծնվել ու մինչ օրս ապրում է Ֆիրդուսում: Ընտանիքը տեղափոխվել է Հայաստան Թուրքիայի Բիլեջիք քաղաքից 1925 թվականին նախ Գյումրի, ապա Երևանի Նարինանոլ փողոց, իսկ արդեն 1938-ին Նորայի հորեղբայրը՝ ճարտարապետ Հայկ Կիրակոսյանը, նախագծել և կառուցել է Ֆիրդուսի իրենց տունը, որտեղ առաջին հարկում ապրել է եղբոր՝ Միսակ Կիրակոսյանի ընտանիքը, երկրորդում՝ Հայկի ընտանիքը: Բիլեջիքում ընտանիքը զբաղվել է շերամաբուծությամբ, և նրանց հաջողվել է Հայաստանում հիմնել մետաքսի գործարանին կից իրենց շերամաբուծական գործարանը, որը, սակայն, երկար կյանք չի ունեցել:

Նորան պահպանում է հորեղբոր նախագծած Ֆիրդուսի տան գծագրերը, խորհրդային տարիներից մնացած տան շինարարական աշխատանքների վերաբերյալ բոլոր թղթերը:

Պատմում է, որ իրենց երկհարկանի տան դիմաց, որ այժմ կացարաններ են, նախկինում եղել է կավաշեն լվացքատուն՝ նախատեսված զինվորականների համար: «Առաջ դեպի լվացքատները նայող պատուհան ունեինք. փոքր ժամանակ շատ էի նայում պատուհանից՝ ոնց են բերում, լվանում շորերը: 40-ականներին քանդեցին, սարքեցին կացարաններ:

Ստեղ ադրբեջանցիներ կային: Կիմանաք այդ պատմությունը. Ստալինի ժամանակ՝ 47-48 թվերից, սկսեցին բոլոր ադրբեջանցիներին հանել տներից, տեղ էին ազատում Ադրբեջանի հայերի համար: Մինչև 70-ականները բոլորին հանել էին Ֆիրդուսից: Հետո էլ եկած հայերին էին հետապնդում, շատերին աքսորեցին Սիբիր»:

Այժմ Նորան ապրում է Ֆիրդուսում տղայի և նրա ընտանիքի հետ: Ասում է՝ չեն ուզում պայմանագիր կնքել ու լքել Ֆիրդուսը, թեև տարիներ առաջ, երբ շուկան դեռ չէին քանդել, ավելի լավ էր թե՛ իրենց, թե՛ մյուս բնակիչների համար. «Քանդեցին շուկան, որ էլ եկամտի աղբյուր չունենանք, հետո նոր սկսեցին տները գնելու պայմանագրեր առաջարկել: Շատերը հենց այդ պատճառով էլ վաճառեցին տները»:

HOUSE № 30 KIRAKOSYAN (GIRAGOSSIAN) FAMILY

Nora Kirakosyan has been living in Firdus since birth. Her family moved to Armenia from the Bilecik region in 1925. First, they settled in Gyumri, then moved to Yerevan, and lived in Narimanov Street. In 1938, Nora's uncle, architect Hayk Kirakosyan designed and built their house in Firdus for his and his brother Misak Kirakosyan's family. In Turkey, their family was engaged in sericulture, and they managed to open their own manufactory next to the silk factory, but it didn't survive.

Nora keeps all the design materials and construction documents of her uncle regarding their house.

She said that in front of their two-storey house there was a laundry for military personnel built of clay. "One of the windows of our house was looking the laundry room. When I was a child, I often watched from the window how they brought clothes to wash them. It was dismantled in the 40's, and residential houses were built instead."

"Azerbaijanis lived here. You probably know this story. In the 1947/48, all Azerbaijanis were driven out of their homes to room Armenians from Azerbaijan. All of them were sent away by the 70's. Then they persecuted Armenians who were new here, many were exiled to Siberia."

Now Nora lives in Firdus with her son's family. She said they have no courage to sign a contract with developers and leave the street, though living here was much profitable in the active years of the market. "They destroyed the market to cut our incomes, and then offered contracts to buy our houses. For this reason, many have sold their houses."



1900-ականների սկիզբ. Նկարում Նորայի նախնիներն են, կենտրոնում նստած են Նորայի հոր (Միսակ, Նորածին Երեխան) պապն ու տատը, ձախից կանգնած են Նորայի տատը և պապը (Զարուհի և Հովհաննես), ապա՝ պապիկի եղբայրները: Աջ կողմում նստած կինը ընտանիքի սպասուհին է՝ ազգությամբ թուրք: Մեջտեղում կքած պատանին Նորայի հորեղբայրն է՝ Կիրակոսը:

Beginning of the 1900's. Ancestors of Nora. In the middle: Nora's great grandparents, on the left Nora's grandparents (Zaruhi and Hovhannes), and her grandfather's brothers. On the right: the housemaid, Turkish by origin. The young boy in the middle is Nora's uncle, Kirakos. The newborn kid is Nora's father.



Կիրակոսյանների ֆոտոարխիվից, 1970-ականներ

Kirakosyan family's photo archive, 1970's

Հովնանյանների ընտանիքը Ֆիրդուսում սկսել է ապրել 1920-ականների սկզբից՝ փախչելով Վանից 1915 թվականին: Գոհար Հովնանյանը (Մարտին Հովնանյանի այրին) պահպանում է ընտանիքի անձնական լուսանկարների արխիվը, որտեղ Ֆիրդուսի փողոցը շատ կարևոր տեղ է գրավում: Արխիվում շատ կան նկարներ՝ տպված փոստային թղթերի վրա, որ տարածված էին 19-րդ դարում օսմանյան Թուրքիայում, ինչպես նաև խորհրդային տարիների լուսանկարներ: Դրանցից քանիսն արել է լուսանկարիչ հարևան Ռոբերտ Խաչատրյանը: Արխիվը պատկերում է ընտանիքի ծանր կյանքը ավելի քան 120 տարիների ընթացքում՝ ջարդերից փրկված նախնիներ, Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցներ՝ աքսորված Գուլագ, ընտանիքի հոր կորուստը և այլն: Սակայն առօրյա կյանքից պահպանված լուսանկարներում, որտեղ ընտանիքը իրենց տանն է կամ բակում, մեծնում ենք ընտանեկան ջերմություն, անհոգ մանկություն ու անկեղծ սեր սեփական տան հանդեպ:

Կարինե Հովնանյանը այլևս չի ապրում Ֆիրդուսում, թեև ծնվել ու մեծացել է այնտեղ: Կարինեն մեծ կարոտով ու սիրով է հիշում եղբորը՝ Մարտինին: Ասես Ֆիրդուսի տան հետ կապված յուրաքանչյուր հիշողություն կապված է եղբոր հետ: «Ամեն ծառի հիշողություն կապված է եղբոր հետ: «Ամեն ծառի վրա փչակի պես տեղեր էր սարքել, դինամիտներ էին դրված, երաժշտության տակ գործ էինք անում, հավաքվում: Պապայիցս հետո ինքն էր հետևում տանը, սարքում, բարեկարգում: Դրախտային անկյուն էր սարքել մեր բակում. թթի, ծիրանի ծառեր ունեինք ու բոլոր հարևաններին բաժանում էինք: Տատիկս էդ ձև էր մեզ դաստիարակել. ասում էր՝ եթե յասամանը, թուրը չբաժանես, ծառը կխտովի, պտուղ չի տա: Ես գրկում էի ծառերը, ասում իմն ա էս ծառը, ասում էր՝ հա, լավ, քոնն ա, բայց պետք ա բաժանել: Շատ աշխատասեր էր եղբայրս, Սևանի «Արևիկ» ճամբարի պետն էր, երբ դեռ 22-23 տարեկան էր: Մեր փողոցում շատ կային երեխաներ, որ ծնողական ուշադրությունից դուրս էին մնում: Էդ երեխաներին բոլորին Մարտինը հավաքում, տանում էր ճամբար: Այ, օրինակ, Էմմայի քրոջ երեխեքը, հիմա մեծ տղաներ են, Սիրիայից գալիս էին էստեղ. 5-6 երեխա ունեք, իրանց էլ էր օգնում, սովորեցնում:

Ադրբեջանցիները շատ հետաքրքիր մարդիկ

The story of Hovnanyan family in Firdus begins in the 1920's, when the family settled here, escaping from Van in 1915. Gohar Hovnanyan (Martin Hovnanyan's widow) keeps the photography archive of the family, where Firdusi Street is the main place of events. The archive contains many photographs printed on postcards popular in Ottoman Turkey of the 19th century, as well as photographs of the Soviet times. Some of them were taken by their neighbor, Robert Khachatryan, who was a photographer. The archive gives an idea of the difficult life of the family over the past 120 years, tells about the ancestors who had escaped the Genocide, the participants of the Second World War, exiled to Gulag, the loss of the family's father, etc. However, pictures of everyday life show the family in their house or courtyard full of family warmth, carefree childhood and sincere love for their own house.

Karine Hovnanyan was born and raised in Firdus, but no longer lives there. She remembers his brother Martin with great love and affection, as if every memory of the house is also associated with him. "He made holes in the trees like hollow ones, and put speakers there so that we could work or gather listening to the music. He took care of the house after my father's death. He created a paradise in the courtyard. We had mulberry and apricot trees and we shared the harvest with all our neighbors. We were taught by our grandmother, who told us that the trees would get upset and would not give fruit if we did not share. I remember how I hugged the trees and declared that they were mine. She answered: yes, the trees are yours, but we have to share. My brother was a hard worker; he was the director of children's camp Arevik in Sevan at the age of 22-23. Many children in our street were out of parental attention. He gathered them all and took them to the camp. For example, the children of Emma's sister, now they are young people, they came here from Syria. She had 5 or 6 children, and he helped them, taught them."

"Azerbaijanis were very interesting; yes, I had some contact with them. There was a woman

էին, իրանց հետ առնչություն ունեցել են. մի կին կար, 7-8 երեխա ուներ, ամուսինը թողել գնացել էր, բայց բոլորը օգնում էին, մանկապարտեզում հայ երեխաների հետ իրա երեխաներին էլ էին պահում:

Ջոջ Աղենց դիմացի հատվածում էլ մի տուն կար, եղտեղ էլ էին աղբբեջանցիներ ապրում, ընկերուհի ունեի եղտեղից, մի օր էլ տեսա՝ Սումգայիթի օրերին իրերը հավաքում են: Բայց բոլորը օգնում էին միշտ իրանց, ամեն ինչով, ասում են՝ էս ինչի եք պատրաստվում, ո՞ր եք գնում, ասում ա՝ բա դուք բոլորդ լավ-լավ տներում եք ապրում, մենք էլ ենք գնում լավ տներում ապրենք»:

with 7 or 8 children, her husband left the family but everyone tried to be helpful. Her children were in the same kindergarten with Armenians. Azerbaijanis also lived near the house of Jodj Aga, I had a friend living in that house. Once I noticed that they were packing their belongings, these were the days of Sumgayit events. But everyone tried to help them in everything... I asked why they wanted to leave? She replied that we lived in nice houses, and they also wanted to go there and live in nice houses."



Կոնստանտին Զովնանյան, 1945 թ.

Constantine Hovnanyan, 1945.



1930-ականներ

1930s



Մարտին Հովնաթյանը երեխաների հետ, 1990-ականներ:

ՏՈՒՆ № 44
ՄԻՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ, ՌՈԲԵՐՏ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

Միրան Նաջարյանը ծնունդով Բեյրութից է, ամուսինը՝ Ռոբերտ Խաչատրյանը, արմատներով Շիրակի մարզից է: Միրանի համար իրենց տան այգին շատ թանկ է: «Եկան, հաշվարկեցին ու էս մեր բակի վերջը օժանդակ ճանաչեցին, հիմա մերը չի, բայց մեկ ա հետևում եմ, ծաղիկներ տնկում»:

Ռոբերտը «Երեկոյան Երևան» թերթի և այլ պարբերականների նախկին լուսանկարիչ և թղթակից է: Պատանի հասակում սովորել է դերասան և լուսանկարիչ Սամվել Խանդիկյանի մոտ, որը Երևան էր տեղափոխվել Բեյրութից: «Նախկինում փողոցը ավելի լայն էր, գիշերային լույսի տակ էի նկարում, նյութերի հետ էքսպերիմենտներ էի անում, շատ էի լուսանկարում բնակիչներին»:

HOUSE № 44
SIRAN NAJARYAN, ROBERT KHACHATRYAN

Siran Najaryan was born in Beirut. The ancestors of her husband Robert Khachatryan were from the Shirak region. The garden plot is very important for Siran: “They came and calculated, and they declared that the edging part of our garden is not ours. It is not ours, but I take care of it and plant flowers there.”

Robert is a former photographer and reporter for Evening Yerevan daily and other periodicals. He was a student of actor and photographer Samvel Khandikyan who moved to Yerevan from Beirut. “I used to film using the moonlight and I experimented with the materials. I often photographed neighbors. The street was much wider before.”







Անահիտ Փխրիկյանի նախնիները Երևան են տեղափոխվել Վանից և 1915 թվականին բնակություն հաստատել Ֆիրդուսում: Անահիտի հետ խոսելիս հաճախ լսում են «ուսանողներս», «հորս ուսանողները», «պապիս ուսանողները» արտահայտությունները: Վերջիններս տարիներ շարունակ կացարաններ են վարձակալել Փխրիկյաններից, որոնց տան ամեն սենյակն ու բակի կցակառույցները վարձով են տրվում դեռ 20-րդ դարի կեսերից, իսկ ավելի ուշ շրջանի մասին Անահիտի պատմություններում հանդիպում են «մեր պարսիկները», «մեր հնդիկները» բառերը: մինչև հիմա էլ Անահիտի տունը յուրօրինակ հյուրատուն է բազմաթիվ այլազգիների և մարզերից եկածների համար, որոնք փնտրում են վարձակալության հնարավորինս մատչելի տարբերակներ: Այստեղ նաև ապրում են շուկայի որոշ աշխատակիցներ, որոնք տարիների ընթացքում դարձել են Փխրիկյանների ընտանիքի անդամ: Նախնիները տունը գնել են ադրբեջանցիներից և շարունակել են ընդլայնել այն դեպի Խանջյան փողոցն ընկած հատվածը: Մինչև հիմա կացարաններում պահպանվում են իսլամական ճարտարապետության հետքեր: Անահիտի պապը, որ հայտնի է ամբողջ Ֆիրդուսում որպես Ջոջ Աղա, առաջինն է մասնակցել փողոցի մյուս շենքերի կառուցման աշխատանքներին:

Անահիտը հաճախ է հիշում պապին, որը երբեք անգործ չի նստել, սիրել է առևտրային գործը: «Առևտուրից քաղցր բան չկա», – ասում էր Ջոջ Աղան: Հետաքրքիր է, որ «Ջոջ» ածականը պապից անցնում է Անահիտին. հարևանները երբեմն նրան ասում են Ջոջ Անո:

The ancestors of Anahit Pkhrikyan moved to Yerevan, Firdus from Van in 1915. Speaking to her, you can often hear “my students”, “my father’s students”, “my grandfather’s students” in her speech. From the middle of the 20th century, these students rented accommodation from Pkhrikyan family. The later stories of Anahit reveal “our Persians” or “our Hindus”, since the house of Anahit is a unique guest house for foreigners and people from the regions who are looking for cheap rentals. Several market workers also live here, and they have already become family members of the Pkhrikyan family. Her ancestors bought the house from Azerbaijani and expanded it to Khanjyan Street. Until now, these residences have traces of Islamic architecture. Anahit’s grandfather was known in Firdus as Jodj Aga, and he participated in the construction of other buildings in Firdusi Street.

Anahit often recalls her grandfather who was a restless man, and loved to work and trade. “Nothing is sweeter than trade” he said. Interestingly, the nickname “Jodj” [Great] has passed to Anahit; neighbors sometimes call her Jodj Ano.



Անահիտ Փիրիկյան, 1960-ականների սկիզբ



Անահիտ Փխրիկյանի ֆոտոարխիվից, 1970-ականներ, 1990-ականների սկիզբ:

Anahit Pkhrikyan's photo archive, 1970s, early 1990s.



ՏՈՒՆ № 52
ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Մերոնք 100 տարի ստեղ են ապրել, իսկ էս տները, ոնց ես լսել եմ մեծերից, 250–300 տարվա տներ են, իմ պապիից ու տատիից եմ լսել: Էս պատերը ծղոտ ա հողով լցրած: Մենք սաղ վերանորոգել ենք: Էս տանը ապրել են նաև աղրբեջանցիներ, թուրքեր: Ուրեմն էս շենքը քուր ու ախպոր ա բաժանվել՝ Ռզա Զադե Բագր, Ռզա Զադե Մասմա: Ինչ եղել ա, էդ եմ ասում: Երկրորդ հարկը եղել ա ախպորինը, ներքևը՝ քրոջինը՝ Մասմայինը: Մեր ընտանիքը ապրել ա էս սենյակի մասում: Մայրս ասում էր, որ էս հատակը հող էր ամբողջովին: Հետո սկսեցին քաղաքում հատակ սարքել: Ասում ա, որ պապային խնդրում էինք՝ մենք էլ հատակ անենք, պապան ասում էր՝ խնչ հատակ, հեսա քանդում են տները: 1930 թվից քանդում են:

Մեր աղրբեջանցիները գնացին Բաքու: Եղբայրը կնոջից՝ Ռզա Զադե Կուկուից բաժանվեց ու գնաց: Կինն ու աղջիկը ստեղ էին ապրում, մինչև էս ամենավերջերը, երբ աղրբեջանցիները գնացին: Ասում էր՝ չեմ ուզում գնալ, ասեցի՝ մնա, ես քեզ կպահեմ, աղջկան ասեցի՝ Իռադան, դու գնա, ես ծնողի նման կպահեմ իրան: Վերջերս Իռադան ռուսական հեռուստատեսությամբ ելույթ ա ունեցել ու սաղ պատմել ա, որ Ֆիրդուսում էին ապրում, մաման չէր ուզում գնալ ու այլն»:

HOUSE № 52
MICHAEL HARUTYUNYAN

“My family lived here for more than 100 years, and I heard from my great parents that these houses are 250–300 years old. These walls are made of straw and earth. We repaired everything. There lived Azerbaijanis and Turks as well. So, this house was divided between brother and sister, Reza Zadeh Bagr and Reza Zadeh Masma. I will tell you how it happened. The second floor was given to the brother, and the ground floor was given to Masma, his sister. Our family lived here in this room. My mum said that the room had an earth floor. Then they began to make wooden floors. She remembered that they asked her father to make the floor, but he replied that there was no sense, they were going to dismantle the houses. They are going to dismantle them since the 1930's.

Our Azerbaijanis left for Baku. The brother divorced Reza Zadeh Coucou, and left. The wife and her daughter lived here until the end, until the Azerbaijanis left. She didn't want to leave, and I told her that I could take care of her like my parent. Recently, Irada spoke on Russian TV, and she told how they lived in Firdus, and her mum didn't want to leave, etc.







ՖԻՐԴՈՍԻ ԿԱՆԱՅՔ

Սոնա Քալանթարյան

Ֆիրդուսի փողոցը յուրահատուկ է իր առօրյայով. Երևանի կենտրոնում գտնում ես մի վայր, որտեղ բնակիչներն ասես օտարված են կենտրոնին բնորոշ կյանքից: Այստեղ հակադրվում են առևտրական աշխուժությունն ու խաղաղ առօրյան: Փողոցի երկակի ինքնությամբ պայմանավորված եռուզեռը, կարծես, ավելի ներդաշնակ է դառնում շուկայական ճակատից այն կողմ գտնվող տան բակերում՝ բնակիչների ստեղծած ու պահպանած տարածքներում: Իրար կպած ու նեղիկ անցումներով տները վերածվել են ներդաշնակ բնակատեղիների, որտեղ մի քանի մետր տարածքի վրա վերականգնվել է առօրյա հարմարակեցությունը:

Տեքստը գրելու գաղափարը առաջացավ Ֆիրդուս այցելությունների ընթացքում, երբ ամեն հերթական տուն ոտք դնելով՝ ավելի ու ավելի նշմարելի էր դառնում կարմիր թելի պես անցնող մի գիծ՝ կանանց հիշողությունները: Այցելություններից ստացած տպավորությունները երկակի էին. մի կողմից հանդիպում էինք հիմնականում կանանց, որոնք պատրաստ էին կիսելու մեզ հետ իրենց պատմությունները և լուսանկարները, մյուս կողմից առերեսվում էինք նրանց լռությանը և դրա հաղթահարման բարդությանը, երբ խոսքը վերաբերում էր նրանց անձնական փորձառությանն ու հիշողություններին. գրեթե բոլորը անվստահ էին սեփական հիշողությունների կամ խոսելու իրավացիության մեջ: Նրանց խոսքերից ակնհայտ էր դառնում, որ խոսելու համար պետք էր հստակ պատճառ կամ իրավունք, որ բխում էր արտաքին որևէ գործոնից՝ ընտանիքում տղամարդու բացակայությունը, բնիկ ֆիրդուսցի լինելը և այլն: Այս կանայք ունեն սեփական կյանքի, անցյալի, կենսագրության հստակ պատկերներ,

WOMEN OF FIRDUS

Sona Kalantaryan

Firdus Street is unique in its daily life: in the center of the city one can find a place, inhabitants of which seem to be alienated from the typical lifestyle of the center. Here the trade liveliness withstands to peaceful everyday life. It seems that the turmoil of this place, due to the double identity of the street, becomes more harmonious in the courtyards of houses, in places created and maintained by residents. Closely built houses with narrow corridors have created a harmonious residential area where the comfortability of everyday life is restored within a few meters.

The idea of this text came to my mind, while visiting homes in Firdus, where the invisible red thread, the memories of women, began to stretch. We had mixed impressions of our visits; on the one hand, we faced women who were ready to share their stories and photos with us, and on the other hand, we encountered their silence and the difficulty of its overcoming when it came to their personal experience and memories. Almost all of them were unsure of the rightness of their memories or speech. From their words it became clear that in order to speak, they need a clear reason or right, coming from an external source, such as the absence of a man in the house, not being originally from Firdus, etc. These women have a clear vision of their life, their past and biography, but they never speak out, they became uncertain and constrained by years. Meanwhile oblivion is inseparable from memory: “Memory is life, born by living societies [here, women]”¹ founded in its name. It remains in permanent

¹ Cited by author

բայց տարիների ընթացքում չբարձրաձայնելու հետևանքով նրանց խոսքը դարձել է անվստահ ու կաշկանդված: Մինչդեռ մոռացությունը հիշողության անբաժանելի մասն է. «Հիշողությունը կյանք է, որ կրում են իրենց անունից հիմնադրված կենդանի հասարակությունները [տույն տեքստում՝ կանայք]: Այն հարատև է վոլյուցիայի մեջ է. բաց՝ հիշելու և մոռանալու տրամախոսության (դիալեկտիկայի) համար, անգիտակից՝ իր հաջորդական ձևախեղումներին, խոցելի՝ մանկալույսացիայի և յուրացման հանդեպ, ենթակա՝ երկարատև նինջի և պարբերաբար՝ վերածնման»²: Ֆիրդուսում բնակվող կանանց խոսքերում ակնառու էր հենց այս վերածնունդը:

Ես ինքս էլ դժվարանում էի գրել այս կանանց մասին՝ առերեսվելով իմ լռությանը³. Կառուցել կանանց պատմողականության գծային կապը՝ վերհանելով այն Ֆիրդուսի բազմաշերտ և քառասյին առօրյայից: Բարդ էր ողջ տեքստը կառուցել այս կանանց հիշողությունների ու պատումների հիման վրա, երբ ոչ թե պարզապես պիտի օգտագործել նրանց պատմությունները, այլ վերածել դրանք պատմողական շարունակական շարադրանքի:

Կանայք գրեթե ողջ պատմության ընթացքում հիմնականում եղել են տղամարդ հեղինակների նկարագրած կերպարներ. այդ տեքստերում համատեղվել են տղամարդկանց կողմից կանանց վերաներկայումսները և կանանց՝ հիշողության հստակ արտահայտումը. գրողները և բանաստեղծները միշտ էլ կախված են եղել կանանց՝ պատմելու և պատումայնացման հնարավորություններից՝ որպես կյանքի ճանաչողության աղբյուրից և միստիկական ընկալման ու պատմողականության փորձերից: Այնուամենայնիվ, կանայք չեն դադարել պարզապես բուն տեքստին հավելող մի մաս լինելուց:

Պետք էր ոչ միայն հակադրվել այդ գերակայող փորձին, այլև, չլինելով այդ կենսակերպի ու

evolution, open to the dialectic of remembering and forgetting, unconscious of its successive deformations, vulnerable to manipulation and appropriation, susceptible to being long dormant and periodically revived”². This immediate awakening or revival was evident in the speeches of women living in Firdus.

It was difficult to write about these women, confronting with my own silence³, to build a linear connection of the narratives, taking them out of multi-layered and chaotic daily life of Firdusi street. It was hard to compose the whole text on the memories and stories of these women, since I could not just use their stories, but I had to turn them into a continuous narrative.

In almost all times, women were characters mostly described by male authors. In their texts, men's images of women were combined with a clear expression of women's memories. Writers and poets have always depended on the possibility of women to tell and build narratives, considering them as a source of life knowledge, mystical perception and experiment in narration. Nevertheless, women have not ceased to be only an additional part of the text.

It was necessary not only to confront this dominant experience, but also to try to become a means for transmitting the experience of the inhabitants, while being “a stranger” in this place⁴. Basically, all the stories, narratives and memory restoration efforts we collected about Firdus

² Between Memory and History: Les Lieux de Mémoire, Pierre Nora, Representations, No. 26, Special Issue: Memory and Counter-Memory (Spring, 1989), p. 8:

³ I have focused on this issue in my research topics for many years. At first, I was looking for this problem in the silence and anxiety of the authorship of female writers, but during my current work it became obvious that the problem is rooted not only in the literary platform, but in general in the complexity of the creativity and expression of women.

⁴ Katherine J. Goodnow: Kristeva in Focus: From Theory to Film Analysis, Berghahn Books; 1 edition, New York, 2010: “The theme of refusal – of silence as a strategy – emerges again when Kristeva openly asks: “Why we do not argue... (.) challenging the narratives’ assurance?” The answer Kristeva offers has to do with the mixed feelings of the stranger. All foreigners, Kristeva suggests, feel both a sense of humility in the face of their not knowing exactly how things are said or done, and a sense of superiority to those who have not traveled or stepped outside convention – how could they understand?”

¹ Հեղինակի կողմից:

² Between Memory and History: Les Lieux de Mémoire, Pierre Nora, Representations, No. 26, Special Issue: Memory and Counter-Memory (Spring, 1989), p. 8.

³ Այս խնդիրը տարիներ շարունակ եղել է իմ ուսումնասիրությունների առարկան: Իր սկզբնական արտահայտմամբ խնդիրը փնտրում էի կին գրողների լռության մեջ ու հեղինակային հուզմունքում (anxiety of authorship), բայց այս տեքստի ստեղծման ընթացքում ակնհայտ էր, որ խնդիրը միայն գրական հարթակում չէ, այլ առհասարակ կանանց՝ ստեղծագործելու և արտահայտվելու բարդությունը:





առօրյայի կրողը, փորձել դառնալ միջոց՝ փոխանցելու քնակիչների փորձառությունը⁴: Ըստ էության, Ֆիրդուսի փողոցի մասին մեր ունեցած գրեթե բոլոր պատմությունները, պատումներն ու հիշողության վերարտադրման փորձերը պատկանում են հիմնականում կանանց. կանայք էին բացում մեր առաջ տան դռները, հիմնականում նրանք էին տանը գտնվողները, ավելի պատրաստակամ՝ հիշելու, փնտրելու լուսանկարներ ու հին պատմություններ: Նրանց դերը չափազանց մեծ էր թե՛ սեփական հիշողությունների վերհանումով, թե՛ որպես կապող օղակ փողոցի մյուս բոլոր խմբերի ու տների հետ:

⁴ Katherine J. Goodnow: *Kristeva in Focus: From Theory to Film Analysis*, Berghahn Books; 1 edition, New York, 2010: «Մերժման թեման՝ լռությունը որպես ռազմավարություն, կրկին ի հայտ է գալիս, երբ Կրիստևան բացահայտորեն հարցնում է. «Ինչո՞ւ մենք չենք վիճում... (,) և վիճարկում պատումների հավաստիությունը»: Կրիստևայի առաջարկած պատասխանը կապված է օտարի հակասական զգացողությունների հետ: Նա ենթադրում է, որ բոլոր օտարականներն ունեն թե՛ հնազանդվելու զգացողություն, երբ չգիտեն, թե՛ հատկապես ինչպես են բաներն ասված ու արված, թե՛ գերազանցության զգացողություն նրանց հանդեպ, ովքեր չեն ճամփորդել կամ թալլ չեն արել կոնվենցիայից դուրս, ուրեմն ինչպե՞ս կարող են հասկանալ»:

Street were mostly narrated by women. It were the women who opened the door to invite us in, there were mostly women in the houses, more willing to remember, to look for photographs and old stories. They were excellent in the revival of their own memories, as well as in communication with other groups and houses from the street. It would be impossible to tell about Firdus without their stories.

After the collapse of the Soviet Union and the outbreak of hostilities in Karabakh, social groups assumed new functions: men were responsible for communication with the outside world, work and war, while women were engaged in maintaining and improving living conditions at home, and despite the chaotic and uncertain situation, they created everyday comfort in their territories. This is the reason that we are confronted with a society in which men are “absent”, but at the same time this society remains extremely patriarchal. Personal space, home and everyday life, where the role of women was more important, became of less importance in the context of building a new state.



Ֆիրդուսի մասին անհնար կլիներ պատմել, եթե չունենայինք նրանց պատումները:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո, և երբ սկսվեցին պատերազմական գործողությունները, սոցիալական խմբերը որդեգրեցին նոր գործառույթներ. արտաքին աշխարհի հետ կապը, աշխատանքը, պատերազմի դաշտում ակտիվ դերակատարությունը տղամարդկանց մասնաբաժինն էր, մինչդեռ կանայք զբաղված էին սեփական տան պահպանման, բարեկարգման, զարգացման և, անկախ արտաքին քառասյին իրավիճակից, այդ սեփական տարածքներում առօրյա հարմարավետության ստեղծման աշխատանքով: Սա էր պատճառը, որ առերեսվում էնք մի հասարակության հետ, որտեղ բացակայում են տղամարդիկ, բայց միևնույն ժամանակ այդ հասարակությունը շարունակում է մնալ ծայրահեղ հայրիշխանական: Անձնական տարածքը, տունը, առօրեականությունը, որտեղ հիմնական դերակատարը կանայք էին, նոր պետության կառուցման առավել կարևոր համարվող գործընթացի համատեքստում դարձել էր երկրորդական:

As a result, unlike men, Firdus is a personal space for women. The memory of a place is a personal experience for these women, talking of which is both difficult and unpleasant, and sometimes the obstacle is not the difficulty and desire to speak, but simply the suspicion, the ability to transfer one's own experience. We often could hear such expressions as "I am a daughter-in-law, I do not remember anything" or "my husband is not at home, please come another time and he will have something to tell." Sometimes young women would ask their mother-in-law if she wanted to talk or not, often we received a negative answer. And sometimes the women were simply in the role of listeners from the next room, from time to time they dropped a few words and anonymously joined the conversation.

Silence has been and remains an integral part of women's life. Brazilian author Nelda Piñon touches upon this issue and tries to show that memory was the only place where women tried







Այդ իսկ պատճառով, ի տարբերություն տղամարդկանց, կանանց համար ֆիզիոսը անձնական տարածք է: Հիշողությունը այս կանանց համար անձնական փորձառություն է, որի մասին խոսելը թե՛ դժվար է, թե՛ ոչ ցանկալի, երբեմն էլ արգելքը ոչ միայն խոսելու բարդությունն ու ցանկությունն են, այլ պարզապես կասկածը, սեփական փորձառությունը փոխանցելու կարելիությունը: Հաճախ էինք լսում նման արտահայտություններ, թե՛ «Ես հարս եմ, ինչ կարամ հիշեմ» կամ «Ամուսինս տանը չի, մի ուրիշ անգամ որ գաք, ինքը պատմելու բան կունենա», կամ երիտասարդ կանայք գնում հարցնում էին սկեսորին՝ կուզենա խոսել, թե ոչ: Հաճախ պատասխանը բացասական էր լինում: Երբեմն կանայք պարզապես կողքի սենյակում մեր գրույցը լսողներն էին, որ ժամանակ առ ժամանակ մի երկու խոսք էին ասում՝ ներգրավվելով գրույցին՝ այդպես էլ մեզ համար մնալով անանուն:

Լռությունը եղել և շարունակում է մնալ կանանց կյանքի անբաժանելի մասը: Բրազիլացի հեղինակ Նելդա Պինյոնը անդրադառնում է այս

to overcome this silence: “Without raising its voice – indeed, almost without speech – the female memory has encompassed reality. With its mystique of muted emotions, it has enriched human language”⁵.

Exiled from society, female memory gradually developed and turned into a source of narrative plots, a basis for metaphor and oral tradition. The more it was confined to the boundaries of private life, the more symbolic tricks appeared. The external world, which denies an active role of women in overcoming the difficulties and the vast complexities of everyday life, has made women the subject of poetic interpretations, extruded from other possible means of representation. Both in the Soviet times and after it, women were accused of an elusive and artful style of narration, always ready to manipulate the true image of reality. This was especially evident in the war

⁵ Nelda Piñon, *The Female Memory in Narrative*, page 2–3, IDB Cultural Center Lectures Program, Inter-American Development Bank in Washington, D.C., November 10, 2000.

խնդրին՝ փորձելով ցույց տալ, որ հիշողությունը միակ տարածքն էր, որտեղ կանայք փորձում էին հաղթահարել այս լռությունը. «Կանանց հիշողությունը առանց բարձրաձայնելու, գրեթե առանց խոսքի ընդգրկում է իր մեջ ողջ իրականությունը: Իր լռեցված հույզերի առեղծվածային բնույթով այն հարստացրել է լեզուն մարդկության պատմության սկզբից ի վեր»⁵: Հասարակությունից աքսորված՝ կանանց հիշողությունը, աստիճանաբար զարգանալով, դարձել է պատումների աղբյուր՝ հիմք դառնալով մետաֆորի ու բանավոր ավանդության համար: Որքան շատ էր այն սահմանափակվում անձնական կյանքով, այնքան ավելանում էին սիմվոլիկ հնարքները: Արտաքին աշխարհը, ժխտելով առօրյա կյանքի դժվարությունների հաղթահարման կանանց ակտիվ դերակատարությունը, նրանց դարձրել է բանաստեղծական մեկնաբանման առարկա՝ բացատրելով ներկայացուցչական և գործառական այլ հնարավոր ձևերը: Կինը թե խորհրդային տարիներին, թե դրանից հետո մեղադրվում էր խուսափողական ու խորամանկ պատումային ոճի կրող լինելու մեջ՝ միշտ պատրաստ աղավաղելու իրականության ճշմարիտ պատկերը: Սա առավել ակնառու էր դառնում պատերազմի վերաբերյալ պատումների դեպքում, երբ անձնական հիշողությունները հակադրվում էին պատմական փաստերի ու պաշտոնական տեղեկատվության հետ:

Այդ անձնական փորձառությունից ձևավորված իրականությունը հակադրվում էր պատմությանը, որը ճանաչում է միայն հստակ փաստեր, պատկանում բոլորին ու ոչ ոքի, որի կոչումն է համընդհանրությունը⁶: Այսպես, Ֆիրդուսում ամեն տուն կրում է նախկինում աղբբեջանցիների հետ համատեղ բնակության մասին հիշողությունը: Սակայն խորհրդային «մոնոէթնիկ» երկրների քաղաքականության⁷ տրամաբանությունից դուրս էր արա մասին բարձրաձայնելը՝ դուրս մղելով պատմության էջերից երկու ազգերի խաղաղ համակեցության այս փորձառությունը:

Սվետլանա Ալեքսիևիչը հիշում է, որ պատերազմի

narrative, when personal memories came across historical facts and official information.

The reality, built on this personal experience, opposed the history that accepts only certain facts, belongs to everyone and at the same time to no one, and calls for universality⁶. Every house in Firdus bears memories of a past life with Azerbaijanis. But talking about this was out of the logic of the Soviet “mono-ethnic” countries and their policies⁷, and this experience of peaceful coexistence of two nations was excluded from the pages of history.

Svetlana Alexievich recalls that only women spoke of the war, and there was no male voice; these were women who remembered, talked, cried and sang about the war⁸. Aleksievich's experience is like my experience of Firdus, in which the story is created from female words and the integrity of memories. Women talk about Firdus and suddenly shudder, remembering their lovely neighbors' departure. They like to talk about past peaceful times, large gatherings in the courtyard, the huge stone thrown in the center of the street, and more and more about seemingly unimportant things that complete the real image of the street.

In Firdus we met women who had their own memories of this place and its clear image, although they did not want to talk about them when they first met us. Obviously, many underestimated their own experience and memories as useful materials that can be transferred to others. Being outside the logic and architecture of the center of Yerevan, Firdusi Street was underestimated by the residents and the authorities of the city as well. Thus, the inhabitants of Firdus somehow had a feeling of inferiority of this place and attributed this inferiority to their own memories and experience. Our excitement and admiration gave a little confidence and inspired them to tell and recall the past. Only external impulses and approval allowed them to

⁵ Nelda Piñon: *The Female Memory in Narrative*, page 2–3, IDB Cultural Center Lectures Program, Inter-American Development Bank in Washington, D.C., November 10, 2000.

⁶ *Between Memory and History: Les Lieux de Mémoire*, Pierre Nora, *Representations*, No. 26, Special Issue: Memory and Counter-Memory (Spring, 1989), pp. 7–24.

⁷ Տե՛ս S. Ամիրյանի հոդվածը սույն գրքում:

⁶ *Between Memory and History: Les Lieux de Mémoire*, Pierre Nora, *Representations*, No. 26, Special Issue: Memory and Counter-Memory (Spring, 1989), pp. 7–24.

⁷ See the article of T. Amiryan in this edition.

⁸ Svetlana Aleksievich, *U voyni ne zhenskoe litso*, izd. Vremya, Moskva, 2019, p. 3.

մասին խոսում էին բացառապես կանայք. տղամարդկանց ձայնը բացակայում էր պատերազմից հետո. կանայք էին հիշում, պատմում, լալիս, երգում պատերազմի մասին⁸: Ալեքսիևիչի փորձառությունը նման է իմ՝ Ֆիրդուսի փորձառությանը, երբ պատմությունը ստեղծվում է կանանց խոսքերից, հիշողությունների ամբողջությունից: Ֆիրդուսի մասին պատմում են կանայք. փշաքաղվում՝ հիշելով հարազատ դարձած հարևանների հեռանալը, ուրախությամբ պատմելով նախկին խաղաղ առօրյայի, բակում անցկացրած մեծ հավաքների, փողոցի կենտրոնում ընկած մեծ քարի ու այլ, թերևս անկարևոր թվացող բաների մասին, որոնցով, սակայն, ամբողջանում է փողոցի իրական պատկերը:

Ֆիրդուսում հանդիպում էինք կանանց, որոնք թեև ունեին տեղի սեփական հիշողություններն ու դրանց հստակ պատկերը, բայց առաջին հանդիպման ժամանակ խուսափում էին դրանց մասին խոսելուց: Ակնհայտ էր, որ շատերը չէին էլ արժևորում սեփական փորձը և հուշերը՝ որպես մեկ այլ մարդուն փոխանցելու պիտանի նյութ: Ֆիրդուսի փողոցը, լինելով Երևանի կենտրոնի ճարտարապետությունից և ողջ տրամաբանությունից դուրս մի հատված, չէր արժևորվում թե՛ քաղաքաբնակների, թե՛ իշխանության կողմից: Այսպես էլ փողոցի բնակիչները, կարծես, կրում էին այդ տարածքի հետ կապված թերարժեքության զգացումը և վերագրում դա սեփական հիշողություններին ու փորձին: Մեր ոգևորությունն ու հիացմունքն էին, որ փոքր-ինչ վստահություն էին ներշնչում նրանց՝ պատմելու ու հիշելու անցյալը: Նրանց պետք էր արտաքին որևէ ազդակ, հավանություն՝ Ֆիրդուսի իրենց պատմությունը վերարտադրելու համար:

Բավական էր հավաստիացման մի քանի խոսք նրանց հիշողությունների կարևորության և արժեքավոր լինելու վերաբերյալ, որպեսզի այդ կանայք սկսեին հապշտապ պատմել ու հիշել Ֆիրդուսում անցկացրած իրենց կյանքի մասին: Տարիներ շարունակ առեղետվելով սեփական տան կորստի վտանգի հետ՝ նրանք փորձում էին հիշել ամեն մանրուք, որ թեև առաջին հայացքից կարող է թվալ անկարևոր, բայց արտացոլում է բնակիչների կապը այդ տարածքի ու տեղի հիշողության հետ: Նրանց հիշողությունը սնվում է մշուշոտ, բազմատարր, հատվածական կամ սիմվոլիկ



reproduce their own history of Firdus.

A few words about the importance and value of their memories were enough to enable them to talk hastily and remember their lives spent in Firdus. For many years living with the threat of losing their homes, they tried to recall every detail that might seem unimportant at first sight, but reflected the strong bond of the inhabitants with this place and with the memory of this place. Their memory feeds on obscure, heterogeneous and symbolic episodes and includes only those parts that are dear to them. The residents of Firdus and the traders unite and become the bearers of memory of this holistic place, a social group that has quite a different images of a multilayered and multinational Yerevan.

Our visits had nothing to do with the prevention of the reconstruction of the street or solution to the housing problems of the people living there. We were neither journalists nor

⁸ Светлана Алексиевич, У войны не женское лицо, изд. «Время», Москва, 2019, стр. 3.



հուշերով՝ ներառելով միայն այն մանրամասները, որոնք հարազատ են իրենց: Ֆիրդուսի բնակիչներն ու այստեղ աշխատող մարդիկ միավորվում ու դառնում են մեկ ամբողջական տեղի հիշողության կրողներ, սոցիալական խումբ, որն ունի այլ՝ խառնակազմ ու բազմազգ Երևանի պատկերը:

Մեր այցերը կապված չէին փողոցի վերակառուցման կանխարգելման կամ բնակիչների տան խնդիրները լուծելու հետ, մենք ոչ լրագրող էինք, ոչ պետական որևէ կառույցի ներկայացուցիչ, և ինքներս ունեինք բնակիչների օգնության կարիքը, քանի որ գիրքը ստեղծողը հենց իրենք էին: Սակայն դա չէր խանգարում մեզ հանդիպած կանանց՝ պատմելու և կիսվելու իրենց պատմություններով, ասես սա ընկալում էին մի վերջին հնարավորություն՝ ինչ-որ տեղ ամրագրելու հիշողությունը, որը կանգնած է իր տեղը կորցնելու վտանգի առաջ:

representatives of state bodies. Moreover, we needed the inhabitants' assistance, since they were the creators of this book. In any case, the women we met did not bother to talk and share their stories, and they seemed to take it as a chance to reserve their memory somewhere as if it were in danger of losing its place.



ՖԻՐԴՈՒՍԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԻԵՐԱՐԽԻԱՅՈՒՄ
Արսեն Կարապետյան

Ջարմանալի է, որ Երևանի շատ թաղամասեր, անգամ կենտրոնի, երկար տարիներ անծանոթ են մնացել երևանցիների մեծամասնությանը և հիմնականում ընկալվել են որպես անբարեհաջող կղզյակներ՝ այս կամ այն պատճառով դուրս մնացած քաղաքի՝ խորհրդային և հետխորհրդային շրջանի վերակառուցման մեծածավալ ծրագրերից: Քչերը գիտեն Կոնդը կամ Ֆիրդուսը, թեև գուցե մեկ անգամ չէ, որ անցել են այդ տարածքներով, հյուր գնացել կամ առևտուր արել շուկայում: Այս տարածքների հանդեպ գիտակցված հետաքրքրությունն ի հայտ եկավ միայն վերջին տարիներին «տեղի հիշողություն» կամ «քաղաքի կենսագրություն» հասկացությունների վերըմբռնման արդյունքում: Մի շարք խանդավառ մարդիկ այսօր ներկայացնում են այդ տարածքները, գրոսանքներ ու էքսկուրսիաներ կազմակերպում, հոգվածներ ու գրքեր գրում: Վերախմաստավորման պատճառներից մեկն այն էր, որ գլխավորապես խորհրդային շրջանում ընդունված կառուցապատման պարագծային սկզբունքն իրագործման ընթացքում սահմանեց տարածությունների հիերարխիա, և պարզվեց, որ քաղաքը բաժանված է ներքին ու արտաքին մասերի: Հիմնական եռուկեռ տեղի էր ունենում արտաքին՝ գեղեցիկ ճակատներով և ուղիղ բարեկարգ փողոցների քաղաքում, որի կերպարը որոշակի էր, հասկանալի և ընկալվում էր որպես հիմնական: Իսկ թաղամասային կղզյակներում, բակերում և քաղաքի այլ միջբջջային տարածություններում ներփակված կյանքը ցայսօր քողարկված է և հաճախ անծանոթ՝ հարևան թաղամասերի բնակիչներին: Եվ ստացվում է, որ առաջին հայացքից բոլորին քաջածանոթ Երևանն ունի բազմաթիվ գաղտնիքներ ու չտեսնված բաներ. քաղաքը վերստին հետաքրքիր է դարձել:

FIRDUS IN THE HIRERACHY OF THE
CITY SPACE
Arsen Karapetyan

It's no wonder, that many districts in Yerevan, even those located in the center, remained unknown to the most Yerevanians and were mainly perceived as unfavorable islands, left out of the large-scale reconstruction of the Soviet and post-Soviet period city. Not everyone is familiar with Kond or Firdus districts, although he/she may have passed or drove there more than once to visit friends or the Firdus Market. These places have become objects of conscious interest in recent years as a result of new perception of such concepts as 'memory of the place' or 'city biography'. Groups of enthusiasts appeared who promote these places, organize walks and excursions, publish articles and books. One of the reasons for rethinking was the perimeter principle of the city construction, adopted mainly in the Soviet period. This principle determined the hierarchy of spaces in the building process, separating the external and internal parts of the city. The main mobility is carried out in the outer city with beautiful facades and well-maintained streets; its image is defined, understood and perceived as the main one. However, the life in the neighborhood islands, courtyards and in other intercellular spaces of the city, remains hidden and often unknown to residents of neighboring areas. And as it turned out, Yerevan, well-known to everyone at first glance, keeps secrets of unexplored and unimagined depth; the city has become interesting again.





Ես կհամեմատեի քաղաքը հին բնակարանի հետ, որտեղ կան վաղուց չօգտագործված «չուլաններ» ու պահարաններ, սենյակներ, որոնց վաղուց ձեռք չի դիպել: Ինչքան արտեֆակտներ ու անսպասելի գտածոներ կարելի է հայտնաբերել ամեն օր, ինչքան հետաքրքիր ու անսպասելի բաներ կարելի է իմանալ նախնիների կամ նախորդ տերերի մասին: Եվ ձանձրալի է, երբ տան հիմնական վերանորոգումից ու եղած հին խաբխուղ կահույքը նորով փոխարինելուց հետո հանկարծ պարզվում է, որ տունն այլևս ոչ մի գաղտնիք չունի, ամեն ինչ հասկանալի է ու հայտնի, թեև, իհարկե, ավելի հարմար է ու պրակտիկ: Մնում է միայն հույս տածել, որ մի քանի սերունդ հետո տան նոր բնակիչներից ինչ-որ մեկին հետաքրքրելու է քո այսօրվա կյանքը:

Քաղաքային հյուսվածքի ոչ միայն առանձին հուշարձանների, այլև պատմական դրվագների պահպանման անհրաժեշտությունը հասկանալի ու ընդհանուր գաղափար է դարձել ոչ այնքան վաղուց: Երկրորդ աշխարհամարտի սարսափելի ավերածությունները, որոնք փոշու վերածեցին ամբողջական քաղաքներ, շինարարության արդյունաբերականացումն ու տիպական ճարտարապետությունը նախանշեցին մի եզրագիծ, որից այն կողմ գուցե չպահպանվեր անցյալի մասին որևէ նյութական վկայություն կամ հիշողություն՝ բացառությամբ մի քանի ապարանքների և պաշտամունքային կառույցների: Ընդամենը 100 տարի առաջ վերակառուցման ենթակա տարածքում եղած կառույցը գործնականորեն հաշվի չէր առնվում, հինը հեշտորեն փոխարինվում էր նորով ու ավելի լավով: Այդպես է եղել թե՛ խոշոր մայրաքաղաքների (Լոնդոն, Փարիզ, Մոսկվա), թե՛ Երևանի նման քաղաքների դեպքում: Հենց այս պատճառով պատեհ չէ օրինակ բերել Թամանյանի կամ ստալինյան շրջանի քաղաքի ընդլայնման ծրագիրը, քանի որ այդ ժամանակ քաղաքաշինական խնդիրներն ու պատկերացումները բոլորովին այլ էին:

Ժամանակակից Երևանում դեռ պահպանվում են մշակութային մի քանի շերտեր. դրանց արժեքը միշտ չէ, որ ակնհայտ է թվում երևացիկներին և անգամ մասնագետներին: Թամանյանական և ստալինյան շրջանները միանշանակորեն ընդունված են բոլորի կողմից, և դրանց պահպանության կարևորությունը հատուկ ապացուցումների կարիք չունի, թեև գործնականում դանդաղ ոչնչացումը երբեք չի դադարել: 1920-ականների կոնստրուկտիվիզմն ու ուշ

I would rather compare the city with an old apartment, with numerous untouched closets and shelves, and with rooms, no one got around to. And perhaps every day, there you can find various unexpected artifacts and important details, discover interesting and unexpected stories about predecessors or former owners. And how boring it becomes, when the next home repair with radical restructuring and replacement of old dilapidated furniture suddenly makes it clear that there are no more secrets in the house, everything is clear and recognizable, although the place has become much more convenient and practical. One can only hope that through a couple of generations someone from the new tenants will be interested in your current life.

Preservation of historical fragments of urban fabric, as well as of not just specific monuments, became a clear and generally accepted idea not so long ago. The terrible destructions of World War II, having wiped off whole cities, the construction industrialization and the rise of typical architecture led to a line beyond which no surviving evidence or memory of past life could be left except for a few palaces or buildings of public worship. However, a hundred years ago, the existing buildings were practically not taken into account in the reconstruction process, and the old ones were easily replaced by new and better ones. This happened with big capitals (London, Paris, Moscow) and such cities as Yerevan. That is why it is not correct to bring the city expansion in the times of Tamanyan or Stalin as an example, because the tasks and ideas were completely different then.

Today's Yerevan has several preserved cultural layers that are not always valued by citizens or even specialists. For example, the Tamanyan and Stalinist periods are unequivocally accepted by all, and the importance of their preservation does not require much effort, although in practice the slow destruction has never ceased. The constructivism of the 1920s or the late Soviet modern architecture is in a less enviable position. The residents are mostly indifferent to their fate, the only hope is for the architectural community.

խորհրդային մոդեռն ճարտարապետությունը պակաս նախանձելի վիճակում են. մարդիկ մեծ մասամբ անտարբեր են դրանց ճակատագրի հանդեպ, և հույսի միակ աղբյուրը ճարտարապետական համայնքն է:

Երևանի ամենահին ու պատմական թաղամասերը կամ տարածքները, որոնք պահպանում են բազմադարյա հիշողության, կենցաղի ու կենսակերպի հետքերը, մի քանիսն են՝ Կոնդը, Ադինջը, Քանաքեռը, Սարի թաղը, Նորքը, Նորագյուղը (Պասկևիչի բլուր) և, անշուշտ, Ֆիրդուսի փողոցը: Կենտրոնից հեռու թաղամասերն ավելի լավ են պահպանվել, թեև ինժեներական հաղորդակցումների բացակայությունը, խտությունն ու փողոցների դրությունը հսկայական միջոցների ներդրում են ենթադրում, և, ցավոք, ավելի մեծ է հավանականությունը, որ կուտակված խնդիրների հարկադրական, բայց հեշտ լուծման եղանակը հիմնային վերակառուցումն է: Իսկ կենտրոնի թաղամասերի ճակատագիրը, ցավոք, կանխորոշված է, քանի որ կառուցապատողների համար հողի այսօրվա գները և շուկայական իրադրությունը չեն կարող պակաս կարևոր լինել, քան ոչ նյութական արժեքները, տեղի հիշողությունը, քաղաքաշինական կենսագրությունը, ընտանիքների պատմությունն ու վերնակույարի կոլորիտը, որոնց անդրադառնում են այս գրքի հեղինակները:

Բազմաթիվ քաղաքներում մինչ օրս այս կամ այն կերպ պահպանվել են պատմական հատվածներ: Այդուհանդերձ, ճիշտ չէր լինի Ֆիրդուսի թաղամասը համեմատել իտալական կամ իսպանական քաղաքների՝ դարերով սերունդների փոխանցվող միջնադարյան շինությունների կամ նորվեգական հին Սթավանգերի (Gamle Stavanger) հետ, որտեղ ամբողջությամբ պահպանվել է փայտե հին գյուղական կառուցապատումը, և հաշվվում է 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի շուրջ 173 տուն: Քաղաքային կառույցները ձևավորվում են պատմական իրադարձությունների ազդեցությամբ, և հյուսիսեվրոպական բարեկեցիկ հեռավայրերի ամողջացմանն ուղղված մեթոդներն անհնար է կիրառել Երևանի կենտրոնում, որն անցել է վերաբնակեցման, ցեղասպանության հետևանքների, հեղափոխության, պատերազմների և այլ փորձությունների միջով: Ինչ խոսք, շատերը Երևանի հին թաղամասերը դիտարկում են որպես հետնախորշեր, սակայն դա սխալ գնահատական է, թեկուզ միայն այն պատճառով, որ շինությունների ողջ քայքայվածությամբ ու քառսով հանդերձ՝ այստեղ

The oldest historical districts or fragments of Yerevan, which have preserved at least the imprint of the centuries-old memory and mode of life, are Kond, Arindzh, Kanaker, Saritagh, Nork, Noragyugh (Paskevich's Hill) and, of course, Firdus neighborhood. Those that are not located in the center are better preserved, although the lack of utilities, density and street conditions require huge investments, and, unfortunately, it is likely that a radical reconstruction will be forced as that can be the simplest solution to the problems. However, the fate of districts in the city center is predetermined, as today's land prices and market situation can hardly be outweighed by non-material value: memory of the place, city planning biography and family history, vernacular atmosphere, which the Authors of this book write about.

Today it is not difficult to find cities in which historical fragments have somehow been preserved. However, it would be incorrect to compare Firdus district, for example, with Italian or Spanish cities with medieval buildings, inherited by generations over the centuries, or with the Norwegian Old Stavanger (Gamle Stavanger), a district, which completely preserved old wooden buildings, namely, 173 houses built in the late XVIII - early XIX centuries. City building is shaped under the influence of historical events, and it is impossible to apply the restoration methods adopted for the prosperous North European hinterland to the center of Yerevan, which in the 20th century went through resettlement, genocide, revolution, wars, etc. Many perceive such areas as slums, but it is misjudgment, at least because with all the collapse and chaos of buildings, people of different social strata lived and live here. Their biographies are intertwined; this is not a ghetto for a particular social group. Just the contrary, a special form of coexistence of different families was formed here, united by common yards, which also ensure security and mutual help. However, one cannot ignore the fact that the requirements for life quality and comfort have been increased so much that it is simply impossible to leave everything as it is, and if there is a possibility to choose between the existing way of life and the possibility of a new







ապրել ու ապրում են սոցիալական ամենատարբեր շերտերի մարդիկ, նրանց կենսագոյությունները փոխկապակցված ու անբաժանելի են, այդ բնակավայրերը առանձին սոցիալական խմբերի ռեզերվացիաներ չեն: Հակառակը, այստեղ ընդհանուր բակով միավորված առանձին ընտանիքների միջև զարգացել է համակեցության հատուկ ձև, որը նաև փոխօգնություն և անվտանգություն է ապահովում: Սակայն չի կարելի անտեսել նաև այն, որ կյանքի որակի ու հարմարավետության պահանջներն այնքան են մեծացել, որ դժվար է ամեն ինչ թողնել այնպես, ինչպես կա, և եթե հնարավորություն լիներ ընտրելու ներկա ապրելակերպի և նոր հարմարավետ կյանքի միջև, տեղաբնակներից շատերի ընտրությունն ակնհայտ կլիներ:

Մյուս կողմից, անհետացող հիշողության արժեքը, որը, ցավոք, չի տարածվում միամտան գեղեցիկ ու կոկիկ տներով փողոցների վրա, այլ ներհյուսված է տեղ–տեղ կոպիտ, տեղ–տեղ հիանալիորեն հանգուցված քաղաքային հյուսվածքում, կարող է վերածվել մի բացառիկ փորձառության, որն ինտեգրում է միմյանց հետ կարծես ընդհանրապես չհամատեղվող շխտությունների տեսակներն ու քաղաքի հատվածները: Դա կլինեն յուրահատուկ երևանյան մոտեցում, թեև կպահանջեր ոչ միայն լուրջ ներդրումներ, այլև կատարյալ փոխըմբռնում բնակիչների, քաղաքի իշխանության և ներդրողների

comfortable life, the choice of local residents will be obvious.

Alas, the value of a vanishing memory does not fit into cozy streets with equally beautiful and neat houses. It is woven into sometimes coarse, but sometimes finely tied urban fabric and can turn into a unique experience, integrating – as it may seem – incompatible types of buildings and fragments of the city. This would be a special Yerevanian approach, requiring not only serious funds and investments, but also a full mutual understanding between residents, city authorities and investors. It can be stated that various commercial projects in Yerevan with the use of old buildings and courtyards are a huge success and attractive to customers. These are mainly restaurants, clubs, libraries, small hotels, etc.

However, the most important obstacle is time. Unfortunately, the Firdus district is already included in the urban development program approved by the RA government, and it does not provide any chance to preserve old buildings. The mechanisms for the development of the territory are already defined, and developers have been announced, so it would be naive to hope for the success of an alternative project, which today simply does not exist. The same



միջև: Վստահությամբ կարելի է ասել, որ որոշ տեղական առևտրային նախագծեր, որոնք օգտագործում են հին շինություններն ու բակային տարածքները, մեծ հաջողություն են վայելում և գրավիչ են հաճախորդների համար: Դրանք հիմնականում ռեստորաններ են, ակումբներ, գրադարաններ, փոքր հյուրանոցներ և այլն:

Սակայն գլխավոր խնդիրը ժամանակն է: Ցավոք, Ֆիրդուսի թաղամասն արդեն ներառված է կառավարության կողմից հաստատված քաղաքաշինական ծրագրում, որը չի նախատեսում հին շինությունների պահպանման որևէ տարբերակ: Կառուցապատողներն ու տարածքի յուրացման մեխանիզմները որոշված են, և միամտություն կլիներ հույս կապել այլընտրանքային ծրագրի հետ, որն այսօր անգամ գոյություն չունի: Նույնը կարելի է ասել Կոնդի վերաբերյալ, որի հանդեպ մեծածավալ շինությունները վաղուց արդեն ուսնձգություն են թե՛ ներսի, թե՛ դրսի կողմից՝ ոչ մի կերպ հաշվի չառնելով տարածքի պատմական համատեքստը: Դժվարապատկերացնելի է՝ ինչպես է քաղաքի իշխանությունը դիմակայելու բիզնեսի ճնշմանն ու տեղաբնակների կուտակված սոցիալական ու կոմունալ խնդիրներին, եթե բացակայում է անգամ այդպիսի խնդրի գիտակցված հարցադրումը:

can be said about Kond, which is for a long time invaded by new large-scale buildings around the perimeter and from inside the district, ignoring the historical context. It is difficult to imagine how the city authorities can withstand the pressure of business and the accumulated social and logistical problems of local residents, in the case, when there is not even a deliberate formulation of such a task.









ՖԻՐԴՈՒՍ. ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐՆԱԿՆ ԴԱՏԱՄԱԿԱՆ ՎԵՐՆԱԿՈՒԼՅԱՐ ԹԱՂԱՍԱՍԸ

Անդրեյ Իվանով

«Ծնվել եմ Սվերդլով փողոցում... իսկ հիմա քայլում եմ քաղաքի կենտրոնով, որտեղ անցել է մանկությունս, ու ամեն ինչ անծանոթ է, ոչ ոքի չեմ ճանաչում, գրեթե բոլոր ընկերներս ու հարևաններս հեռացել են...», – գրում է Լուսինե Խանգելդյանը Ֆեյսբուքում¹: Բնիկ երևանցիներին հատուկ է այս նոստալգիան կամ կարոտը աչքի առջև անհետացող հին քաղաքի, ընդհանուր ծորակով բակերի, ընկերասեր հարևանների, փայտե փորագրված պատշգամբների ու քաղաքի մարդկայնության հանդեպ, որը վաղուց անհետացել է աշխարհի այլ խոշոր քաղաքներում... իսկ այստեղ, կարծես, այն քիչ առաջ դեռ կար...

Ֆիրդուսի գողտրիկ թաղամասը գրեթե դատարկ է, բայց այնտեղ դեռ կարելի է զբոսնել, ճանաչել, հիշել: Ես էլ կարող եմ, թեև նախընտրում եմ երևանյան իմ վերնակուլյար² ժամանակը տրամադրել Կոնդին կամ

FIRDUS: THE LAST VERNACULAR NEIGHBORHOOD IN THE HISTORICAL CENTER OF YEREVAN

Andrey Ivanov

“I was born in Sverdlov Street in Yerevan... Now I walk around the city center where my childhood passed, and I recognize nothing, I don’t meet a single acquaintance, almost all friends and neighbors had left ...”, writes Lusine Khangel'dyan on Facebook¹. This is nostalgia typical of the natives of Yerevan, longing for the old town that vanishes before our eyes, courtyards with a common tap, friendly neighbors, carved wooden balconies... and ‘city humanity’ which has long ago melted in other big cities of the world. And here... it felt that it still existed here.

Firdus is a tiny neighborhood and now almost no one lives there, but one can still walk there and have recollections. So can I, although I prefer to spend my Yerevan Vernacular² time in Kond or Old Nork. And I have personal memories associated with these places. These are sweet memories...

¹ Lusine Khangel'dyan, գրառում Ֆեյսբուքյան էջում առ 14.02.2019:

² Վերնակուլյար (անգլ.՝ vernacular բառից) – տեղական, ժողովրդական, տեղին բնորոշ, խոսակցական, բարբառային (եզվի մասին): Ճարտարապետական տեքստերում եզրը կիրառվում է սովորական, շարքային շինությունների վերաբերյալ, որոնք կառուցված են առանց արհեստավարժ ճարտարապետների մասնակցության, ունեն որոշակի միջավայրային և գեղարվեստական արժեք: Հայկական քաղաքային վերնակուլյարի մասին տե՛ս Իվանով Ա.Յ. Вернакулярная архитектура Еревана XIX – середины XX в., Средовая ценность и необходимость сохранения // Вопросы всеобщей истории архитектуры. Вып. 6. М.; СПб.: Нестор-История, 2016, с. 264–282; Иванов А.В. Регулярный вернакуляр: свобода внутри решетки (исторический центр Гюмри XIX – середины XX в.) // Вопросы всеобщей истории архитектуры. Вып. 9. М.; СПб.: Нестор-История, 2017, с. 159–192.

¹ Lusine Khangel'dyan, posted on Facebook on 14.02.2019

² Vernacular – local, popular, typical of the area, language or dialect spoken by the people in a particular country or region. In architecture, the term is used to apply to ordinary buildings built without participation of professional architects, with certain environmental and aesthetic value. About Armenian urban Vernacular see Ivanov A.V. Vernakulyarnaya arhitektura Erevana XIX – seredinyi XX vv. Sredovaya tsennost i neobhodimost sohraneniya // Voprosy vseobschey istorii arhitekturyi. Vyip.6. M.; SPb.: Nestor-Istoriya, 2016. S. 264–282; Ivanov A.V. Regul'yarnyy vernakulyar: svoboda vnutri reshetki (istoricheskiy tsentr Gyumri XIX – seredinyi XX v.) // Voprosy vseobschey istorii arhitekturyi. Vyip.9. M.; SPb.: Nestor-Istoriya, 2017. S. 159–192.

Հին Նորքին: Ես էլ ունեմ անձնական հիշողություններ՝ կապված այդ տարածքների հետ: Դրանք ջերմ են:

Դու Տիգրան Մեծի պողոտան և Վերնիսաժը կապող մի նեղիկ անցումում ես՝ էժան ապրանքներով, կապույտ ցեղֆանե ծածկերով պաշտպանված, բայց հարմարավետ շուկա-միջանցքում: Սա փողոց-շուկա է, հետխորհրդային Հայաստանի քաղաքների «չքավոր» հատվածին բնորոշ երևույթ և յուրատեսակ ողջույն մայրաքաղաքից Գյումրիի «Լաչինին»³: Հայացքդ ակամա հառում ես շրջակա երկհարկ կամ եռահարկ տներին, որոնք ոչնչով աչքի չեն ընկնում, հասարակ են, բայց հիքավի հին: 2011 թվականին, երբ առաջին անգամ հայտնվեցի այստեղ, Երևանի կենտրոնում հնամյա տունն արդեն հազվագյուտ բան էր, իսկ հիմա դրանցից յուրաքանչյուրը ոչ միայն բացառիկ է, այլև պատմական արժեք: Ցանկություն է առաջանում ներթափանցել սեղանիկների ու ապրանքով լի տաղավարների միջով ու հասնել դրանց անպաճույճ պատերին, դիպչել, հրել դռները, որոնք փակ են վարձակալող առևտրականների առջև կամ հենց նրանց կողմից...

Իսկ հետո հայտնվեց ոչ առևտրային մուտք Հանրապետության փողոցի կողմից, մի կարճիկ աղեղանման փողոցի⁴ միջով, որն ուներ հին վերնակույար միջավայրի բոլոր հատկանիշները՝ փոքր սեփական տներ, դարպասի հետևում խաղողի թառմաներով բակեր, մութ դալան՝ ծղոտախառն ծեփով (երևի վերջինը, որ պահպանվել էր այդտեղ), ապա՝ մի նեղ զիզգագաձև անցում, երկաթե

³ Գյումրիում այժմ քաղաքի գլխավոր շուկան զբաղեցնում է Զաղթանակի հրապարակի և Շահումյան փողոցի միջևամասում գտնվող Մայակովսկու փողոցի մի հատվածը, որը ստացել է «Լաչին» կամ «Լաչինի միջանցք» անվանումը և կառուցապատված է հին սև տուֆե տներով: Այստեղ հին ալեքսանդրապոլյան սկզբունքը՝ «փողոցում կարգովակնոն, թաղամասի ներսում՝ ինչ կուզեք», խախտված է: Ամեն ինչ շուռ է եկել: «Ինչ կուզեք»-ը շուկան է՝ մրգեր, մամաթերք, մետաղական իրեր հենց տեղում աշխատող մետաղագործից, հորած պակիր, սուրճ, թե կուզեք՝ փողոցում, իսկ շուկայական դատարկված թաղամասերի խորքում՝ նախկին կյանքի հազիվ չերմացնող հետքեր: Զաղաքային նման դասավորությունում շենքերի սև ճակատները դարձել են «խորտապատկեր» և ոչ թե «վարագույր»: Փոխարենը այստեղ խորհրդանշական վերադարձ է տեղի ունեցել ալեքսանդրապոլյան առաջին՝ գլխավոր հրապարակի վրա արհեստագործական շարքերով շուկային: Առևտրականները բնականորեն հավաքվում են մարդկային հոսքերի մոտ (նախկինում շարքի, այժմ՝ փողոցի երկայնքով):

⁴ Ցանդեքսի քարտեզը ցույց է տալիս, որ դա Հանրապետություն փողոցի 3-րդ նրբանցքն է:

You are in a narrow passage between Tigran Mets Ave. and Vernissage – a market corridor filled with mass production goods and covered with blue plastic panels, but you somehow feel cozy. This street-market is a phenomenon characteristic of the “poor” environment segment of the post-Soviet Armenian cities, a kind of capital greetings to Gyumri’s “Lachin”³. The surrounding two-three-storey houses, not at all outstanding but simple and genuinely old, involuntarily catch your eye. In 2011, when I first found myself here, the old houses in the center of Yerevan were becoming rare wonders, and now any of them is not just a wonder but a true value. One strives to pass through tables and booths filled with goods and reach the modest walls of the houses, touch them, dive into the entrance doors that are closed whether to traders or by traders who rent there...

Later, a non-market entrance from Hanrapetutyan Street appeared to a tiny arc-shaped street⁴ with all the attributes of an old vernacular environment: small private houses, others with courtyards under grape pergolas, behind blind gates, a gloomy arch covered with plaster, mixed with reed (perhaps the last one that was preserved there), a narrow zigzag passage behind it, windows with wooden frames behind iron lattices (painted again and again with white, forming flakes and revealing layers), concrete covered with strange mushrooms, shaky external stairs to the second floor, balusters, shabby carpets, and the sun through the leaves... And platforms of trash lacunae at the site of destroyed houses...

³ In Gyumri, the main city bazaar, so-called “Lachin” or the “Lachin Corridor” occupies a part of Mayakovsky Street, between Victory ave. and Shaumyan Street, built up with black tuff houses. The old principle of Alexandropol (old Gyumri), “street = order, inside the block – whatever”, is broken here. Everything is turned inside out. Now “whatever” is market fuss, fruit, meat, metal crafts from the tinsmith who works there, “buried” cheese, coffee, everything mixed in the street, and inside the deserted market squares there are hardly warming remains of the past life. In this urban setting, black tuff facades have become the “backdrop” rather than the “curtain”. Instead, a kind of symbolic return is seen to the first bazaar of Alexandropol with handicraft lines on the main square. Traders naturally gather around human flows (formerly along the lines, now along the street).

⁴ According to Yandex maps, this is the 3rd alley of Hanrapetutyan Street.



պատուհանաճաղեր ու փայտե պատուհաններ (ամեն ինչ բազմիցս սպիտակեցրած, ներկը՝ պլուկված), բետոն, որի վրա տարօրինակ սնկային գոյացություններ են, խարխուլ արտաքին աստիճաններ դեպի երկրորդ հարկ, բազրիքներ, տրորված գորգիկներ, տերևների միջով անցնող ճառագայթներ... Եվ քանդված տների տեղում՝ աղբի փոսեր...

Փողոցի անկյունում՝ ուղիղ կարմիր գծի երկայնքով, համեստ չափերի ու ճարտարապետական առումով որակյալ մի տուն կտեսնեք՝ սև տուֆից ճակատով, որում կիրառված են հայկական քաղաքային վերնակույլարի բոլոր արքետիպերը՝ հարթ մշակված, իրար կիպ մոտեցրած տուֆային բլոկներից շքամուտքի պատ, բացվածքների դեկորատիվ շրջանակ, ճշգրիտ պրոֆիլավորված քիվ: Վարպետը (վերնակույլար ճարտարապետության դեպքում կարելի է տան գլխավոր կառուցողին անվանել «վարպետ»՝ բառի միջնադարյան իմաստով՝ նկատի չունենալով արհեստավարժ ճարտարապետի) հաջողությամբ ներառել է տունը փողոցի և տարածքի կոնֆիգուրացիայում, նրբորեն արտահայտել է ֆասադի հիմնական իմաստային շեշտադրումները՝ դուռն ու պատուհանները, ընդգծել է անցումը տնից դեպի երկինք համեստ, բայց արժանապատիվ կլասիցիստական քիվով, իսկ տան և գետնի հարաբերությունը՝ ավելի կոպիտ, բայց նորից մանրակրկիտ մշակված (կարծես թե բազալտե) հիմքով: Տունը տանիք չունի, դուռը փակված է տուֆե պատով, բայց ամեն ինչ վերականգնելի է, և այս տան օրինակով միջավայրային կառուցապատման արվեստ կարող են սովորել ժամանակակից քաղաքաշինարարներն ու տուն կառուցողները, և ոչ միայն Երևանից:

Այս փոքրիկ հարմարավետ փողոցը Ֆիրդուսի հոգին է: Ֆիրդուսի երկար առևտրային փողոցի և շրջակա տների հետ դրանք կազմում են մի բարդ միկրոքաղաքային աշխարհ⁵: Անձնականի ու

In the corner of this tiny street, built exactly along the red line, stands a modest house with a facade made of dignified black tuff, a high quality house from an architectural perspective, featuring all the archetypes of the Armenian urban vernacular: a front wall of smoothly hewn tuff blocks, decorative framing of the openings, correctly profiled cornice. The master (in the case of vernacular architecture, it is better to call the main builder “master” in the medieval sense of the word, not considering him a professional architect) accurately fitted the house into the street configuration, gently articulated the main conceptual accents of the facade, the door and the windows, emphasized the transition from the house to the sky by a modest, but worthy bracketed cornice, and the ratio of the house to the earth by a more rough, but at the same time carefully designed socle (using basalt?). The roof is absent, the door is bricked-up, but all this is restorable. Modern urban builders and home-builders, and not only from Yerevan, could master their environmental skills on the example of this house.

This cozy residential street is the soul of Firdus. Together with the long Firdusi market-street, surrounded by households, they form a complex micro-urban world⁵, a sort of unintended harmony of intimacy and the public, quite and mobility, habitat and commerce, silence and

⁵ It is possible that the boundaries of this district also include well-preserved historical facades from Hanrapetutyan Street and Tigran Mets ave., where there are two-storey apartment buildings. Gallery yards behind numbers 13 and 15 are especially interesting. However, in this essay I want to discuss the neighborhood environment, which seems unremarkable – but only at first sight. In this regard, I will cite a hymn for such environment, written by Vasily Grossman in an era when it was still complete: “*Courtyard! Here is the soul, the inside of Yerevan... Flat roofs, stairs, corridors, balconies, terraces, plane trees, figs, curly grapes, tables, benches, passages, galleries – everything is organized, merged, enters one another, comes out of the other... Dozens, hundreds of ropes, like arteries and nerve fibers, connect balconies and galleries. <...> Courtyard! A living organism of the city with removed skin covers! Here you can see human life, tenderness of the heart, nervous outbreaks, blood connection, and the power of country fellowship. <...> Courtyard! It connects the present <...> with the time of caravanserais, camel trails ...*”, Grossman V.S. Dobro vam! M.: Sovetskiy pisatel, 1967. (Vpervyie opublikovano v: Nedelya, 22–28 sentyabrya 1963, # 39).

⁵ Հավանական է, որ թաղամասի սահմաններում են նաև Հանրապետության փողոցի մի ջախի լավ պահպանված հին շինություններ և Տիգրան Մեծի պողոտայի պատմական ճակատները (այստեղ հատկապես հետաքրքիր են երկհարկանի բազմաբնակարան տները, 13 և 15 համարի տներն ունեն բալկի պատշգամբափակներ): Բայց այս էսսեում ուզում եմ անդրադառնալ հենց ներթափանցալի միջավայրին, որը, կարծես, ոչնչով աչքի չի ընկնում, բայց միայն առերևույթ: Այս առիթով հիշատակեմ նման միջավայրի նվիրված Վասիլիյ Գրոսմանի հիմնը, որը գրվել է, երբ





հանրայինի ոչ միտումնավոր ներդաշնակության, հանգստի ու տարանցման, ապրելու և առևտուր անելու, լուծության և աղմուկի միկրոտիեզերք, որը նախկինում ամբողջական էր, այժմ՝ մասնատված, վաղը՝ ֆանտոմային (դարձյալ ամբողջական, բայց միայն հիշողությամբ մեջ):

Եվ ոչ մի ցանկություն չունեն հայացքդ հառելու քիչ այն կողմ՝ Վերնիսաժի մոտ թառած բարձրահարկերին: Եվ մոռանում ես, որ Հրապարակն այսքան մոտ է...

Ֆիրդուսը կարելի է անվանել իսկական հին Երևանի վերջին պատմական վերնակույր թաղամասը:

Ներքաղաքային վերնակույր թաղամասերի՝ որպես իրական միջավայրային երևույթի և տեսական կառուցվածքի հանդեպ գիտական հետաքրքրությունը մեծացավ 20-րդ դարի երկրորդ կեսին, իսկ ռուսական աշխարհագրական և քաղաքային հետազոտություններում՝ վերջին տասը-տասնհինգ տարում⁶:

Աշխարհագրագետ Սեմյոն Պավլյուկի օգնությամբ կարող եմ տրամադրել վերնակույր թաղամասի ձևակերպումը՝ դիմելով ժամանակակից ուրբանոլոգիայի մյուս կարևոր կարգին՝ տեղին.

«Տեղը տարածության մաս է՝ մարդու համար լեցուն տարածքային և սոցիալական իմաստով: Դա այն տարածքն է, որի հետ նա գործ ունի: Բավականաչափ մեծ և ներքին իմաստով հագեցած տարածքները կարելի է անվանել վերնակույր թաղամասեր,

միջավայրը դեռ ամբողջական էր: «Ներքին բա՛կ: Ահա Երևանի հոգին, եուֆունը... տափակ տանիքներ, աստիճաններ, սանդուղքներ, միջանցքներ, փոքր պատշգամբներ, սանդղավանդներ (տեռասներ), պատշգամբներ, չինարիներ, թուզ, խաղողի վազեր, սեղանիկներ, աթոռակներ, անցումներ, սրահներ. այս ամենը ներդաշնակ, միաձույլ, մեկը մյուսի մեջ, մեկը մյուսից ելևու... տասնյակ, հարյուրավոր պարաններ՝ նման Նյարդաթելերի և զարկերակների, կապում են պատշգամբներն ու սրահները: <...> Ներքին բա՛կ: Քաղաքի կենդանի օրգանիզմը, որն ազատված է մաշկային ծածկույթից. այստեղ երևում է մարդկային կյանքը, և՛ սրտի շրջությունը, և՛ Նյարդային բռնկումները, և՛ արյունակցությունն ու տեղաբնակության ուժը: <...> Ներքին բա՛կ: Նրանում ժամանակների կապն է ներկայի <...> և քարվաստարաների, ուղտերի արահետների միջև...»: Гроссман В.С. Добро вам! М.: Советский писатель, 1967. (առաջին անգամ հրապարակվել է՝ Неделя, 22–28 սեպտեմբերի, 1963, № 39):

⁶ Տե՛ս Լ. Սմիրնյագին, Ա. Վիսոկովսկու, Կ. Պուզանովի, Ս. Պավլյուկի աշխատանքները:



bustle... A microcosm, once holistic and now fragmented, and tomorrow phantom-like (again holistic, but only in memory?).

And one does not want to look away and see the high-rises near the Vernissage. And the proximity of the Republic Square dissolves ...

Firdus can be called the last historical vernacular neighborhood of true old Yerevan.

The scientific interest in vernacular areas as an environmental phenomenon and theoretical construction inside cities started in the second half of the 20th century. In Russian geography and urban studies it became a subject of interest in the last ten to fifteen years⁶.

With the help of geographer Simon Pavlyuk, I have the opportunity to define the notion of a vernacular district, referring to a place which is another important category of modern urbanology:

“The place is a part of the space filled with territorial and social meaning for a person. It

⁶ See writings by Leonid Smirnyagin, Alexander Visokovskiy, Kirill Puzanov, Semen Pavlyuk

որոնք գոյություն ունեն այդ տարածքները զբաղեցնող մարդկանց ընդհանրության հանրային գիտակցության մեջ»⁷:

Ուզգեն (Ղրգստան, 2004) և Եկատերինբուրգ (Ռուսաստան, 2007) քաղաքների Հոդօգտագործման և կառուցապատման կանոնակարգի գործնական մշակման ընթացքում ինքս ուսումնասիրել և կիրառել եմ այդ երևույթը իմ ուսուցիչ ուրբանիստ Ալեքսանդր Վիսոկովսկու ղեկավարությամբ: Շատ կարևոր էր գլխավոր իրավական փաստաթղթի տարածական մոդելի կառուցումը. այն պետք է կարգավորեր քաղաքային միջավայրի զարգացումն ու ինքնազարգացումը՝ հիմքում ունենալով քաղաքի իրական, բնականորեն առաջացած ֆիզիկական ու հոգեբանական կազմաբանությունը:

Քաղաքներում, որտեղ խախտված չեն միջավայրի բնական ինքնակազմակերպման գործընթացները, և որոնք զարգանում են բազմաթիվ (բնական և արհեստական, նպատակային և հանապարհասփոց, կամապաշտական կամ ժողովրդավարական, պահպանողական կամ նորարարական) հետերոգեն գործոնների համաժամանակյա ազդեցությամբ, պատմական վերնակույր թաղամասերի տարբերությունները համահարթեցման չեն ենթարկվում անգամ ամենաբուռն ժամանակակից զարգացումների ներքո: Նման օրինակ է արևմտյան քաղաքակրթության դինամիկ կիզակենտում գտնվող նյույորքյան Մանհեթենը: Որքան էլ Բրոդվեյը հզոր լինի որպես կենտրոն ու միջավայր ձևավորող առանցք, փողոցին չի հաջողվել ճնշել մոտակա խաչմերուկներում գտնվող ներքաղաքային վերնակույր թաղամասերի տարբերությունը. վերջին հետազոտություններից մեկն ապացուցում է դրանց պահպանված ինքնատիպությունը⁸:

Իսկ Սան Ֆրանցիսկոյի բազմաթիվ ուղեցույցների հիմքում ընկած է 38 ներքաղաքային վերնակույր թաղամասերի քարտեզը՝ թաղամասերի պահպանված անվանումներով, ավանդույթներով և հստակ տարբերություններով, ընդ որում այդ թաղամասերը ծածկում են քաղաքի ողջ տարածքը⁹:

is a territory that matters to him/her.. Places of considerable size, saturated with internal meaning, can be called Vernacular districts. They exist in the public consciousness of a community, inhabiting the territory.”⁷

I myself researched this phenomenon when working on the practical development of Land use and Development Regulations for the cities of Uzgen (Kyrgyzstan, 2004) and Yekaterinburg (Russia, 2007) under the guidance of my teacher, Russian urbanist Alexander Vysokovsky. It was extremely important to create a spatial model of this most important legal document on the basis of existing and naturally formed physical and mental morphology, to regulate the development and self-development of the urban environment.

In cities where environmental self-organization processes are not disturbed and develop under the simultaneous influence of various heterogeneous factors (natural and artificial, targeted and spontaneous, voluntaristic and democratic, conservative and innovative), the differences between historical vernacular neighborhoods cannot be leveled even with the most rapid modern development. An illustrative example of such a dynamic focus of Western civilization is the New York Manhattan. Broadway as an environment shaping axis is really strong here, but even it was unable to subdue the differences of vernacular neighborhoods that it crosses – recent studies prove their preserved originality⁸. In the case of San Francisco, city guidebooks often feature the map of 38 vernacular neighborhoods that have their own well-established names, traditions and discernible distinctions and cover the entire territory of the city⁹.

Unfortunately, Yerevan is not the case.

Today, in order to dive into a distinctive vernacular environment and enjoy it, you must either take a tour to Kond, a hilly area that is not

⁷ St' u Pavlyuk S.G. Ключевые вопросы изучения vernakulyarnykh rayonov // Вопросы социально-экономической географии зарубежных стран. Вып. 18, М.; Смоленск: Ойкумена, 2009:

⁸ St' u Pavlyuk S., Nikogosyan K. Brodvey v razreze // Gorodskie issledovaniya i praktiki. 2017, t. 2 # 3. S. 43–63:

⁹ St' u Puzanov K. Территориальные границы городских сообществ // Социология власти. 2013, №3, с. 27–38:

⁷ Pavlyuk S.G. Klyuchevyie voprosyi izucheniya vernakulyarnykh rayonov // Voprosyi sotsialno-ekonomicheskoy geografii zarubezhnykh stran. Vyp. 18. M.; Smolensk: Oykumena, 2009.

⁸ See Pavlyuk S., Nikogosyan K. Brodvey v razreze // Gorodskie issledovaniya i praktiki. 2017, t. 2 # 3. S. 43–63.

⁹ See Puzanov K. Territorialnyie granitsyi gorodskih soobshchestv // Sotsiologiya vlasti. 2013, #3, с. 27–38.



Երևանը, ցավոք, այդպիսին չէ:

Այստեղ, եթե ցանկանում եք հայտնվել ինքնատիպ վերնակույրար միջավայրում և հիանալ դրանով, պետք է բարձրանալ կենտրոնից դեպի Կոնդ կամ մի քիչ հեռանալ ու հասնել Հին Նորք, Քանաքեռ կամ Հին Ավան: Քաղաքի փոքր կենտրոնում գրեթե չեն պահպանվել պատմական վերնակույրար միջավայրի քիչ թե շատ ամբողջական և միավորված հատվածներ կամ թաղամասեր. վերջիններն իմ աչքի առաջ «մաքրվեցին» 2010-ականներին:

Պահպանվում են Ֆիրդուսը և քիչ այն կողմ՝ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու ձախ կողմում, Կրիվո կամ Կրիվոյ փողոցի թաղամասը:

Երևանում այդպիսի վայրերն ընդունված է անվանել հետնախորշ, ոչխանոց, «քաղաքի ամոթ»:¹⁰ Բնութագրական է, որ այդպես են համարում նաև մտավորական էլիտայի առանձին ներկայացուցիչներ: Ինձ թվում է, որ այդ «չափազանց կուլտուրական» պարոնայք, անգամ եթե ուղղակիորեն ներգրավված չեն հին թաղամասերի «դեվելոպերական» ոչնչացման գործում՝ հանուն նոր կոմերցիոն շինարարության, իրենց քաղաքը հաճախ տեսնում են թանկարժեք մեքենաների կամ ռեստորանների պատուհանից, այլ ոչ թե հողի վրա կանգնած, էլ չսասած, որ քանդելու խորհուրդները հաճախ տալիս են այլ երկրներից: Ֆիրդուս գնալը նրանց վայել չէ, իսկ Կոնդը հեռու է ու անտանելի:

Երևանի կենտրոնի բազմաթիվ թաղամասերի և անկլավների տարածքը Հայաստանի կառավարության 2007 թվականի որոշմամբ ճանաչվել է «հանրային գերակա շահի» գոտի. դրանցում սեփականությունը ենթակա է օտարման, իսկ կառույցները՝ ապամոնտաժման: Այդ որոշումը դնելովներև և ճարտարապետների ավերիչ նախաձեռնությունների առիթ տվեց: Դրանց թվում էր 2015 թվականին ամենաբարձր մակարդակով հաստատված նախագիծը, որով Ֆիրդուսի տեղում պետք է կառուցվեր և բարեբախտաբար չկառուցվեց խոշոր գործարարական կենտրոն¹⁰:

Բայց այլ հին թաղամասեր հաջողությամբ փոխարինվում են բազմահարկերով կամ կեղծ

far from the city center, or go much further – to Old Nork, Kanaker, Old Avan. In the small center of Yerevan, one can hardly find a more or less integral fragment of the historical vernacular environment. These neighborhoods are almost not preserved; the last ones were pulled down before my eyes in the 2010s.

Firdus is left and, a little further, behind the Cathedral of Gregory the Illuminator, the neighborhood called Krivo (Krivoi).

In Yerevan, such places are called slums or “the shame of the city.” Characteristically, various members of the intellectual elite support such behaviour. It seems to me that these “too cultural” gentlemen, if not directly involved in the ‘cleaning’ of old quarters for the new commercial development, see their city rather from the windows of expensive cars or restaurants than from the ground, or give their own advice on its demolition from other countries. A visit to Firdus will not bring much honor to them, and Kond seems distant and frightening.

In 2007, the government of the Republic of Armenia recognized territories of many vernacular districts and enclaves in the center of Yerevan as a zone of “Priority State Interest”. Property in this areas is subject to alienation, and buildings – to destruction. This decision paved the way for several destructive initiatives by developers and architects. Among them is the project, approved at the highest level in 2015, for the construction of a large business center at the Firdus site. Fortunately, it was not implemented¹⁰.

But other old quarters are successfully replaced by high-rise buildings or fake replica (like the so-called “Old Yerevan”) which seem to be “elite”, but are of the third grade and second freshness in architectural terms ...

However, supporters of this expensive in dollars but architecturally three-penny luxury quickly

¹⁰ 3–4 տարվա ընթացքում 5 հա տարածքի վրա նախատեսվում էր կառուցել կլոր հրապարակ 85 քմ տրամագծով, բազմահարկ հասարակական և սպասարկման օբյեկտներ շուրջ 200 հազար քմ ընդհանուր տարածքով, բազմահարկ ստորգետնյա կայանատեղի: Նախագծի ներդրումային ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 300 մլն դոլար (Տե՛ս Ֆիրդուսի շուկայի տեղում հրապարակ է կառուցվելու, 12.06.2015 // <https://www.a1plus.am/1389353.html>):

¹⁰ It was planned to build a square with a diameter of 85 m, and multi-storey public and household facilities with a total area of about 200 thousand square meters, as well as multi-level underground parking. The construction site included 5 hectares, and the total investment cost of the project for 3–4 years amounted to about 300 million dollars. (See Firdusi shukayi teghum hrarak e karucvelu, 12.06.2015 // <https://www.a1plus.am/1389353.html>).

կրկնօրինակումներով (օրինակ՝ այսպես կոչված «Հին Երևանի» նախագիծը), թվում է՝ «էլիտար», բայց ճարտարապետական առումով երրորդ կարգի և երկրորդական թարմության...

Ի դեպ, դոլարային հաշվարկով թանկ, բայց ճարտարապետական իմաստով գրոշներ արժեցող այս շքեղությունից երես են թեքում անգամ դրա կողմնակիցները (իմ դիտարկումների համաձայն՝ վաղուց արդեն մոռացության գիրկն է անցել Հյուսիսային պողոտայի հանդեպ որոշ երևանցիների խանդավառությունը): Միայն թե հիմա ուր է շրջվես, ամեն ինչ նույնն է:

Ինչ կլինի Ֆիրդուսի հետ կամ, Աստված մի արասցե, դրա տեղում:

«Ասել են, որ հունվարի տասնյոթին լքեմ պապական տունը, որտեղ ծնվեցի ու մեծացա: Այն կքանդեն ու իբր մեկ այլ թաղամասում բնակարան կտան: Արփիկին, Մարոյին, Աշոտենց, Վարդանին, բոլոր մեր հարևաններին խոստացան նույնը, բայց բնակարանի բանալիների փոխարեն նրանց ձեռքերում անօգնական պաստառներ հայտնվեցին՝ ծածանվող կառավարության շենքի առջև <...>: Արփիկենց տունը ցավից ոռնում է, քարերը լեղապատառ ցաքուցրիվ են լինում բակով մեկ: Մեր տան կողքի տունն էլ գնաց, էլ չկա, հաջորդիվ մեր տունն է կուլ գնալու մետաղե կտցարներին: <...> Ծուլը պատել է նաև մեր բլրակը, որտեղ երբեմնի դրախտն էր. նախկինում ձյունը հաղթ փաթիլներով էր ծածկում մեր և մեր հարևանների փայտաշեն պատշգամբներն ու անվրդով տանիքները...»¹¹:

Հավանաբար այստեղ էլ նման մի բան է տեղի ունեցել: Եվս մի փոքրիկ «դրախտ» կցնշվի քաղաքից, իսկ «երկրային դրախտի» իդեալականացված կերպարը, որը գտնում ենք Երևանի պատմական վերնակույր թաղամասերը կարոտող քաղաքացիների և հետաքրքրված հյուրերի (Վ. Գրոսման, Ա. Բիտով և այլք) նկարագրություններում, կմսա միայն վերջին բնակիչների հիշողության մեջ: Այո, չգիտես ինչու մեր քաղաքներում դրախտը շատ չի լինում...

Ասում են՝ ժամանակին Ֆիրդուսում համերաշխ ապրել են ծագումով հայ ու թուրք էրիվանցիներն ու երևանցիները: Այս գրքի մյուս տեքստերը,



turn away from it (according to my observations, the enthusiasm some Yerevanians had for the Northern Avenue has long since disappeared). The matter is that wherever you go, you see the same thing.

What will happen with Firdus or, God forbid, what will there be in its place?

“I was told to vacate my grandfather’s house on January 17. I was born and grew up there. The house will be demolished, and I supposedly will get a new apartment in another district. The same was promised to all our neighbours Arpik, Maro, Ashot and Vartan, but instead of the keys to the apartments, they were holding useless posters fluttering in front of the Government building... <...> The house of Arpik is in pain and the stones are scattered around the yard in horror. The neighboring house also vanished...”¹¹

¹¹ Ս. Յովակիմյան, Համերգ պարանի համար («Վերջին վերանորոգումը» պատմվածքից): Մեջբերումը՝ բնօրինակից, թարգմ.՝ Աննա Վարդանյան, Дружба народов. 2018, № 6, <http://magazines.russ.ru/druzhba/2018/6/koncert-dlya-vergovki.html>

¹¹ Sati Hovakimyan, Concert for a rope, the Last Renovation, Druzhba narodov. 2018, # 6 // <http://magazines.russ.ru/druzhba/2018/6/koncert-dlya-vergovki.html>. Translated from the original.

U2F-

9L826L

В КОММУНАЛЬНЫЙ ОТДЕЛ
СПАЦАРИНСКОГО РАЙСОВЕТА.

Участок ранее представленный гр-ке Такуи АСТВА-
ЦАТУРЯН из-за ее отказа предоставить архитектору
Гайку КИРАКОСЯНУ и Мисаку КИРАКОСЯНУ для производства
постройки жилого дома по ул.Фирдуси, 1-Круговая,
Ленина и Нор-Азатутян, напротив детской, размером
участка 8,50 x 20.

Постройку производить по утвержденному проекту.

ЗАМ. ПРЕД. ГОРСОВЕТА - *Е. Хачатрян* (Е. ХАЧАТРЯН)

ГЛАВ. ГОР. АРХИТЕКТОР - *М. Григорян* (М. ГРИГОРЯН)

հավանաբար, կրացեն տարածքի իրական կամ թվացյալ բազմամշակութայնության պատմությունը: Ինձ համար հատկապես կարևոր է դրա վերնակույրությունը՝ տեղիներությունը, ինքնաշնությունը, ջերմությունը, մարդկայնությունը, միջավայրային արժանապատվությունը: Իհարկե, արժե նշել, որ թվարկված որակներն անհրաժեշտ, բայց բավարար պայմաններ չեն ազգամիջյան բարիդրացիության համար:

Հիշենք Անդրեյ Բիտովի խոսքերը Երևանի հին ու սովորական բակի մասին (մի գիտե, գուցե Ֆիրդուսի մասին, քանի որ նա, ամենայն հավանականությամբ, զբոսնում էր հենց կենտրոնում):

«Այստեղ ամեն ինչ ինձ հետ խոսում էր կյանքի լեզվով՝ անցած և ապագա, հավերժ կյանքի լեզվով... Ես սիրտ արի, մտա բակը, և բոլոր դռներից դուրս եկան ինձ սիրող մարդիկ՝ ապուպապեր ու տատեր, թոռներ և ծոռներ... Ապագա և անցյալ մարդիկ գրկեցին ինձ, լուելայն շարք կանգնեցին, գորովանքով աչք ածեցին ինձ, խղճահարությամբ գլխով արեցին, մինչ ես քայլում էի նրանց արանքով և լալիս՝ վշտից և երջանկությունից... <...> Կցաշենքերի, փակուղիների, ծառերի, լույսի ու ստվերի այս քառոր ինչպե՞ս, ինչ ձևով է հասել ներդաշնակության և գեղարվեստական միասնության. ո՞չ հետևել է հնարավոր, ո՞չ ենթադրել... երևի, կյանքը, ինքն իրեն կազմակերպվելով ըստ իր ոչ մտացածին օրենքների, չի կարող ստեղծել անկատար ձևեր... <...> Ահա քեզ՝ «այստեղ մարդիկ են ապրել»: <...> Ապրել են, սիրել, ծնել, հիվանդացել, մեռել, ծնվել, մեծացել, ծերացել... Ինչ-որ մեկը ծեփել է պատը, մեկը դուրս է հանել տան ավերորդ եռառտ սեղանը, մեկը ծաղիկներ է տնկել, մեկը քանդել փայտանոցը և ընդարձակել հարթակը, մեկն էլ դրա կողքին հավաքույն է շինել... Բակը աճել է ծառի նման. մեռել են հին ճյուղերը, աճել են նոր ոստեր, իսկ ծառի ճյուղերը միշտ կատարյալ են դասավորված... <...> Խիտ սաղարթի մեջ ճովողում են երեխաները, բնին հենված զրուցում են սիրահարները, և արմատների վրա թեքված բզգում է թխադեմ պառավը՝ օջախ է վառում, փայտ է դնում կրակին... Սերունդների հեռանկար: Յուրաքանչյուր բակ տոհմաբանական ծառ է...»¹²:

Ահա իմ խոսքերը Կոնդի մասին, ապագա գրքից. «Ես դեռ հնարավորություն ունեմ մտնելու այնտեղ ինչպես իմ մեջ: Ինչո՞ւ է ինձ այդքան դուր

Most likely, the same will happen here. Another small “paradise” – the image of historical urban Vernacular district of Yerevan, described by nostalgic citizens and interested observers from outside (V. Grossman, A. Bitov), which may well be equalized with the image of idealized “earthly paradise” – will be wiped off the city, remaining only in the memory of its last inhabitants. Well, for some reason our cities cannot stand lot of paradize...

It is said that once Firdus peacefully united Yerevanians of Armenian and Turkish origin. Perhaps other headings in this book will reveal the story of true or fictional multiculturalism of this place. I am more interested in its *Vernacularity* – relevance, handmadeness, warmth, humanity and environmental dignity. However, it should be said that this environmental qualities are important, but do not provide sufficient conditions for international good neighborliness.

Let us recall words of Andrei Bitov, who had once peeped into an ordinary courtyard in one of the old streets of Yerevan (Could it be Firdus? Most likely, he walked in the city center).

“Here everything speaks the language of life – present and future – eternal life... I made up my mind, I entered the courtyard and people who loved me, old grandfathers and grandmothers, their grandsons, ran out of all the doors... People of the future and the past hugged me, silently lining up and lamenting affectionately, nodding and pitying me as I passed by and wept with grief and happiness... <...> How, in which way this chaos of extensions, dead ends, trees, light and shadows did form harmony and aesthetic unity? It seems impossible to trace or imagine. Apparently, life that is self-organized in accordance with its unintentional law, is also capable of creating perfect forms ... <...> Here it is, “people lived here”! <...> They lived, loved, gave birth, were sick and passed away, were born and grew older ... Someone plastered the wall, someone took out the three-legged unwanted table from the house, someone planted flowers, someone destroyed the barn and cleared the area, and someone built a chicken coop nearby. The courtyard grew as a tree, old branches died off and new ones grew,

¹² Անդրեյ Բիտով, Հայաստանի դասերը: Ուղեգրություն, թարգմ.: Ռաֆայել Ավագյան, «Հայագիտակ», 2003:

գալիս թափառել, բուժվել այնտեղ: Այդ միջավայրը քաղաքային տարածության յուրացման մարդկային (ոչ թե պետական) գործունեության արդյունք է: Կոնդի փողոցները, աստիճանները, փակուղիներն ասես ուղեղի ծալքերը լինեն ու հոգու խորշերը («Մեր դատողությունները՝ հյուղակների շարք», – ասում էր Զին Զաբոլոցկու «Հողագործության հաղթանակ»–ում): Դրանք համապատասխանում են ինձ, համապատասխանում են իմ շարժումներին, հայացքներին, զգացողություններին (բոլոր հինգին): Իսկ իմ մտքերը համապատասխանում են դրանց: «Ես մտքով ճաշակում եմ սամագոնը» (Իննա Լիսնյանսկայա). այդ միջավայրից ամեն անգամ թորվում է թունդ, տոփա «կոնդովկան»: Այնտեղ հնարավոր է մարմնի և հոգու անմիջական երկխոսությունը շրջապատի հետ: Այնտեղ խոսում ես ինքդ քեզ հետ...»:

Այս խոսքերը վերաբերում են նաև Ֆիրդուսին: Այցելե՛ք, քանի դեռ այն կա:

and no tree can have an imperfect arrangement of branches ... <> Children chirp in the crown, the trunk is supported by lovers, and the black grandma bends and tinkers around the roots, makes fire in the stove, picks up the sliver and drops it. The perspective of generations, each yard as a genealogical tree ...¹²

And here are my thoughts on Kond from my future book:

I still have the opportunity to enter it as into myself. Why do I feel so good when walking and healing me there? Its environment is a result of human (and not state!) practice of appropriating urban space. I see its streets, stairs, dead ends as the convolutions of my brain and lanes of my soul (“Our judgements are lines of shacks” said Horse in The Triumph of Agriculture by Nikolay Zabolotsky). They correspond to me, they are equal to my movements, views, feelings (all five). And my thoughts correspond to them. “I bite Samogon in my mind” (Inna Lisnyanskaya) – every time a strong and bitter Kondovka comes out of its environment. There you can begin a direct dialogue of body and soul with the environment. There you speak to yourself...

These words can also be applied to Firdus. Come here, still it exists.

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
PHOTO AND ILLUSTRATION CREDITS

Տիգրան Ամիրյան / Tigran Amiryan 16-19, 39, 42-43, 45, 46, 49, 51-54, 61, 64, 73, 79, 82-84, 88, 91, 95, 96, 99-101, 103, 107, 110-112, 114, 143, 183-186, 190, 193, 195, 196, 199, 202, 208

Կլիմ Գրեչկա / Klim Grechka 2-3, 12-13, 14, 63, 71, 76-77, 81, 86-87, 116, 175, 176, 178-179, 187, 206

Նազիկ Արմենակյան / Nazik Armenakyan 8-9, 188-189

Անդրեյ Իվանով / Andrey Ivanov 117, 197, 201

Հարություն Թումադյան / Harutyun Tumaghyan 28-29, 68-69, 104, Շապիկ, front cover

Արմինե Շահբազյան / Armine Shahbazyan 92

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ
ARCHIVAL MATERIALS

ՀՀ ազգային արխիվ / The National Archives of Armenia 65, 66, 181

Կիրակոսյանների ընտանեկան արխիվ / Kirakosyan family's photo archive 150-151, 203

Փխրիկյանների ընտանեկան արխիվ / Pkhrikyan family's photo archive 25, 27, 37, 106, 159-160, 164, 168-169

Շահումյանների ընտանեկան արխիվ / Shahumyan family's photo archive 33, 134-135

Հովնանյանների ընտանեկան արխիվ / Hovnanyan family's photo archive 153-154, 170, 172

Ռոբերտ Խաչատրյանի և Սիրան Նաջարյանի ընտանեկան արխիվ / Robert Khachatryan & Siran Najaryan family's photo archive 155-157

Էմիլյա Սաֆարյանի ընտանեկան արխիվ / Emilia Safaryan's photo archive 139-141, 167

Միքայել Հարությունյանի ընտանեկան արխիվ / Michael Harutunyan family's photo archive 162-163

Գառնիկ Հարությունյանի և Միլետա Ադիյանի ընտանեկան արխիվ / Garnik Harutyunyan & Mileta Adiyany family's photo archive 106, 145-146, 171

Սեդա Գրիգորյանի անձնական արխիվ / Seda Grigoryan photo archive 147-148

Նինա Սարգսյանի ընտանեկան արխիվ / Nina Sargsyan's photo archive 136-137

Նաիրա Մուրադյանի անձնական արխիվ / Naira Muradyan's personal archive 120-123, 124-131



FIRDUS: THE MEMORY OF A PLACE

Ֆիրդուս. տեղի հիշողությունը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Տիգրան Ամիրյան

EDITOR-IN-CHIEF: TIGRAN AMIRYAN

ԽՄԲԱԳՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Սոնա Քալանթարյան

CONTRIBUTING EDITOR: SONA KALANTARYAN

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ Կարին Գրիգորյան

TRANSLATOR: KARIN GRIGORYAN

ՇԱՊԻԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ Հարություն Թումաղյան

COVER DESIGN: HARUTYUN TUMAGHYAN

ԷԶԱԴՐՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ Կլիմ Գրեչկա

LAYOUT DESIGN: KLIM GRECHKA

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՂՆԵՐ՝ Հարություն Թումաղյան, Արմինե Շահբազյան

ILLUSTRATORS: HARUTYUN TUMAGHYAN, ARMINE SHAHBAZIAN

ՄԲԱԳՐԻՉՆԵՐ՝ Ազնիվ Նասլյան, Մարինե Մուրադյան

CORRECTORS: AZNIV NASLYAN, MARINE MURADYAN



Ֆիրդուս. տեղի հիշողությունը.

խմբային մենագրություն: Խմբ.՝ Ս. Ամիրյան,

Ս. Քալանթարյան. CSN lab – Եր.: 2019. – 210 էջ:

FIRDUS: THE MEMORY OF A PLACE.

Collective monograph ed. by T. Amiryan, S. Kalantaryan.

CSN lab, Yerevan, 2019, – 210 p.

ISBN 978-9939-1-0934-3

